«Կապեր Եկեղեցու և Կառավարության հետ»  
ԾՐԱԳԻՐ



21. 2/5


1	Ծրագրի նպատակը	Ծրագրի նպատակները հետևյալն են՝ Ա - «Երիտասարդների Աստվածաշնչի Ուսուցում» ենթաձևի շրջանակներում Հայ Առաքելական Եկեղեցու հետ համատեղ պատրաստել ձեռնարկներ, որոնք կծառայեն որպես Աստվածաշունչը ուսումնասիրելու լրացուցիչ աղբյուրներ կիրակնօրյա դպրոցների երեխաների և ուսուցիչների համար: Բ - «Եկեղեցին Համայնքների Համար» ենթաձևի շրջանակներում համագործակցել համայնքային եկեղեցիների հետ (Հայ Առաքելական, Հայ Կաթոլիկ եւ Հայ Ավետարանական Եկեղեցիներ) աջակցելով նրանց համայնքների սոցիալական եւ հոգեւոր կարիքները հոգալու:
2	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Համաձայն ՀՀ կառավարության 2003 թ. հունվարի 16ի # 66-Ն որոշման ծրագիրը ակնկալում է օգտվել հարկային արտոնություններից:
3	Բարեգործը	Վորլդ Վիժն ԱՄՆ, Վորլդ Վիժնի Միջին Արեւելք եւ Արեւմտյան Եվրոպայի Առաքնաշրջանային գրասենյակ:
4	Ծրագիրը կատարողը	«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» Միջազգային Բարեգործական Կազմակերպության Հայաստանյան Մասնաճյուղ (հասցե՝ ք. Երևան, Բոմանոս Մելիքյան, 1, ԳՎՀԳ 02528755):
5	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Շիրակի մարզ, Սյունիքի մարզ, Տավուշի մարզ, Գեղարքունիքի մարզ, Լոռվա մարզ և Արագածոտնի մարզ:
6	Ծրագրի բյուջեն	Ծրագրի ընդհանուր բյուջեն կազմում է 191400 ԱՄՆ դոլար
7	Բարեգործություն ստացողը	Ծրագրի շահառուներն են Կապանի, Սիսիանի, Վարդենիսի, Գավառի, Թալինի, Իջևանի, Ստեփանավանի, Գյումրիի եւ Ալավերդու Տարածքային Ջարգացման Ծրագրերում ընդգրկված 24000 երեխաներն ու կիրակնօրյա դպրոցների 200 ուսուցիչները: Ա - «Երիտասարդների Աստվածաշնչի Ուսուցում» ենթաձևի շրջանակներում շահառուներն են 44 Հայաստանի Տարածքային Ջարգացման Ծրագրերի կիրակնօրյա դպրոցների 24000 երեխաներն ու կիրակնօրյա դպրոցների 200 ուսուցիչները: Բ - «Եկեղեցին Համայնքների Համար» ենթաձևի շրջանակներում շահառուներն են բոլոր վերոհիշյալ մարզերի ծխական եկեղեցիները և համայնքները, որոնք ընդգրկված են Վորլդ Վիժն Հայաստանի Տարածքային Ջարգացման Ծրագրերում:
8	Ծրագրի իրականացման տևողությունը	10/02/2011 - 31/01/2012
9	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Ա. «Երիտասարդների Աստվածաշնչի Ուսուցում» ենթաձևի շրջանակներում - Ընդամենը տպագրվելու է 20000 ուսումնական ձեռնարկ 16 տարեկան երեխաների համար և ընդամենը 2000 ուսուցիչ ուղեցույց՝ 16 տարեկան երեխաների ուսումնական ձեռնարկների համար: - Մանկական քրիստոնեական գրականության գնում 44 Հայաստանի Տարածքային Ջարգացման Ծրագրերի երեխաների համար: - Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի Քրիստոնեական Դաստիարակության Կենտրոնի հետ համատեղ իրականացվելու է կիրակնօրյա դպրոցի ուսուցիչների մեկշաբաթյա վերապատրաստում:  Ենթաձևի համար նախատեսվում է ծախսել 53400 ԱՄՆ դոլարի համարժեք ՀՀ դրամ:

10	2 հոգի բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Բ. «Եկեղեցին Համայնքների Համար» ենթաձևի շրջանակներում նաև ընդլայնվելու են համայնքների զարգացման ծրագրերը, որոնց համար նախատեսվում է 138000 ԱՄՆ դոլարի համարժեք ՀՀ դրամ:  Վորլդ Վիժն կազմակերպության կողմից իրականացվող ցանկացած գործարք կամ ծառայություն, որի գինը 1000 ԱՄՆ դոլարից բարձր է, որոշվում է մրցույթային հիմունքներով: Այդ իսկ պատճառով որոշ գործարքներ հնարավոր չէ նախապես ներկայացնել, այլ կներկայացվեն որպես հարակից գործարք: Ա. «Երիտասարդների Աստվածաշնչի Ուսուցում» ենթաձևի շրջանակներում նախատեսվում է տպագրել հետևյալ քանակությամբ աշակերտական դասագրքեր և ուսուցիչ ձեռնարկներ: 16 տարեկան երեխաների դասագիրք, մաս I, 10000 օրինակ, մեկ գրքի արժեքը մոտավորապես 1.2 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ, ընդհանուր արժեքը 12000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ 16 տարեկան երեխաների դասագիրք, մաս II՝ 10000 օրինակ, մեկ գրքի արժեքը մոտավորապես 1.2 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ, ընդհանուր արժեքը 12000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ 16 տարեկան երեխաների դասագրքի մաս I-ի համար ուսուցիչ ձեռնարկ 1000 օրինակ, մեկ գրքի արժեքը մոտավորապես 1.2 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ, ընդհանուր արժեքը 1200 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ 16 տարեկան երեխաների դասագրքի մաս II-ի համար ուսուցիչ ձեռնարկ 1000 օրինակ, մեկ գրքի արժեքը մոտավորապես 1.2 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ, ընդհանուր արժեքը 1200 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ  Տպագրական աշխատանքների ընդհանուր արժեքը կազմում է 26400 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ:  - Մանկական քրիստոնեական գրականության գնում 44 Հայաստանի Տարածքային Ջարգացման Ծրագրերի երեխաների համար որի համար նախատեսվում է ծախսել 5000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ:  - Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի Քրիստոնեական Դաստիարակության Կենտրոնի հետ համատեղ իրականացվելու է կիրակնօրյա դպրոցների մոտ 200 ուսուցիչների մեկշաբաթյա վերապատրաստում Ծրագրի իրականացման բոլոր տարածքների կիրակնօրյա դպրոցների ուսուցիչների մասնակցությամբ, որի համար նախատեսվում է ծախսել 22000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ:  Բ. «Եկեղեցին Համայնքների Համար» ենթաձևի շրջանակներում նախատեսվում է ընդլայնել համայնքներում գործող ընթացիկ ծրագրերը, որոնց ընդհանուր արժեքը կկազմի 138000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ, որի մանրամասները ներկայացնում ենք ստորև:  12000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ՝ Եկեղեցիների համաշխարհային խորհրդի հայաստանյան միջեկեղեցական բարեգործական Վորլդ Սեղան հիմնադրամի հետ համատեղ 44 Հայաստանի Տարածքային Ջարգացման Ծրագրերից առնվազն 25 հոգևորականների սոցիալական ծառայության պիլոտային ծրագրեր իրականացնելու վերապատրաստման համար: 57000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ՝ 44 Հայաստանի Տարածքային Ջարգացման Ծրագրերում ընդգրկված և վերոհիշյալ վերապատրաստմանը մասնակցած առնվազն 25 հոգևորականների կողմից ներկայացված պիլոտային ծրագրերի իրականացման համար: 42000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ՝ 44 Հայաստանի Տարածքային Ջարգացման Ծրագրերից 450 երեխաների համար ճամբարների կազմակերպման համար: 27000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ՝ 44 Հայաստանի Տարածքային Ջարգացման Ծրագրերում կիրակնօրյա դպրոցների և ակումբների տարածքների վերանորոգման, ինչպես նաև տեխնիկական և կենցաղային պիտույքներով համայնքներում համար: Վերոհիշյալ գումարները միայն անմիջական ծրագրային ծախսերի գումարներ են, քանի որ Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ Հայաստանյան մասնաճյուղը իր կազմակերպչական գործունեության համար առանձին գումարներ ստանում է:
11	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	

12	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման և այլ մարմինների հետ	Ծրագիրը համագործակցում է Հայ Առաքելական, Հայ Կաթոլիկ և Հայ Ավետարանական եկեղեցիների, ինչպես նաև Շիրակի, Լոռվա, Գեղարքունիքի, Սյունիքի, Տավուշի եւ Արագածոտնի մարզերի տեղական ինքնակառավարման մարմինների հետ Տարածքային Զարգացման Ծրագրերի գրասենյակների միջոցով:
13	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հիմնական վերահսկողությունն իրականացվում է Վորլդ Վիժնի Երևանյան գրասենյակի, ինչպես նաև միջազգային աուդիտի եւ հարկային մարմինների կողմից: Տարեկան հաշվետվություններ է ներկայացվում ՀՀ Կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով:

ՎՎ Հայաստանի եկեղեցու եւ Կառավարության Կապերի Բաժնի ղեկավար Կարինե Հարությունյան

*Handwritten signature and date:*  
 20.2/5







**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**18 փետրվարի 2011 թվականի N Մ-058-Ա  
քաղ. երևան**

**«ՓՅՈՒՆԻԿ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՍՑԵՈՎ  
ՈՒՂԱՐԿՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի հունվարի 20-ի N 3.8-2/334-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի հունվարի 21-ի N ԱԱ/3-6/231-11 եզրակացությունները, որոշում է.*


1. Բարեգործական որակել անհատ բարերար Կաբրիել Ուհանեսի Ղենքերջիի կողմից ԱՄՆ-ի Միացյալ հայկական հիմնադրամի միջոցով որպես օժանդակություն «Փյունիկ» բարեգործական հիմնադրամի հասցեով ուղարկված 400 համակարգչի (18 տեղ, 8044 կգ ընդհանուր քաշով, 71014.30 ԱՄՆ-ի դոլար ընդհանուր արժեքով՝ ներառյալ 7825 ԱՄՆ-ի դոլար փոխադրման ծախսերը, «Արարատյան» ՏՄ) ներմուծման և անհատույց բաշխման ծրագիրը:

Սահմանել, որ նշված համակարգիչները անհատույց կբաշխվեն Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական գերատեսչություններին, համայնքներին և ուսումնական հաստատություններին:

2. «Փյունիկ» բարեգործական հիմնադրամին՝ նշված բեռի բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**18 փետրվարի 2011 թվականի N Մ-059-Ա  
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-  
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ  
ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N Մ-704-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ  
ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ 2007 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 2-Ի N Մ-153-Ա ՈՐՈՇՄԱՄԲ  
ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ԾՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ  
ՄԱՍԻՆ**

**(«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միություն)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-  
ման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարու-  
թյան 2011 թվականի հունվարի 26-ի N 3/3.8-2/542-11 և Հայաստանի Հանրապետության  
կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի հունվարի 21-ի  
N ԱԱ/3-6/264-11 եզրակացությունները, որոշում է:*

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի  
համակարգման հանձնաժողովի 2010 թվականի հոկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրա-  
պետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի  
2007 թվականի մարտի 10-ի N Մ-153-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու և նույն  
որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռների ներմուծման մասին» N Մ-704-Ա  
որոշման 1-ին կետում «3923.2 մլն դրամ» բառերը փոխարինել «4999.2 մլն դրամ» բառերով:

2. Սահմանել, որ «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց  
միության կողմից ձեռք բերված՝ ստորև նշված բեռները ներմուծվում են Հայաստանի  
Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնա-  
ժողովի 2007 թվականի մարտի 2-ի «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական  
անձանց միության կողմից իրականացվող «Ֆուտբոլի մանկապատանեկան մարզադպրոցի  
կառուցում և կահավորում» ծրագրի մասին» N Մ-153-Ա որոշմամբ (2009 թվականի հոկտեմ-

բերի 9-ի N Մ-704-Ա և 2010 թվականի հոկտեմբերի 29-ի N Մ-704-Ա որոշումների  
խմբագրությամբ) հաստատված ծրագրի շրջանակներում՝


1) հանդերձարանի մետաղական պահարաններ (87 տեղ, 4986 կգ ընդհանուր քաշով,  
15559 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 2781.12  
եվրո, «Արարատյան» ՏՄ):

2) հանդերձարանի մետաղական պահարաններ (6 տեղ, 318 կգ ընդհանուր քաշով,  
912 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 197.55  
եվրո, «Արարատյան» ՏՄ):

3) հանդերձարանի մետաղական պահարաններ և աթոռներ (237 տեղ, 4535 կգ  
ընդհանուր քաշով, 19420 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը  
կազմել են 2811.34 եվրո, «Արարատյան» ՏՄ):

4) խոտի սերմ (120 տեղ, 5275.26 կգ ընդհանուր քաշով, 8415 ԱՄՆ-ի դոլարին  
համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 4000 ԱՄՆ-ի դոլար,  
«Արարատյան» ՏՄ):

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախա-  
րարություն, Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի  
նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետա-  
կան եկամուտների կոմիտե:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 փետրվարի 2011 թվականի N Մ-060-Ա  
քաղ. երևան


«ՈՒՏՈՊԻԱՆԱ.ԱՄ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ  
ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի փետրվարի 3-ի N 3/3.8-2/859-11, Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարության 2011 թվականի փետրվարի 9-ի N 01/13.2/409-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի փետրվարի 7-ի N ԱԱ/3-6/576-11 եզրակացությունները, **ո ր ո շ ու մ է.**

1. Բարեգործական որակել «Վալոնիա-Բրյուսել Ինտերնացիոնալ» հասարակական կազմակերպության կողմից «Ուտոպիանա.ամ» մշակութային-ստեղծագործական հասարակական կազմակերպության հասցեով ստացված գրքերի, գիրք-նկարների և DVD սկավառակների (2 տեղ, 46 կգ ընդհանուր քաշով, 150 եվրո ընդհանուր արժեքով, փոխադրման ծախսերը կազմում են 552 եվրո, ՄՓ և ՍԱՓԱՄ մաքսատուն) ներմուծման ու օգտագործման ծրագիրը: Ստացված գրքերը, գիրք-նկարները և DVD սկավառակները կհանձնվեն «Ուտոպիանա.ամ» կազմակերպության գրադարան և անվճար հիմունքներով հասանելի կլինեն հանրությանը:

2. «Ուտոպիանա.ամ» հասարակական կազմակերպությանը՝ բեռի ձևակերպումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն բաշխման վերաբերյալ:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**18 փետրվարի 2011 թվականի N Մ-061-Ա  
քաղ. երևան**


**«ՀՈՒՍՈ ԱՌԱԳԱՍՏ» ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱՆԱՊԱՀՈՎ ԽԱՎԵՐԻ  
ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀՅՈՎ  
ՍՏԱԶՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի հունվարի 25-ի N3/3.8-2/456-11, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2011 թվականի հունվարի 21-ի N ՖԲ/Մարտ/Խ-1/226-11 և Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի հունվարի 21-ի NԱԱ/3-6/268-10, եզրակացությունները, **ո ր ո շ ու մ է.**

1. Բարեգործական որակելի Գերմանիայի Դաշնության բաղադրացի Արտաշես Ստեփանյանի կողմից «Հուսո առագաստ» բնակչության անապահով խավերի աջակցության հասարակական կազմակերպության հասցեյով ստացված բեռի (օգտագործված հագուստ, 38 տեղ, 840 կգ ընդհանուր քաշով, 375 եվրոյի համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 200 եվրո, «Արարատյան» ՏՄՆ ներմուծման ծրագիրը (բեռի բաշխման ցանկը կցվում է):

2. «Հուսո առագաստ» բնակչության անապահով խավերի աջակցության հասարակական կազմակերպությանը՝ բեռի բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն բաշխման վերաբերյալ:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտե:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**Ա Ր Չ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն**

Համաձայն ՀՀ ՍՕ N 132 հոդվածի 1-ին կետի և նամակներ մուտք ՆՀՎ N 36737 կատարվեց «Հուսո առագաստ» բնակ. անապ. խավ. աջ. և/կ անունով N 2010/33/39529 արտ. 25.11.2010թ. փոխադրման ամփոփագրով ստացված բեռի նախնական գնումն և հաշվարկ, որի արդյունքում պարզվեց հետևյալը.

2/28.18

Ապրանքի անվանումը	Բրուտ քաշը կգ	Նետո քաշը կգ	Լրացուցիչ միավոր	Տեղերի քանակ	Ծագման երկիրը
1 օգտագործված խառը հագուստ	816.7	777.6	777.6կգ	37	Գերմանիա
2 Բրդյա գուլպա	3.2	3	47 գուլպ	1	Գերմանիա
3 Բրդյա գլխարկ	1	1	17 հատ	-	Գերմանիա
4 Բրդյա ձեռնոց	0.4	0.4	5 հատ	-	Գերմանիա
5 Բրդյա շարֆ	0.3	0.3	3 հատ	-	Գերմանիա
6 Վերնաշապիկ	3.45	2.8	9 հատ	-	Գերմանիա
7 Տղամարդու բլուզ	0.55	0.55	3 հատ	-	Գերմանիա
8 Կանացի բլուզ	0.15	0.15	1 հատ	-	Գերմանիա
9 Տաբատ	5.4	5.4	9 հատ	-	Գերմանիա
10 Կիսաշրջագգեստ	0.3	0.3	1 հատ	-	Գերմանիա
11 Տղամարդու բաճկոն	3.05	3	4 հատ	-	Գերմանիա
12 Կանացի բաճկոն	1.4	1.4	2 հատ	-	Գերմանիա
13 Կոստյում (պիջակ և կիսաշրջագգեստ)	4.1	4.1	6 հատ	-	Գերմանիա
	840	800		38	

«Հուսո առագաստ» բնակ. անապ. խավ. աջ. և/կ Լիազոր ներկայացուցիչ 27.11.2010թ.



Ս. Զիլինգարյան

«Հուստ Արագաստ հ/կ» շահարուների ցուցակ  
Վարդաշեն 6-րդ փողոց 66<sup>ա</sup> շենք

101բն.

- 1 Չիլչիլյան Հակոբ
- 2 Չիլչիլյան Հրանտ
- 3 Հակոբյան Ալլա

103բն.

- 1 Ավետիսյան Արմեն
- 2 Ավետիսյան Լիանա
- 3 Ավետիսյան Կառլեն
- 4 Ավետիսյան Անահիտ

105բն.

- 1 Բալդրյան Արթուր
- 2 Բերքանյան Արմենուհի
- 3 Բալդրյան Արսեն
- 4 Բալդերյան Անի

111բն.

- 1 Պետրոսյան Կարեն
- 2 Պողոսյան Լուսինե
- 3 Պետրոսյան Վալդիա
- 4 Պետրոսյան Սուսաննա

204բն.

- 1 Կզլզգյան Մարիամ
- 2 Մինասյան Մինաս
- 3 Մինասյան Սերոբ

205բն.


- 1 Հախնազարյան Արևիկ
- 2 Ալավերդյան Հարություն
- 3 Ալավերդյան Արթուր
- 4 Հակոբյան Գայանե

202բն.

- 1 Հայրապետյան Պարզիկ

229բն.

- 1 Ջաքարյան Էվալդ



231բն.

- 1 Ստեփանյան Սուսաննա
- 2 Հարությունովա Էվելինա
- 3 Հարությունով Դավիթ
- 4 Հարությունյան Ամալյա
- 5 Ստեփանյան Աննա

220բն.

- 1 Հովհաննիսյան Մարիամ
- 2 Հովհաննիսյան Հասմիկ
- 3 Հավհաննիսյան Ռոզա

217բն.

- 1 Քլեյան Անդրանիկ
- 2 Քլեյան Գայանե
- 3 Քենեջիկյան Հասմիկ

207բն.

- 1 Սարգսյան Ալվարդ
- 2 Սառյան Քրիստինե
- 3 Ավետիսյան Սամվել
- 4 Ավետիսյան Ալինա
- 5 Ավետիսյան Մելինե
- 6 Ավետիսյան Հարություն

205բն.

- 1 Հակոբյան Նոյեմզար
- 2 Կերդիկաշվիլի Մալխաս
- 3 Կերդիկաշվիլի Պավլիկ
- 4 Կերդիկաշվիլի Ջաքար

214բն.

- 1 Բերնեցյան Հասմիկ
- 2 Բերնեցյան Արթուր
- 3 Բերնեցյան Փառանձեն
- 4 Բերնեցյան Մարինե

211բն.

- 1 Ազիսխանյան Անահիտ
- 2 Սարգսյան Նարեկ
- 3 Սարգսյան Գայանե

203բն.

- 1 Հովհաննեսյան Հասմիկ
- 2 Հովհաննեսյան Արմինե

300 բն.

- 1 Գալստյան Սիրուշ
- 2 Գալստյան Սեդա
- 3 Խալաթյան Սոնիկ

303բն.

- 1 Կարապետյան Հովհաննես
- 2 Կարապետյան Հակոբ

305բն.

- 1 Աղանյան Ճովիկ
- 2 Հակոբջանյան Ռոզա
- 3 Աղանյան Ջոյա
- 4 Աղանյան Արման
- 5 Աղանյան Էդիկ
- 6 Մնացականյան Ալվարդ
- 7 Մնացականյան Ռոբերդ
- 8 Մնացականյան Սահակ
- 9 Մնացականյան Լուսինե

306բն.


- 1 Սամսոնյան Վաչիկ
- 2 Սամսոնյան Քրիստինե
- 3 Սամսոնյան Կարապետ
- 4 Սամսոնյան Խաչիկ
- 5 Սամսոնյան Հովհաննես
- 6 Գալջյան Մայրամ
- 7 Գալջյան Անուշ
- 8 Սամսոնյան Գևորգ
- 9 Ավագյան Արաքսյա
- 10 Ավագյան Անահիտ

307բն.

- 1 Մուրադյան Մարգո
- 2 Ավետիսյան Կարեն

302բն.

- 1 Մալխասյան Զնարիկ
- 2 Մալխասյան Դավիդ



«Հուսո Արագաստ հ/կ» շահարուներին ցուցակ  
Վարդաշեն 6-րդ փողոց 68<sup>ա</sup> շենք

101բն.

- 1 Խասրատյան Շողիկ
- 2 Ասիլբեկյան Նարեկ

102 բն

- 1 Խաչատրյան Կարինե
- 2 Խաչատրյան Սիրանուշ

103 բն

- 1 Թալանջյան Ռիմա
- 2 Թալանջյան Մարատ
- 3 Թալանջյան Արմեն
- 4 Սարգսյան Մարինա
- 5 Թալանջյան Ռիմա
- 6 Թալանջյան Գևորգ

104 բն.

- 1 Հովսեփյան Սերյոժա
- 2 Հովսեփյան Զինաիդա
- 3 Հովսեփյան Արմինե
- 4 Հովսեփյան Արսեն
- 5 Հովսեփյան Սիրանուշ
- 6 Հովսեփյան Արթուր

105 բն.

- 1 Սիմոնյան Արկաղի
- 2 Նասյան Արմինե
- 3 Սիմոնյան Անետա
- 4 Սիմոնյան Սամվել

106 բն.

- 1 Խուցիշվիլի Գոհար
- 2 Խուցիշվիլի Ռատի
- 3 Խուցիշվիլի Մարգարիտա

107 բն.

- 1 Պողոսյան Արտաշես
- 2 Կարապետյան Աստղիկ
- 3 Կարապետյան Հովհաննես
- 4 Կարապետյան Մարիամ

108 բն.

- 1 Հակոբյան Թամարա
- 2 Հովհաննիսյան Մարիամ
- 3 Հովհաննիսյան Քրիստինե
- 4 Հովհաննիսյան Սյուզաննա

201 բն.

- 1 Նիկողոսյան Եփրեմ
- 2 Մադաթյան Լուսինե
- 3 Նիկողոսյան Հմայակ
- 4 Նիկողոսյան Սառա

202 բն.

- 1 Սմբատյան Վարդան
- 2 Դալլաքյան Անուշ
- 3 Սմբատյան Գոռ
- 4 Սմբատյան Սվետա

210 բն.

- 1 Միրզոյան Արթուր
- 2 Միրզոյան Նատալյա
- 3 Միրզոյան Ռուդոլֆ
- 4 Միրզոյան Կարեն

212 բն.

- 1 Մուսիկյան Լուսինե
- 2 Բրուքյան Սերգեյ
- 3 Բրուքյան Վահե
- 4 Բրուքյան Վիկտորյա

231 բն.


- 1 Սարգսյան Վարդան

217

- 1 Գրիգորյան Թամարա
- 2 Վարդանյան Գայանե
- 3 Իխտարյան Ժաննա
- 4 Իխտարյան Տաթև

211 բն.

- 1 Սարգսյան Քրիստինե
- 2 Կիրակոսյան Անի
- 3 Կիրակոսյան Վիլեն



207 բն.

- 1 Գոմցյան Բալասան
- 2 Դանիելյան Արսեն

209 բն.

- 1 Արզումանյան Հրանտ
- 2 Արզումանյան Գալյա
- 3 Արզումանյան Շամիր
- 4 Արզումանյան Թագուհի

220 բն.

- 1 Իշխանովա Ռոզա
- 2 Վարպետյան Գրիգոր
- 3 Վարպետյան Ալբերտ
- 4 Տեյան Սիրանուշ
- 5 Տեյան Անի

303 բն.

- 1 Եղեջրարյան Աննա
- 2 Եգանյան Մեսրոպ

307 բն.

- 1 Սարգսյան Աննա
- 2 Սարգսյան Սամսոն

311 բն.

- 1 Պետրոսյան Էլմիրա

319 բն.

- 1 Ավետիսյան Գևորգ

323 բն.

- 1 Աբրահամյան Արթուր

322 բն.

- 1 Դուրյան Մարիամ
- 2 Դուրյան Անդրիաս

314 բն.

- 1 Հարությունյան Նունե
- 2 Հարությունյան Անահիտ

312 բն.

- 1 Պետրոսյան Քրիստինե
- 2 Պետրոսյան Արծվիկ
- 3 Պետրոսյան Հայկ
- 4 Պետրոսյան Նորայր

310 բն.

- 1 Հակոբյան Աշոտ

306 բն.

- 1 Ծատուրյան Արշալույս
- 2 Նազարյան Անահիտ
- 3 Ծատուրյան Հակոբ
- 4 Ծատուրյան Աննա

302 բն.

- 1 Սարգսյան Ռուզաննա
- 2 Սարգսյան Ռիտա
- 3 Սարգսյան Մերիան
- 4 Սարգսյան Լիլիթ

301 բն.

- 1 Խաչատրյան Ելենա

324 բն.

- 1 Բեգոյան Հենրիկ
- 2 Թարգյան Ռոբերտ

323 բն.

- 1 Արզումանյան Ալինա
- 2 Արզումանյան Ալինա
- 3 Արզումանյան Արսեն
- 4 Աթանեսյան Արթուր
- 5 Արզումանյան Շուշանիկ
- 6 Աթանեսյան Տաթևիկ
- 7 Աթանեսյան Գևորգ

401 բն.

- 1 Կեսոյան Ռիմա
- 2 Զաքարյան Ալբերտ

405 բն.

- 1 Գինոսյան Հարություն
- 2 Դոխոյան Աիդա
- 3 Դոխոյան Գայանե
- 4 Դոխոյան Գոռ
- 5 Դոխոյան Գրիգոր

407 բն.

- 1 Ասկանյան Իշխան

423բն.

- 1 Ավագյան Հերմինե
- 2 Ավագյան Վրճան
- 3 Ավագյան Հասմիկ

419բն.

- 1 Ավագյան Էլիզա
- 2 Ավագյան Մորիս
- 3 Ավագյան Սարգիս

408բն.

- 1 Մելքոնյան Եփրաքսիա

410բն.

- 1 Քոչարյան Գարուն
- 2 Քոչարյան Ամալյա
- 3 Քոչարյան Մերի
- 4 Քոչարյան Արթուր

412բն.


- 1 Խաչատրյան Մարիան
- 2 Խաչատրյան Արժրուհ

433բն.

- 1 Անտոնյան Ժակ
- 2 Անտոնյան Ալվարդ
- 3 Անտոնյան Սարգիս
- 4 Անտոնյան Արտուր
- 5 Անտոնյան Արսեն
- 6 Մնացականյան Ժակ

416բն.

- 1 Մուրադյան Ալիսա





425բն.

1 Գրիգորյան Սիրանուշ

417բն.

1 Առաքելյան Ֆլորա  
2 Հարությունյան Աշխեն

533բն.

1 Հովհաննիսյան Մարիամ  
2 Խաչատրյան Քիչմիշ  
3 Խաչատրյան Գրիգոր

529բն.

1 Համբարձումյան Գոհար

518բն.

1 Մինասյան Հասմիկ

516բն.

1 Դուկասյան Հայկանուշ  
2 Դուկասյան Ավետյաննա  
3 Դուկասյան Սեդա  
4 Դուկասյան Վիգեն

500բն.

1 Նիկողոսյան Լևոն

519բն.

1 Թադևոսյան Անալիա

523բն.


1 Սողոյան Ռիմա

515բն.

1 Աբրահամյան Գայանե  
2 Աբրահամյան Սարգիս  
3 Նարգիզյան Մարիա

503բն.

1 Աբրահամյան Արմինե  
2 Հարությունյան Աշոտ



502բն.

1 Խաչատրյան Էմմա  
2 Խաչատրյան Աշոտ  
3 Խաչատրյան Ռիմա

501բն.

1 Ավետիսովա Աննա

514բն.

1 Հարությունյան Աստղիկ  
2 Հարությունյան Էդգար  
3 Հարությունյան Վանուշ

531բն.

1 Տատարզալովա Քրիստինե

520բն.

1 Ոփյան Հերմինե

508բն.

1 Ասիլբեկյան Հարություն  
2 Ասիլբեկյան Սլավիկ  
3 Ասիլբեկյան Սիլվա

Վարդաշեն 4-րդ փողոց 47 տուն

1 Բղոյան Նազիկ  
2 Մխիթարյան Սոնա  
3 Մխիթարյան Գևորգ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ  
18 փետրվարի 2011 թվականի N Մ-062-Ա  
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ԲԱԴԵՆ-ՎՅՈՒՐՏԵՆԲԵՐ-  
ԳԻ ԵՐԿՐԱՄԱՍԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՀԱՍՑԵՈՎ  
ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2010 թվականի նոյեմբերի 12-ի N 3/3.8-2/8897-10, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2010 թվականի նոյեմբերի 10-ի N ՖԲ/Մարտի-2/5192-10 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի փետրվարի 14-ի N ԱԱ/3-6/775-11 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Բարեգործական որակել Գերմանական Կարմիր Խաչի կողմից Հայաստանում Գերմանական Կարմիր Խաչի Բադեն-Վյուրտեմբերգի երկրամասային կազմակերպության մասնաճյուղի հասցեով ստացված ներմուծման և անհատույց բաշխման ծրագիրը՝

1) մեկ ավտոմեքենա, Մերսեդես G մակնիշի, 1988 թվականի արտադրության, S-RK 575 պետհամարանիշի, իդենտիֆիկացիոն համարը՝ WDB46023917058559, 1700 կգ ընդհանուր քաշով, 1 եվրո արժողությամբ, ԱՄ ՄՁՄ ՄՏ.

2) մեկ կցորդ, Վեստֆալիա տիպի, S-UE 5068 պետհամարանիշի, իդենտիֆիկացիոն համարը՝ 345999, 600 կգ ընդհանուր քաշով, 1 եվրո արժողությամբ, Արարատյան ՏՄ.

3) օգտագործված ապրանք և հագուստ, 41 կտոր, 262.5 կգ ընդհանուր քաշով, 315 եվրո արժողությամբ, բեռի ցանկը կցվում է, Արարատյան ՏՄ:

Բեռի փոխադրման ծախսերը կազմել են 2400 եվրո:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:



*Handwritten signature*

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

Հայաստանում ԳԿԽ Բաղեն-Վյուրտենբերգի  
երկրամասային կազմակերպության մասնաճյուղ  
Դրոյի փողոց 22/5  
Քանաքեռ Ձեյթուն  
375015 Երևան/Հայաստան


2/22.20

Հայաստանում ԳԿԽ ԲՎԵԿ մասնաճյուղի կողմից 24.09.2010թ.  
Գերմանիայից ներմուծված մարդասիրական բեռի ցուցակ

N	քանակ	Փաթեթա- վորում	Նյութ	Քաշ նետոտ կգ	Քաշ բրուտոտ կգ	Արժեք
1	165	կգ	հագուստներ և ապրանքներ՝ օգտագործված	165	177.5	115 €
2	82	գուլգ	գուլպաներ	9	9.5	20 €
3	10	հատ	խալաթ կանացի	4	4	10 €
4	6	հատ	փչովի գնդակ արհեստական կաշվից	3	3	30 €
5	4	հատ	օգտագործված հարվածամեղմիչներ մ-ր ավտոմեքենայի համար	14	14.5	50 €
6	1	հատ	կիթառ ոչ էլեկտրական՝ պատյանով, օգտագործված	3	3	5 €
7	4	հատ	մ-ր ավտոմեքենայի անվադողեր R16՝ օգտագործված	48	48	80 €
8	1	հատ	ուսապարկ	3	3	5 €
9	1	հատ	կիսակցորդ	600	600	1€
10	1	հատ	ավտոմեքենա Դայնլեր-Բենց	1700	1700	1€
	132		ԸՆԴԱՄԵՆԸ	2549 կգ	2562,5 կգ	317 €

Ս. Պողոսյան

Հայաստանում ԳԿԽ ԲՎԵԿ մասնաճյուղի  
ղեկավարի տեղակալ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ՔԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 փետրվարի 2011 թվականի N Մ- 063 -Ա  
քաղ. երևան



ՀԱՅ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՖՈՆԴԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՀԱՍՑԵՈՎ  
ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համա-կարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի փետրվարի 9-ի N 3/3.8-2/1090-11, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցվերի նախարարության 2011 թվականի փետրվարի 4-ի N ՖԲ/Մարտի-2/645-11, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի փետրվարի 7-ի N ԱԱ/3-6/574-11 եզրակացությունները, **ո ր ո շ ու մ է.**

1. Բարեգործական որակել Ամերիկայի միացյալ հայկական ֆոնդի կողմից Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի հասցեով ուղարկված բրինձով և սոյայով չոր ապուրի (38 տեղ, 18893 կգ ընդհանուր քաշով, 51464 ԱՄՆ-ի դոլար արժեքով, փոխադրման ծախսերը կազմում են 7875 ԱՄՆ-ի դոլար, բաշխման ցանկը կցվում է, Արարատյան Տ/Ս) ներմուծման և բախշման ծրագիրը (բեռի բաշխման ցանկը կցվում է):

2. Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղին՝ բեռի բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն բաշխման վերաբերյալ:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:


 ՆԱԽԱԳԱՀ 

Ս ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ


Container MSCU 4805484 ԲԵՈՒ ԲԱՇԽՄԱՆ ՑԱՆԿ

#	ՍՏԱՅՈՂ	ԱՊՐԱՆՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ԲՐՈՒՏՏՈ ՔԱՇ /ԿԳ/	ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՐԺԵՔԸ
1	ՀՕՖ-ի Բարեգործական Ճաշարանների շահառուներ	Չոր Ապուր ` բրնձով և սոյայի սպիտակուցներով	8,271.33	\$ 22,530.89
2	ՀՕՖ-ի Երեխաների աջակցության կենտրոնի շահառուներ	Չոր Ապուր ` բրնձով և սոյայի սպիտակուցներով	2,033.93	\$ 5,540.38
3	Նոր Խարբերդի Մանկատուն ՊՈԱԿ-ի շահառուներ	Չոր Ապուր ` բրնձով և սոյայի սպիտակուցներով	632.78	\$ 1,723.67
4	ՀՀ վարչապետի որոշմամբ կառավարության կողմից կազմակերպված ամենամյա ամառային ճամբարների 3000 շահառուներ	Չոր Ապուր ` բրնձով և սոյայի սպիտակուցներով	2,109.27	\$ 5,745.58
5	SOS մանկական գյուղեր հայկական բարեգործական հիմնադրամի Կոտայքի մասնաճյուղի շահառուներ	Չոր Ապուր ` բրնձով և սոյայի սպիտակուցներով	873.84	\$ 2,380.31
6	SOS մանկական գյուղեր հայկական բարեգործական հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի շահառուներ	Չոր Ապուր ` բրնձով և սոյայի սպիտակուցներով	617.71	\$ 1,682.63
7	Վարդենիսի Նյարդահոգեբանական Տուն Ինտերնատ ՊՈԱԿ-ի շահառուներ	Չոր Ապուր ` բրնձով և սոյայի սպիտակուցներով	3,766.55	\$ 10,259.97
8	Երևանի թիվ 1 Տուն Ինտերնատ ՊՈԱԿ-ի շահառուներ	Չոր Ապուր ` բրնձով և սոյայի սպիտակուցներով	587.58	\$ 1,600.55
	ԸՆԴԱՄԵՆԸ		18,893	\$ 51,464.00

Ամերիկայի հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի տնօրեն՝ Բ. Սարգսյան




*Օլգա*



2/22.15

✓



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 փետրվարի 2011 թվականի N Մ- 064 -Ա  
քաղ. երևան


**«ԳՈՒՐԳԵՆ ՄԵԼԻՔՅԱՆԻ ԲԱԶՄԱԶԱՎԱԿ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՀԻՄՆԱ-  
ԴՐԱՄ»-Ի ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԵՎ ԲԱՇԽՄԱՆ  
ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի հունվարի 27-ի N 3/3.8-1/592-11, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2011 թվականի հունվարի 24-ի N ՖԲ/Մարտի-1/287-11 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի հունվարի 1-ի N ԱԱ/3-6/408-11 եզրակացությունները, **ո ր ո շ ու մ է.**

1. Բարեգործական որակել Ամերիկայի Միացյալ հայկական հիմնադրամի կողմից «Գուրգեն Մելիքյանի բազմազավակ ընտանիքների հիմնադրամ»-ի հասցեով ստացված բեռի (284 տեղ, 5327 կգ ընդհանուր քաշով, 71660 ԱՄՆ-ի դոլար արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմում են 6930 ԱՄՆ-ի դոլար, բաշխման ցանկը կցվում է, «Արարատյան» տարածաշրջանային մաքսատուն) ներմուծման և բաշխման ծրագիրը:

2. «Գուրգեն Մելիքյանի բազմազավակ ընտանիքների հիմնադրամ»-ին՝ նշված բեռի բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարու-  
թյուն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի  
Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն, Հայաստանի Հանրապետության  
աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ու Հայաստանի  
Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ





2/22.19

«Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամի» անունով «Հայկական միացյալ հիմնադրամի» կողմից ուղարկված 284 տեղ 5327 կգ բրուտտո քաշով և 71660 ԱՄՆ դոլար արժողությամբ

(Ճանապարհածախսը 6930 ԱՄՆ դոլար) բեռի բաշխման ՑԱՆԿ

h/h	Ապրանքի անվանումը	տեղ	քաշ բրուտտո կգ	արժեք \$	ԼՂՀ Քաշաթաղի սոցապ վարչություն	ԼՂՀ Ստեփանակերտի «Արփեն» մայր և նորածին կենտրոն
1.	Բժշկ. մահճակալ	1	49	300	1	
2.	Բուժ պարագաներ	3	4	50	3	
3.	Մեծահասակի տակաշոր	10	114	443	10	
4.	Մահճակալի ներքնակ և կառկաս	9	112	235	9	
5.	Ֆուտբոլի սպորտային պարագաներ	1	14	60	1	
6.	Դպրոցական պարագաներ և գրիչներ	1	21	20	1	
7.	Օգտ. հագուստ	259	5013	70,552	159	100
	<b>Ընդամենը</b>	<b>284</b>	<b>5327</b>	<b>71660</b>		





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 փետրվարի 2011 թվականի N Մ- 065 -Ա  
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N Մ-896-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («ՏԻՐԱՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՒՍԱՍՏԱՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի փետրվարի 3-ի N 3/3.8-2/850-11, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2011 թվականի փետրվարի 3-ի N ՖԲ/Մարտի 2/594-11 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի փետրվարի 2-ի N ԱԱ/3-6/483-11 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Սահմանել, որ Ամերիկայի միացյալ հայկական հիմնադրամի կողմից «Տիրամայր Հայաստանի կուսաստան» բարեգործական կազմակերպության հասցեով ուղարկված բեռը (208 արդ, 4350 կգ ընդհանուր քաշով, 65600 ԱՄՆ-ի դոլար արժեքով, փոխադրման ծախսերը կազմում են 5700 ԱՄՆ-ի դոլար, բեռի բաշխման ցանկը կցվում է, Շիրակի ՏՄ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2009 թվականի դեկտեմբերի 25-ի «Տիրամայր Հայաստանի կուսաստան» բարեգործական կազմակերպության կողմից իրականացվող «Աջակցություն անապահով ընտանիքներին» ծրագրի մասին» N Մ-896-Ա (2011 թվականի հունվարի 21-ի N Մ-007-Ա որոշման խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի ու Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ




ԱՆԱՐԱՏ ՀՂՈՒԹՅԱՆ ՀԱՅ ԲՈՒՅՐԵՐԻ ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՏԻՐԱՄԱՅՐ  
 ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՒՍԱՍՏԱՆԻ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ  
 ՄՍԱՅՎԵԼԻՔ ԲԵՌԻ ԲԱՇՆՄԱՆ ՅՈՒՅԱԿ

(Container No GSTU 4965964)

2/22.24

Հ/Հ	Ստացող կազմակերպություն	Քանակ (արկղ, կգ, հատ, գույգ)	Արկղի պարունակություն	Ապրանքի անվանում	Միավորի արժեք \$	Ընդհանուր արժեք \$
1.	Տիրամայր Հայաստանի ճամբար-Ծաղկաձոր (մոտ 1200 շահառու)	77	10 արկղ (1000 գույգ) 7 արկղ (70 գույգ) 25 արկղ (625 հատ) 25 արկղ (650 հատ) 10 արկղ (700 հատ)	գուլպա կոշիկ սվիտր տաբատ մայկա	1.5 24 10.5 11.6 4.17	1500 1680 6562 7540 2919
2.	Տիրամայր Հայաստանի Կենտրոն-Գյումրի (մոտ 350 շահառու)	31	10 արկղ (100 հատ) 1 արկղ (1 հատ)  1 արկղ (10 հատ) 1 արկղ (1 հատ) 5 արկղ (500 գույգ) 3 արկղ (30 գույգ) 3 արկղ (30 հատ) 3 արկղ (78 հատ) 3 արկղ (75 հատ) 1 արկղ (70 հատ)	տիկնիկ հաշմանդամի աթոռ թավա կարի մեքենա գուլպա կոշիկ բաճկոն տաբատ սվիտր մայկա	3  200 30 100 1.5 24 80.4 11.6 10.5 4.17	300  200 300 100 750 720 2412 904.8 787 291.9
3.	Տավուշի մարզի Չորաթան և Նորաշեն գյուղեր (մոտ 1000 շահառու)	25	5 արկղ (50 հատ) 8 արկղ (208 հատ) 8 արկղ (200 հատ) 4արկղ (280 հատ)	բաճկոն տաբատ սվիտր մայկա	80.4 11.6 10.5 4.17	4020 2412.6 2100 1167
4.	Միսիոներների Բարեգործական կազմակերպության հայկական մասնաճյուղ (մոտ 1000 շահառու)	50	10 արկղ (100 հատ) 14 արկղ (364 հատ) 21 արկղ (525 հատ) 5 արկղ (350 հատ)	բաճկոն տաբատ սվիտր մայկա	80.4 11.6 10.5 4.17	8040 4222 5512 1459.5
5.	Գյումրու կարիքավոր ընտանիքներ (մոտ 650 շահառու)	25	5 արկղ (50 հատ) 8 արկղ (208 հատ) 8 արկղ (200 հատ) 4արկղ (280 հատ)	բաճկոն տաբատ սվիտր մայկա	80.4 11.6 10.5 4.17	4020 2412.6 2100 1167.6

Այս բեռի ընդհանուր քաշն է 4850 կգ: (չորս հազար երեք հարյուր հիսուն) կգ, \$65,600.00 (վաթսուհինգ հազար երեք հարյուր ԱՄՆ դոլար) արժողությամբ. ճանապարհաձախսը կազմում է \$5.700.00 (հինգ հազար յոթ հարյուր ԱՄՆ դոլար):





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 փետրվարի 2011 թվականի N Մ- 066 -Ա

քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N Մ-925-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ («ԿԱՄՐՋԱԿ» ՍՈՑԻԱԼ-ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հաշվի առնելով «Կամրջակ» սոցիալ-բարեգործական հասարակական կազմակերպության 2011 թվականի փետրվարի 10-ի գրությունը, **ո Ր Ո Շ ՈՒ Մ** է:

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի դեկտեմբերի 24-ի «Կամրջակ» սոցիալ-բարեգործական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ-ին ավտոմեքենայի նվիրաբերություն և բեռի ներմուծում» ծրագրի մասին» N Մ-925-Ա որոշմամբ հաստատված ծրագրի 6-րդ և 10-րդ կետերում «51 կգ քաշով» բառերը փոխարինել «103 կգ քաշով» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն աղընթեր պետական եկամուտների կոմիտե:



Ս ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 փետրվարի 2011 թվականի N Մ-067-Ա  
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՊՈԱԿ-Ի  
ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի հունվարի 26-ի N 3/3.8-2/541-11, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2011 թվականի հունվարի 26-ի N 04/07.2/491-11, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի հունվարի 21-ի N ԱԱ/3-6/270-11 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է,**

1. Բարեգործական որակելի «Լույս» մշակութային, գիտական, կրթական հիմնադրամի կողմից հատկացված գումարներով գնված՝ Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Երևանի պետական համալսարան» ՊՈԱԿ-ի հասցեով Մեծ Բրիտանիայից ստացված բեռի (ուսումնական հավաքածուներ՝ իրեց բաղադրամասերով 3 տեղ, 23 կգ ընդհանուր քաշով, 10.353 անգլիական ֆունտ սթերլինգ արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 217 անգլիական ֆունտ սթերլինգ, «ՄՓ և ՄԱՓԱՄ» Մ/Տ) ներմուծման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Երևանի պետական համալսարան» ՊՈԱԿ-ին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱԸ



Ս. ՏԵՐ - ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ  
18 փետրվարի 2011 թվականի N Մ - 068 - Ա  
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-  
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ  
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 10-Ի N Մ-896-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ  
ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ  
ՀԻՄՆԱԴՐԱՄ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի փետրվարի 15-ի N 3/3.8-1/1274-11 և Հայաստանի անրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի փետրվարի 14 -ի N ԱԱ/3-4/778-11 եզրակացությունները **ո Ր Ո - 2 ու մ է.**

1. Սահմանել, որ «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի դեկտեմբերի 10-ի «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Արծնի գյուղի գազաֆիկացման նախագծում» ծրագրի մասին» N Մ-896-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Հայաստանի Հանրապետության նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01508665) 2011 թվականի փետրվարի 8-ին կնքված՝ N 07 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է նախագծի փորձաքննություն՝ 150000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ  
18 փետրվարի 2011 թվականի N Մ-069-Ա  
քաղ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՊՈԱԿ-Ի  
ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ (1)


Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի հունվարի 24-ի N 3.8-2/421-11, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2011 թվականի հունվարի 19-ի N 04/07.2/218-11, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի հունվարի 20-ի N ԱԱ/3-6/216-11 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Բարեգործական որակելի «Լույս» մշակութային, գիտական, կրթական հիմնադրամի կողմից հատկացված գումարներով գնված Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Երևանի պետական համալսարան» ՊՈԱԿ-ի հասցեով Ավստրիայից ստացված բեռի (կենսաբանության ֆակուլտետի համար ուսումնական լաբորատորիայի երեք հավաքածու, 1տեղ, 38 կտորից, 145 կգ ընդհանուր քաշով, 10232.93 եվրո ընդհանուր արժեքով ներառյալ փոխադրման ծախսերը, «Ջվարթնոց» Մ/Տ) ներմուծման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Երևանի պետական համալսարան» ՊՈԱԿ-ին նշված բեռի համապատասխան ձևակերպումից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱԿ



Ս. ՏԵՐ - ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 փետրվարի 2011 թվականի N Մ-070  
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-  
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ  
ՓԵՏՐՎԱՐԻ 18-Ի N Մ-90-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱ-  
ՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («Հայաստանի Հանրապետությունում  
դեղակայուն տուբերկուլյոզի կառավարման ընդլայնում»  
դրամաշնորհային ծրագիր) (1)


Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի հա-  
մակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջա-  
պահության նախարարության 2011 թվականի հունվարի 31-ի N ՎՊ/476-11 գրությունը և  
Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի փետրվա-  
րի 7-ի N 3/3.8-1/957-11 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր  
պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի փետրվարի 17-ի N ԱԱ/3-4/873-11 եզրա-  
կացությունները, **ո Ր Ո Շ Ո Ւ Մ է.**

1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարա-  
րության և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլյոզի ու մալարիայի դեմ պայքարի Գլոբալ հիմնա-  
դրամի միջև կնքված՝ «Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի  
ազգային ծրագրին աջակցություն» դրամաշնորհային ծրագրի միջոցներով իրականացվող  
գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության  
բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի փետրվարի  
18-ի «Հայաստանի Հանրապետությունում դեղակայուն տուբերկուլյոզի կառավարման ընդ-  
լայնում» դրամաշնորհային ծրագրի մասին» N Մ-90-Ա որոշմամբ հաստատված ծրագրի  
իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Պետական գնումների գործակալություն» ՊՈԱԿ-ի (ՀՎՀՀ՝ 00063418) և «Նահա-  
պետյանի Զարիա» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01230788) 2011 թվականի հունվարի 19-ին կնքված՝  
պետության կարիքների համար կապալային աշխատանքների կատարման պետական  
գնման N ԱՇՁԲ-10/59-1 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է «Երևան  
ՔԴՀ» ՓԲԸ ՏԲ, «Գրիգոր Նարեկացի Բ/կ» ՓԲԸ ՏԲ, «Արմավիր Բ/կ» ՓԲԸ ՏԲ, «Իջևանի  
Բ/կ» ՓԲԸ ՏԲ, «Աշտարակի Բ/կ» ՓԲԸ ՏԲ, «Վաղարշապատի պոլիկլինիկա» ՓԲԸ ՏԲ և  
«Մասիսի Բ/կ» ՓԲԸ ՏԲ, լաբորատորիաների վերանորոգման աշխատանքների իրականա-  
ցում՝ 32747704 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարա-  
րություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաս-  
տանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ



Ս. ՏԵՐ - ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 փետրվարի 2011 թվականի N Մ - 071- Ա  
քաղ. Երևան

ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ  
ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ(N 1)


Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի փետրվարի 15-ի N 3/3.8-2/1268-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի փետրվարի 15-ի N ԱԱ/3-6/827-11 եզրակացությունները,  
**որոշում է.**

1. Բարեգործական որակել ԱՄՆ-ից բարերար Հակոբ Գույումճյանի միջոցներով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հասցեով ստացված բեռի՝ օդորակիչների (14 տեղ, 3281.74 կգ ընդհանուր քաշով, 15680 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 2500 ԱՄՆ-ի դոլար, «Արարատյան» Տ/Մ) ներմուծման ծրագիրը, որը նախատեսված է Մայր աթոռ Սուրբ Էջմիածնի գանձատան համար:

2. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպման և բաշխման աշխատանքների ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել դրանց օգտագործման մասին ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ



Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 փետրվարի 2011 թվականի N Մ - 072 Ա  
քաղ. երևան

ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ  
ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ


Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի փետրվարի 15-ի N 3/3.8-2/1267-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի փետրվարի 15-ի N ԱԱ/3-6/825-11 եզրակացությունները,  
**ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Բարեգործական որակել Դուբայից, Հայկական բարեգործական ընդհանուր միության միջոցներով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հասցեով ստացված բեռի՝ տնտեսական սարքավորումների և արտաքին լուսավորության պարագաների (364 տեղ, 13.360 կգ ընդհանուր քաշով, 106.604 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Արարատյան» Տ/Մ) ներմուծման ծրագիրը, որը նախատեսված է «Սուրբ Ներսես Մեծ» հիվանդանոցի համար:

2. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպման և բաշխման աշխատանքների ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել դրանց օգտագործման մասին ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ



Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 փետրվարի 2011 թվականի N Մ-073Ա  
քաղ. Երևան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ  
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2007 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱ-  
ՐԻ 16-Ի N Մ-112-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐ-  
ՔԻ ՄԱՍԻՆ («Հայաստանի ամերիկյան համալսարան» հիմնադրամ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համա-  
կարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների  
նախարարության 2011 թվականի հունվարի 26-ի N 3.8-1/544-11, Հայաստանի Հանրապե-  
տության կրթության և գիտության նախարարության 2011 թվականի հունվարի 24-ի  
N 04/07.2/384-11 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետա-  
կան եկամուտների կոմիտեի 2011 թվականի հունվարի 25-ի N ԱԱ/3-4/320-11 եզրակացու-  
թյունները, որոշում է.

1. Սահմանել, որ «Հայաստանի ամերիկյան համալսարան» հիմնադրամի (ՀՀ, քաղ.  
Երևան, Մարշալ Բաղրամյան 40, ՀՎՀՀ՝ 01511187) կողմից կնքված՝ ստորև նշված պայմա-  
նագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապե-  
տության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի  
2007 թվականի փետրվարի 16-ի «Տնտեսական զարգացում և շարունակական կրթություն»  
ծրագրի մասին» N Մ-112-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա  
համար ունի զգալի նշանակություն՝

«Գյումրի Քոմերշլ Սենթր» ՍՊԸ-ի հետ (ՀՀ, քաղ. Գյումրի, Գարեգին Նժդեհի 1/5,  
ՀՎՀՀ՝ 05516557) 2011 թվականի հունվարի 18-ին կնքված՝ N 01/11 վարձակալության  
պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2011 թվականի հունվարի 1-ից  
մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում Գյումրու գրասենյակի համար  
տարածքի վարձակալում՝ 240000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարա-  
րություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն և  
Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների  
կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ  
  


Ս. ՏԵՐ - ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ  
18 փետրվարի 2011 թվականի N Մ-074  
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010  
ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 7-Ի ՄՄ-318-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ  
ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ (Առաքելություն Արևելք» միջազգային  
օգնության հայաստանյան մասնաճյուղ)


Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի փետրվարի 7-ի N 3/3.8-1/920-1 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի փետրվարի 9-ի N ԱԱ/3-4/654-11 եզրակացությունները, **ո ր ո շ ու մ է.**

1. Սահմանել, որ «Առաքելություն Արևելք» մարդասիրական օգնության կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքը անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի հունիսի 7-ի «Աջակցություն Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱԸ - ին հակազդման ազգային ծրագրին, փուլ 1» ծրագրի մասին N Մ-318-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Կոմպյուտեր Սերվիս» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝02508699) 2011 թվականի հունվարի 24-ին կնքված՝ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է բուկլետների տպագրում՝ 5366250 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ



Ս. ՏԵՐ - ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 փետրվարի 2011 թվականի N Մ-075-Ա  
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-  
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ  
ՕԳՈՍՏՈՍԻ 17-Ի N Մ-497-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱ-  
ՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ (Հայաստանի Հանրապե-  
տության կրթության և գիտության նախարարության «Երևանի պետա-  
կան համալսարան» ՊՈԱԿ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի հա-  
մակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանս-  
ների նախարարության 2011 թվականի փետրվարի 11-ի N3/3.8-2/1188-11, Հայաստանի  
Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2011 թվականի փետրվարի  
10-ի N 03/07.2/994-11 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պե-  
տական եկամուտների կոմիտեի 2011 թվականի փետրվարի 10-ի N ԱԱ/3-6/713-11 եզրա-  
կացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախա-  
րարության «Երևանի պետական համալսարան» ՊՈԱԿ-ի հասցեով Իսրայելից ստացված  
բեռը՝ (լաբորատոր սարքավորման հավաքածու՝ QLAxcel ԴՆԹ հավաքածուների անալի-  
զատոր՝ 3 տեղ, 24311.05 եվրո արժեքով ներառյալ փոխադրման ծախսերը, ցանկը կցվում  
է, «Ջվարթնոց» Մ/Տ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բա-  
րեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի օգոստոսի 17-ի  
ՇՐՋԱՆԻ ՏՈՂ ԳՅՈՒՂԻ ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ  
ԼԱԽԱԳԾՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 3/3.8-1/1139-11, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 01/14-3.2-64/648-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի փետրվարի 9-ի N ԱԱ/3-4/664-11 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Բարեգործական որակելի «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող 7 400 000 դրամ ընդհանուր արժողությամբ «Լեռնային Ղարաքաղի Հանրապետության Հարողի շրջանի Տոլ գյուղի ջրամատակարարման համակարգի նախագծում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02507456) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Ջրուղի» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01218107) 2011 թվականի հունվարի 12-ին կնքված N ԼՂ/ՆՆ-01/11 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ջրամատակարարման համակարգի վերակառուցման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակում՝ 6 800 000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:


3. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի

պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել հաշվետվություն այդ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում հիմնադրամի կողմից, ինչպես նաև հիմնադրամին մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաքաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

«Հայաստան» համահայկական  
հիմնադրամի գործադիր տնօրեն



«ԼՂՀ Հաղորդի շրջանի Տող գյուղի ջրամատակարարման համակարգի նախագծում»  
ԾՐԱԳԻՐ

1.	Ծրագրի նպատակը	Նպաստել Տող գյուղի ջրամատակարարման համակարգի վերակառուցմանը
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից
3.	Ծրագիրը կատարողը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երևան, Կառավարական տուն N 3, ՀՎՀՀ՝ 02507456)
4.	Ծրագրի իրականացման վայրը եւ բնագավառը	ԼՂՀ Հաղորդի շրջանի Տող գյուղ, ջրամատակարարման բնագավառ
5.	Ծրագրի բյուջեն	Բյուջեն կազմում է 7.400.000,00 ՀՀ դրամ:

6.	Բարեգործություն ստացողը	ԼՂՀ Հաղորդի շրջանի Տող գյուղի համայնքը
7.	Ծրագրի իրականացման տեւողությունը	Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2011թ հունվարի 12-ից մինչեւ 2011թ. հունիսի 12-ը:
8.	Միջոցառումների նկարագրությունը եւ ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Առանձին միջոցառումներ չեն նախատեսվում
9.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները եւ նախատեսվող գինը	«Զրտուք» ՍՊԸ-ի կողմից նախագծման աշխատանքներ՝ 6.800.000,00 ՀՀ դրամ առանց ԱԱՀ-ի:  Նախատեսվում է նաեւ նախագծա-նախահաշվային փաստաթղթերի փորձաքննություն՝ 600.000,00 ՀՀ դրամ մոտավոր արժեքով:
10.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում
11.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Նախատեսվում է համագործակցություն ԼՂՀ կառավարության հետ
12.	Ծրագրի արդյունավետության եկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվելու է ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից (եռամսյակային եւ ամփոփ հաշվետվություններ):

Ներկայացրեց գործադիր տնօրենի խորհրդական՝ Արմինա Դարբինյանը

2/2



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**  
18 փետրվարի 2011 թվականի N Մ - 092 - Ա  
քաղ. երևան

**«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅՎԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑ-  
ՎՈՂ «ՇԵՌՈՒՍԱՄԱՐԱԹՈՆ - 2011» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի հունվարի 26-ի N 3/3.8-1/574-11, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2011 թվականի հունվարի 27-ի N 01/363-11 և Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի հունվարի 25-ի N ԱԱ/3-4/322-11 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Բարեգործական որակելի «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 100 000 000 դրամ ընդհանուր արժողությամբ «Շեռուստամարթոն - 2011» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02507456) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Վերսուս Ստուդիա» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00842355) 2011 թվականի հունվարի 18-ին կնքված N Ծ-02/11 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է նշված ծառայությունների մատուցում՝ 22 000 000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:


3. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի

մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.


2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել հաշվետվություն այդ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում հիմնադրամի կողմից, ինչպես նաև հիմնադրամին մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

«Հայաստան» համահայկական  
հիմնադրամի գործադիր տնօրեն



Արա Կարրանյան  
«21» հունվարի 2011թ.

«Հեռուստամարաթոն – 2011»  
ԾՐԱԳԻՐ

1.	Ծրագրի նպատակը	Նախապատրաստել «Հեռուստամարաթոն-2011»-ի պատշաճ անցկացումը բարեգործական դրամահավաքը կազմակերպելու համար
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից
3.	Ծրագիրը կատարողը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երևան, Կառավարական տուն N 3, ՀՎՀՀ՝ 02507456)
4.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	ՀՀ և ԼՂՀ, սոցիալ-տնտեսական բնագավառ
5.	Ծրագրի բյուջեն	Բյուջեն կազմում է 100.000.000,00 դրամ:
6.	Բարեգործություն ստացողը	ՀՀ և ԼՂՀ ազգաբնակչությունը
7.	Ծրագրի իրականացման տևողությունը	Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2011թ հունվարի 21-ից մինչև 2011թ. դեկտեմբերի 31-ը:

F/2

8.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Առանձին միջոցառումներ չեն նախատեսվում
9.	Չեղք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	«Վերսուս Ստուդիա» ՍՊԸ-ի կողմից սույն թվականի հունվարի 18-ից սկսած 11 ամիս շարունակ «Հայաստան» Համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող ծրագրերի վերաբերյալ, յուրաքանչյուրը 10-12 րոպե տևողությամբ «BETACAM» ֆորմատով «Չեղք ձեռքի» հաղորդաշարի 11 ֆիլմերի պատրաստում՝ 22.000.000,00 ՀՀ դրամ առանց ԱԱՀ-ի  Նախատեսվում է նաև տեղեկատվական և քարոզչական նյութերի նկարահանում, տպագրություն, տարածում (առաքում), տեղադրում, ցուցադրում և այլ գործարքներ բարեգործական հեռուստամարաթոնի անցկացման շրջանակներում 78.000.000,00 ՀՀ դրամ մոտավոր արժեքով:
10.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում
11.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Նախատեսվում է համագործակցություն համապատասխան մարզպետարանների հետ
12.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Արդյունավետության նկատմամբ վերահսկողությունը իրականացվելու է ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից (եռամսյակային եւ ամփոփ հաշվետվություններ):

Ներկայացրեց գործադիր  
տնօրենի խորհրդական՝  
Արմինա Դարբինյանը

F/2



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱՎԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎ

Ո Ր Շ ՈՒ Մ  
18 փետրվարի 2011 թվականի N Մ-031  
քաղ. երևան

ՀԱՅԱՅՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ  
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱՎԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 4-Ի  
N Մ-346-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ  
ՄԱՍԻՆ («Խոսրովի անտառ» պետական արգելոց» ՊՈԱԿ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության 2011 թվականի փետրվարի 2-ի N 1/01/10119-11 գրությունը և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի փետրվարի 7-ի N 3/3.8-1/956-11, Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի փետրվարի 9-ի N ԱԱ/3-4/651-11 եզրակացությունները, որոշում է.

1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության, Կովկասի պահպանվող տարածքների հիմնադրամի և «Խոսրովի անտառ» պետական արգելոց» ՊՈԱԿ-ի միջև 12.02.2010 թվականին կնքված դրամաշնորհային ծրագրի միջոցներով իրականացվող գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի հունիսի 4-ի «Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության, Կովկասի պահպանվող տարածքների հիմնադրամի և «Խոսրովի անտառ» պետական արգելոց» ՊՈԱԿ-ի միջև 12.02.2010 թվականին կնքված դրամաշնորհի պայմանագրի շրջանակներում ֆինանսավորվող» ծրագրի մասին» N Մ-346-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Գոռ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 03507266) 2010 թվականի դեկտեմբերի 29-ին կնքված՝ ապրանքների մատակարարման գնման N ԽԱՊԱ-ԱՊՁԲ-10/09 պայմանագրում նշված գործարքն, որով նախատեսվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով նախատեսված ապրանքի գնում՝ 200000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Սիթի պետրոլ գրուպ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02705201) 2010 թվականի դեկտեմբերի 24-ին կնքված՝ տարբեր տեսակի բենզինի և դիզելային վառելիքի մատակարարման գնման N ՊԱՊՁԲ-10/1-3 (ԽԱՊԱ-ԱՊՁԲ-10/08) գլխավոր պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով նախատեսված բենզինի մատակարարում՝ 2557500 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

3) «ԹեՍԿ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00002813) 2010 թվականի դեկտեմբերի 29-ին կնքված՝ ապրանքների մատակարարման գնման NN ԽԱՊԱ-ԱՊՁԲ-10/10, ԽԱՊԱ-ԱՊՁԲ-10/11 պայմանագրերում նշված գործարքները, որոնցով նախատեսվում են սույն պայմանագրերի N 1 հավելվածներով նախատեսված ապրանքների գնում՝ 725000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի և 870000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:



Ս. ՏԵՐ - ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ՔԱՆԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 փետրվարի 2011 թվականի N Մ-094

«ՕՐՐԱՆ» ՔԱՆԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ  
ԿՈՂՄԻՏԵ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության հունվարի 27-ի N 3.8-1/645-11, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2011 թվականի հունվարի 18-ի N 142-11, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2011 թվականի հունվարի 19-ի N ՖԲ/Մարտի-1/164-11, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2011 թվականի հունվարի 20 -ի N ՀԴ/22/215-11, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2011 թվականի հունվարի 18-ի N 04/07.2/202-11, Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի հունվարի 19-ի N ԱԱ/3-4/201-11, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության 2011 թվականի հունվարի 18-ի N 35/62 ու Երևանի քաղաքապետի 2011 թվականի հունվարի 24-ի N 100/1655 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է .**

1. Բարեգործական որակել «Օրրան» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից (ՀՀ, քաղ. Երևան, առաջին Եկմայլան 6, ՀՎՀՀ՝ 02552842) 2011 թվականին իրականացվող՝ 68898728 դրամ ընդհանուր արժեքով «Օրրան» օգնություն կարիքավոր ընտանիքներին» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Օրրան» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից կնքված՝ ստորև նշված գործարքներն անմիջականորեն կապված են նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն գազի նշանակություն՝

1) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի «Հարավ» մասնաճյուղի հետ (ՀՎՀՀ՝ 01520882) 2008 թվականի օգոստոսի 14-ին կնքված N 263135 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2011 թվականի փետրվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում էլեկտրաէներգիայի մատակարարման ծառայությունների մատուցում՝ 1521000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

2) «ԱրմենՏել» ՓԲԸ-ի «Կենտրոն» տեղամասի հետ (ՀՎՀՀ՝ 02500052) 2004 թվականի հունիսի 17-ին կնքված N 010309530 51/3162/4682 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2011 թվականի փետրվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում հեռախոսակապի ծառայությունների մատուցում՝ 1080000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

3) «ՎեՔ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00027623) 2007 թվականի հունվարի 1-ին կնքված N DI-ORR-01/07 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2011 թվականի

փետրվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում «Ինտերնետ» համակարգչային ցանցի ծառայությունների մատուցում՝ 420000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

4) «Երևան Ջուր» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01555351) 2006 թվականի հուլիսի 12-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2011 թվականի փետրվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում խմելու ջրի մատակարարում՝ 350000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

5) «Կենտրոն-մաքրություն» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01544673) 2010 թվականի դեկտեմբերի 14-ին կնքված N 4-263 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2011 թվականի փետրվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում կենցաղային աղբի հեռացման աշխատանքների իրականացում՝ 180000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

6) «Հայրուսագազարո» ՓԲԸ-ի Երևանի ԳԳՄ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00046317) 2006 թվականի ապրիլի 10-ին կնքված N Ա-012.04.06.1231 պայմանագրում (2010 թվականի դեկտեմբերի 6-ին կնքված լրացուցիչ N Ա-012 1231 համաձայնագրում) նշված գործարքը, որով նախատեսվում է 2011 թվականի փետրվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում «Օրրան» բարեգործական հասարակական կազմակերպության կենտրոնի գազամատակարարման ծառայությունների մատուցում՝ 2810000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

7) «Էյ-Ի-Ջի-Սերվիս» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00930884) 2010 թվականի դեկտեմբերի 23-ին կնքված N Ե-243 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2011 թվականի փետրվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում «Օրրան» բարեգործական հասարակական կազմակերպության կենտրոնի գազասարքավորումների տեխնիկական սպասարկում՝ 118928 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

8) «Գրանթ Թորնթոն Ամի» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00040569) 2008 թվականի նոյեմբերի 11-ին կնքված N AT-AU-107 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է «Օրրան» բարեգործական հասարակական կազմակերպության կենտրոնի գործունեության աուդիտի իրականացում՝ 2250000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.


9) «Սթար Դիվայր» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02700232) 2008 թվականի դեկտեմբերի 23-ին կնքված պայմանագրում (2010 թվականի դեկտեմբերի 1-ին կնքված N 2 հավելվածում) նշված գործարքը, որով նախատեսվում է 2011 թվականի փետրվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում մթերքի մատակարարում՝ 19350000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

10) «Վալենսիա» ՀՁ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 0835704) 2010 թվականի դեկտեմբերի 3-ին կնքված N 9 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Երեվանի այցելություն ջրաշխարհ՝ 320000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

11) «Տեխնիկական անվտանգություն ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01556354) 2010 թվականի դեկտեմբերի 3-ին կնքված N 2296 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է «Օրրան» բարեգործական հասարակական կազմակերպության կենտրոնի գազի կաթսայի տեխնիկական անվտանգության վերաբերյալ իրականացում՝ 33800 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

12) «Ն-Տելեկոմ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01551651) 2010 թվականի դեկտեմբերի 16-ին կնքված N 74556 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2011 թվականի փետրվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում հեռախոսակապի ծառայությունների մատուցում՝ 600000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

13) «Դարոյնք» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 0254434) 2010 թվականի դեկտեմբերի 11-ին կնքված N 8 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2011 թվականի փետրվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում սույն պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2011 թվականի





նագրի N 1 հավելվածով նախատեսված ապրանքների մատակարարում՝ 1200000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:



3. Առաջարկել «Օրրան» բարեգործական հասարակական կազմակերպությանը՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն՝ ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար:

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:


4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտե, Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանություն ու Երևանի քաղաքապետին:

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՏԵՐ - ՍԻՄՈՆՅԱՆ

«Օրրան» բարեգործական հասարակական կազմակերպություն  
 տնօրեն Արմենուհի Հովհաննիսյան



**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳԻ**

«ՕՐՐԱՆ» օգնություն կարիքավոր ընտանիքներին

2011 թ.

1	Ծրագրի նպատակները	Օգնել ֆինանսական դժվար կացության մեջ հայտնված ընտանիքների երեխաներին և ծեղրին, նրանց շրջանում վերացնել մուրացկանությունը, աջակցել աղքատության մեջ գտնվող ընտանիքներին, միայնակ ու կարիքավոր ծեղրերին
2	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	ՀՀ հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից օգտվելու
3	Բարեգործը (բարեգործները)	ԱՄՆ-ում «Օրրան» բարեգործական հասարակական կազմակերպություն, Հովհաննիսյանների ընտանիք, զրիգորյան բարեգործական հիմնադրամ /Անգլիա/, Ջերարդ Գաֆեսճյան հիմնադրամ /ԱՄՆ/, VivaCell-MTS, Հակոբ Բալսետյան
4	Ծրագրի կատարողը	«Օրրան» բարեգործական հասարակական կազմակերպություն ՀՎՀՀ 02552842 Առաջին Եվմայլան 6 Երևան, Հայաստանի Հանրապետություն Հեռ. 53-51-67
5	Ծրագրի իրականացման վայրը (վայրերը), բնագավառը	Հայաստանի Հանրապետություն, Երևան Սոցիալական բնագավառ
6	Ծրագրի բյուջեն	Ծրագրի բյուջեն 68898728 (վաթսուներե միլիոն ութ հարյուր ինսուսուրե հազար յոթ հարյուր քսանութ ) ՀՀ դրամ
7	Բարեգործություն ստացողը	Ծրագիրը սկսել է գործել 2000թ. ապրիլի 19-ից, 16 երեխաներով և 27 ծեղրով: Այժմ ծրագրում ներգրավված են. • 6-16 տարեկան 100 երեխա, ովքեր սպորտ են սոցիալական ծայրահեղ դժկարություններ ունեցող, մուրացկանության շեմին գտնվող ընտանիքներում: Մի շարք երեխաներ աշխատում և մուրում են փողոցում: Երեխաների մեծ մասը միակողմանի ծնողացույց են, հաշմանդամ, բաժնակազմ կամ ազատագրված

2/12



		<p>ծնողներ ունեն:</p> <ul style="list-style-type: none"> <li>51 թոշակառուներ՝ 60 և ավելի բարձր տարիքի կանայք ու տղամարդիկ, ովքեր անտուն են և մուրում են փողոցում, միայնակ են, ամուսնացած են և անժառանգ, I, II, III խմբերի հաշմանդամ են, ունեն ժառանգներ, սակայն լրացուցիչ աջակցության խիստ կարիք ունեն:</li> </ul> <p>Շահառուների ընտրությունը կատարում է սոցիալական աշխատողը՝ նախապես մշակված չափանիշներով: Յուրաքանչյուր դեպք քննարկվում է Օրրանի մասնագիտական խմբում, որի մեջ մտնում են Օրրանի սոցիալական աշխատողը, մանկավարժները, հոգեբանը, բժիշկը եւ գործադիր տնօրենը: Շահառուների ընտրության հարցում Օրրանը համագործակցում է «ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն», Երևանի տարբեր վարչական շրջաններ սոցիալական բաժինների, սոցիալական ոլորտում գործող հասարակական կազմակերպությունների, ինչպես նաեւ «ՀՀ Ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչության անչափահասների կողմից կատարվող հանցագործությունների դեմ պայքարի բաժնի» հետ:</p>
8	Ծրագրի իրականացման տևողությունը	Ծրագիրը սկսվել է 2000թ. ապրիլին և այն շարունակական է: Սույն ծրագիրը նախատեսված է 2011թ. հունվարի 1-ից մինչև 2011թ. դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածի համար: Այն կգործի այնքան ժամանակ, որքան կազմակերպությունը հնարավորություն կունենա իրագործել իր առաքելությունը և այդ նպատակով կունենա ֆինանսական միջոցներ:
9	Միջոցառումների (ըստ փուլերի, եթե այդպիսիք հնարավոր է առանձնացնել) նկարագրությունը և ժամկետները անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	<p>Օրրան ԲՀԿ-ն Առաջին Ելմայան 6 հասցեում գտնվող իր եռահարկ կենտրոնում մուրացիկ, թափառաշրջիկ եւ ծայրահեղ կարիքավոր ընտանիքների 100 երեխայի շաբաթը 6 օր մատուցում է տաք ճաշ եւ իրականացնում սոցիալական, կրթական, մշակութային, հոգեբանական եւ բժշկական ծառայություն:</p> <p>Շաբաթը 6 օր Օրրանը տաք նախաճաշ է մատուցում 51 միայնակ, կարիքավոր ծերերի եւ հաշմանդամների:</p> <ul style="list-style-type: none"> <li>100 երեխայի և 51 թոշակառուի ամենօրյա սնունդ- տարեկան կազմում է 23439637 դրամ</li> <li>բժշկական և հոգեբանական ծառայություններ - տարեկան 1999590 դրամ</li> <li>ատամնաբուժական ծառայություն-տարեկան 1679753 դրամ</li> <li>հագուստ և կոշիկ - տարեկան 4232672 դրամ</li> <li>մշակութային միջոցառումներ - տարեկան 6116390 դրամ</li> <li>դպրոցահասակ երեխաների տնային պարապմունքների կազմակերպում դպրոցից հետո. շաբաթական 6 օր 100 երեխայի համար, գրեմական պիտույքների, ուսումնական նյութերի, պայուսակների ապահովում, և ձեռարկեստական երեք</li> </ul>

				<p>կենտրոններում ուսուցում (Փայտամշակում, մակրամե, կավագործություն)- տարեկան 9734798 դրամ</p> <ul style="list-style-type: none"> <li>արտասահմանից բեռների ներմուծում (բարերարների ցանկությամբ ուղարկված հագուստ, գրեմական պիտույքներ, խաղալիք)– տարեկան 3420000 դրամ</li> <li>նվիրատվություն. <ul style="list-style-type: none"> <li>ծայրաստիճան կարիքավոր 64 ընտանիքների էլեկտրաէներգիայի և 3 ընտանիքների բնակարանի վարձի վճարում- տարեկան 2088000 դրամ,</li> <li>72 երեխաների ամենօրյա երթևեկության ծախսեր- տարեկան 3119040 դրամ,</li> <li>3 նախկին սաների ապագան ապահովող ուսման վարձերի լրիվ եւ մասնակի վճարում- տարեկան 463200 դրամ,</li> <li>8 ներկայիս սաների՝ ըստ նախասիրության (երաժշտություն, արհեստներ) ուսման վարձերի վճարում - տարեկան 138000 դրամ;</li> </ul> </li> </ul> <p>Ընդամենը 56431080 դրամ (հիսունվեց միլիոն չորս հարյուր երեսունմեկ հազար ութսուն դրամ)</p>					
10	Ձեռք բերվելիք (ներմուծվող) ապրանքների, ծառայությունների և նշխատանքների համառոտ նկարագիրը, ծավալները, նախատեսվող զինը	N	Ամսաթիվ	Պայմանագրի կամ հաշիվ ապրանքագրի համարը	Կազմակերպության կամ մատակարարի անվանումը	Նկարագրությունը	ՀՀ դրամ տարեկան առանց ԱԱՀ	ԱԱՀ-ի չափը տարեկան	Ընդամենը տարեկան
		1	14.08.08	N-263135	" Հայաստանի էլեկտրական ցանցեր" ՓԲԸ	էլեկտրա էներգիայի մատակարարում	1521000	304200	1825200
		2	17.06.04	N010309530 51/3162/4682	«ԱրմենՏել» ՀԶ ՓԲԸ	Հեռախոս. կապի մատակարարում	1080000	216000	1296000
		3	01.01.07	D1-ORR-01/07	«ԿԵԲ» ՍՊԸ	Ինտերնետային կապի ծառայության մատուցում	420000	84000	504000
		4	12.07.06	N 07-0012-6-1	Երևանի «Ջրմուղ Կոյուղի»	Խմելու ջրի մատակարարում	350000	70000	420000
		5	14.12.10	4-263	«Կենտրոն Մաքրություն» ՓԲԸ	Կենցաղային աղբի հեռացման աշխատանքներ	180000	36000	216000

6			«Զիզգագ» ՍՊԸ	Սարքավորումների մատակարարում	525000	105000	630000
7	10.04.06	Պայմանագիր Ա 012.04.06.1231, լրացուցիչ համաձայնագիր N 012 1231 առ 06.12.10	«Հայրուսզագար» ՓԲԸ	Գազի մատակարարում	2810000	562000	3372000
8				Արտասահմանից բեռների ներմուծում	3420000		3420000
9	23.12.10	Ե-243	«Ե-Ի-ՋԻ-Սերվիս» ՍՊԸ	Գազի սարքավորումների տեխնիկական սպասարկում	118928	23786	142714
10	11.11.08	AT-AU-107	«Գրանտ Թորնթոն Ամիո» ՍՊԸ	Աուդիտ	2250000	450000	2700000
11	23.12.08	Մատակարարման պայմանագիր ս/առ 23.12.08, հավելված 2 առ 01.12.10	«Սթար Դիվայդ» ՓԲԸ	Սթերք	19350000	3870000	23220000
12	22.12.09	8	«Վալենսիա» ՀՉ ՍՊԸ	Երեխաների այցելություն Զրաշխարհի (80 եր*4000դր)	320000	64000	384000
13			«Ռիսա» առողջարան ՍՊԸ	Երեխաների հանգիստ «Ռիսա» առողջարանում (60եր*7 օր*6000 դր)	2520000	504000	3024000
14	11.12.09	1887	Տեխնիկական անվտանգություն ազգային կենտրոն	Գազի կաթսային տեխնիկական զննում	33800	6760	40560

4

15	16.12.10	74556	«Ղ-Տելեկոմ» ՓԲԸ	Հեռախոս. կապի մատակարարում	600000	120000	720000
16	14.12.10	8	«Ղարոյնք» ՍՊԸ	Թխվածքաբլիթ, վաֆլի	1200000	240000	1440000
		<b>Ընդամենը</b>			<b>36698728</b>	<b>6655746</b>	<b>43354474</b>
Ներմուծումների բարերարների կողմից ուղարկվող նվերներ, հիմնականում մանկական հագուստ եւ դպրոցական պիտույքներ:							
11	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսեր		<p>Կենցաղային ծախսեր՝ պայմանագրեր «Հայրուսզագար»-ի, «ԱրմենՏել»-ի, «Հայաստանի էլեկտրական Ցանցեր» ընկերությունների, ինչպես նաև «Օրբան» կենտրոնի կահույքի պատվիրման և սարքավորումների զննման պայմանագիր «Զիզգագ» ՍՊԸ կամ այլ կազմակերպությունների հետ:</p> <ul style="list-style-type: none"> <li>• գազ-տարեկան՝ 2810000 դրամ</li> <li>• գազի սարքավորումների տեխնիկական սպասարկում- 01.01.11-31.03.11, 01.11.11-31.12.11-118928 դրամ</li> <li>• տեխնիկական անվտանգություն -33800 դրամ</li> <li>• ջուր՝ 350000 դրամ</li> <li>• էլեկտրաէներգիա՝ 1521000 դրամ</li> <li>• հեռախոս՝ 1680000 դրամ</li> <li>• կահույք՝ 300000 դրամ</li> <li>• սարքավորումների ձեռք բերում՝ 400000 դրամ</li> <li>• կենցաղային աղբի հեռացման աշխատանքներ՝ 180000 դրամ</li> <li>• ինտերնետային կապի ծառայության մատուցում՝ 420000դրամ</li> <li>• շենքի պահպանման ծախսեր 500000 դրամ</li> <li>• գույքահարկ շենքի համար 1078920</li> <li>• գրասենյակային ծախսեր 210000 դրամ</li> <li>• ֆինանսական աուդիտ «Գրանթ Թորնթոն Ամիո» ՍՊԸ-ի կողմից 2250000 դրամ</li> <li>• ապահովագրության ծախսեր «Կասկադ ինչուրանս ապահովագրական» ՓԲԸ- 435000 դրամ</li> <li>• փոստային ծախսեր 180000 դրամ</li> </ul> <p>Ընդամենը 12467648 (տասներկու միլիոն չորս հարյուր վաթսույնյոթ հազար վեց հարյուր քառասունութ դրամ)</p>				


5

12	<p>Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների այլ կազմակերպությունների հետ</p>	<p>1. ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով  2. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն  3. ՀՀ առողջապահության նախարարություն  4. ՀՀ կրթության և գիտության նախարարություն  5. Երևանի քաղաքապետարանի և Երևանի վարչական շրջանների սոցիալական վարչություններ  6. Տեղական ու միջազգային ՀԿ-ներ, որոնք աշխատում են ռիսկի խմբի երեխաների հետ  7. ՀՀ Ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչության անչափահասների կողմից կատարվող հանցագործությունների դեմ պայքարի բաժին</p> <p>«Օրրանը» համագործակցում է նաև սոցիալական ոլորտում գործող հասարակական կազմակերպությունների, ՁԼՄ-ների հետ:</p>
13	<p>Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը</p>	<ul style="list-style-type: none"> <li>• եռամսյակային և տարեկան հաշվետվություններ են ներկայացվում ՀՀ կառավարության Բարեգործական Ծրագրերի Համակարգման Հանձնաժողով</li> <li>• ամսեկան եւ եռամսյակային աշխատանքային ու ֆինանսական հաշվետվություններ են ներկայացվում «Օրրան» ԲՀԿ-ի տնօրենների խորհրդին</li> <li>• գույքագրումը և բաշխումն իրականացվում են «Օրրան» ԲՀԿ –ի գործադիր տնօրենի, հաշվապահի և սոցիալական աշխատողի, ինչպես նաև շահառուների ստորագրություններով ու անձնագրային տվյալներով</li> <li>• եռամսյակային հաշվետվություններ ՀՀ կառավարությանն առընթեր Պետական Եկամուտների Կոմիտե</li> <li>• ֆինանսական աուդիտն իրականացվում է «Գրանթ Թորնթոն Ամի» ՍՊԸ-ի կողմից</li> </ul>

Ծրագրի ղեկավար *Արմեն Կ. Մ.* – Արմինե Հովաննիսյան



*2/12*





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ՔԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**18 փետրվարի 2011 թվականի N Մ-095-Ա  
քաղ. երևան**

**«ՋԵՐՄԻԿ ԱՆԿՅՈՒՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ  
«ՋԵՐՄԻԿ ԱՆԿՅՈՒՆ» ԽՄԲԱՅԻՆ ՏԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի փետրվարի 4-ի N 3/3.8-1/876-11, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2011 թվականի փետրվարի 9-ի N 01/14-3.2-64/610-11, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2011 թվականի փետրվարի 3-ի N ՖԲ/Մարտի-1/593-11, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի փետրվարի 8-ի N ԱԱ/3-4/596-11 և Երևանի քաղաքապետարանի 2011 թվականի փետրվարի 7-ի N 02/34-1374h եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Բարեգործական որակել «Ջերմիկ անկյուն» հիմնադրամի կողմից իրականացվող՝ 4640000 դրամ արժողությամբ «Ջերմիկ անկյուն» խմբային տան ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ «Ջերմիկ անկյուն» հիմնադրամի կողմից (<<, քաղ. Երևան, Սիլիկյան 4-րդ փողոց, տուն 14/16, ՀՎՀՀ՝ 01242562) ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

«ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ի Երևանի ԳԳՄ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00046317) 2009 թվականի մարտի 1-ին կնքված N Կ0120309.7867 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է գազի մատակարարում՝ տարեկան 798952 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

«Երևան ջուր» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01555351) 2009 թվականի մարտի 24-ին կնքված

N 01-0017-2 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատուցում՝ տարեկան 225223 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.


«ԱրմենՏել» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02500052) 2009 թվականի փետրվարի 20-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է հեռախոսակապի ծառայությունների մատուցում՝ տարեկան 144000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի «Արևմուտք» մասնաճյուղի հետ (ՀՎՀՀ՝ 01520882) 2010 թվականի օգոստոսի 30-ին կնքված N 262051 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է էլեկտրաէներգիայի մատակարարում՝ տարեկան 231825 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

«Եվա և Սյուզի» ՄՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01011426) 2010 թվականի դեկտեմբերի 30-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2010 թվականի դեկտեմբերի 30-ից մինչև 2011 թվականի դեկտեմբերի 30-ը «Ջերմիկ անկյուն» տան համար անհրաժեշտ սննդամթերքի և տնտեսական ապրանքների մատակարարում՝ 3240000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

3. «Ջերմիկ անկյուն» հիմնադրամին՝ մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկատվություն այդ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից կատարած աշխատանքների, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների վերաբերյալ, իսկ ծագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ծրագրի կատարման մասին ամփոփ տեղեկություններ:


4. Սույն որոշման ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Երևանի քաղաքապետարան:



ՆԱԽԱԳԱՀ

Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

տնօրեն



«Ջերմիկ անկյուն» հիմնադրամի

Ե.Կիրակոսյանի կողմից

«27» հունվար 2011թ.

«ՋԵՐՄԻԿ ԱՆԿՅՈՒՆ» ԻՄԱՐԱՅԻՆ ՏԱՆ ԾՐԱԳԻՐ

1. Ծրագրի նպատակը

«Ջերմիկ անկյուն» խմբային տան ծրագրի նպատակներն են՝

1. «Ջերմիկ անկյուն» խմբային տունը ստեղծված է որպես համայնքահեն երկարաժամկետ խնամքի տուն՝ նպատակ ունենալով միայնակ, խնամքի կարիք ունեցող հաշմանդամներին ապահովել կացարանով, սննդով, կենսապահովման համար նվազագույն պայմաններով և բժշկական, սոցիալ-հոգեբանական օգնությամբ ու իրավունքների պաշտպանությամբ:
2. «Ջերմիկ անկյուն» խմբային տան նպատակն է հաշմանդամներին հասարակություն ներառման համար ապահովել համապատասխան միջոցառումների իրականացումը՝ կենցաղավարության, սոցիալ-մշակութային, կրթական և այլ հմտությունների ուսուցման միջոցով:
3. «Ջերմիկ անկյուն» խմբային տան նպատակն է, որպես հաշմանդամների վերականգնման այլընտրանքային ծառայությունների տրամադրման տնտեսական առումով առավել արդյունավետ և առաջադեմ տեսակ, ներդնել Հայաստանի Հանրապետությունում:

2. Ծրագրի բարեգործական որակման նպատակը

Ծրագրի շրջանակներում ակնկալում ենք ներկայացված ծրագրի բարեգործական որակել և օգտվել կոմունալ և սննդամթերքի/ու հիգիենիկ պարագաների ձեռք բերման դիմաց վճարների հետ կապված հարկային արտոնություններից:

3. Բարեգործը

«Ջերմիկ անկյան բարեկամներ» ինկորպորացիա  
հասցե՝ ԱՄՆ, 1037, Արիզոնա 85280

4. Ծրագիրը կատարողը

Ծրագիրն իրականացվում է «Ջերմիկ անկյուն» հիմնադրամի կողմից  
Հասցե՝ ք. Երևան, Սիլիկյան թաղ., 4-րդ փող., 1-ին նրբ., 14/16 տուն , ՀՎՀՀ 01242562

5. Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը

Ծրագիրը իրականացվում է Հայաստանում Երևանի Աջափնյակ համայնքում Սիլիկյան թաղ., 4-րդ փող., 1-ին նրբ., 14/16 տուն հասցեում, բնագավառը՝ սոցիալական:

6. Ծրագրի բյուջեն

Ծրագրի ընդհանուր բյուջեն կազմում է 4 640 000 (չորս միլիոն վեց հարյուր քառասուն հազար) դրամ՝ առանց ավելացված արժեքի հարկի և 5 568 000 (հինգ միլիոն հինգ հարյուր վաթսուներեք հազար) դրամ՝ ավելացված արժեքի հարկը ներառյալ:

Կոմունալ վճարումներ՝ (եռամսյակը) 350 000 (երեք հարյուր հիսուն հազար) դրամ՝ առանց ավելացված արժեքի հարկի:

Սննդամթերքի և հիգիենիկ պարագաների համար վճարումներ՝ (եռամսյակը) 810 000 (ութե հարյուր տաս հազար ) դրամ՝ առանց ավելացված արժեքի հարկի:

7. Բարեգործություն ստացողը

«Ջերմիկ անկյուն» խմբային տան բնակիչներն են՝ 18 տարին լրացած, հատուկ կրթահամալիրները ավարտած, մտավոր և ֆիզիկական սահմանափակումներ ունեցող անձիք:

Ընտրությունը կատարվում է Հայաստանի Հանրապետության Կրթության և գիտության նախարարության, հատուկ կրթահամալիրների և «Ջերմիկ անկյուն» հիմնադրամի կողմից նախապես մշակված չափորոշիչների հիման վրա:

Ներկայումս խմբային տանը բնակվում են 12 երիտասարդներ (3 տղա և 9 աղջիկ), որոնք տեղափոխվել են ք. Կապանի թիվ 3 և Փարաքարի թիվ 2 կրթահամալիրներից:

8. Ծրագրի իրականացման տևողությունը

Կից ներկայացված է «Ջերմիկ անկյուն» խմբային տան բնակիչների ցուցակը

Ծրագրի իրականացման ժամկետն է՝ 01 փոտրվար 2011թ. – 30 դեկտեմբեր 2011թ. (շարունակելի):

Իրականացման վայրը՝ «Ջերմիկ անկյուն» խմբային տուն

9. Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական

«Ջերմիկ անկյուն» խմբային տան գործունեության ընթացքում կատարվում են կոմունալ վճարումներ, որի տարեկան հաշվարկը կազմում է 1 400 000 (մեկ միլիոն չորս հարյուր հազար) դրամ (առանց ավելացված արժեքի հարկի):

«Ջերմիկ անկյուն» խմբային տան բնակիչների համար նախատեսված սննդամթերքի և հիգիենիկ պարագաների գնումները տարեկան կազմում են մոտ 3 240 000 (երեք միլիոն երկու հարյուր

2/14

2/14

միջոցների ծավալը

10. Չեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը

քառասուն հազար) դրամ (առանց ավելացված արժեքի հարկի):

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ակնկալվում է հարկային արտոնություն ստանալ հետևյալ գործարքների մասով՝

- Պայմանագիր կնքված գազի (01.03.2009թ. - անժամկետ), որի միջին տարեկան ծախսը կազմում է 7263 խ.մ. (798 952 դրամ՝ առանց ԱԱՀ-ի), էլեկտրոէներգիայի (04.11.2008թ. -անժամկետ), որի միջին տարեկան ծախսը կազմում է 9273 կվտ.ժ. (231 825 դրամ՝ առանց ԱԱՀ-ի), հեռախոսակապի (20.02.2009թ. - անժամկետ), որի միջին տարեկան ծախսը կազմում է 144 000 դրամ՝ առանց ԱԱՀ -ի և ջրի (24.03.2009թ. - անժամկետ), որի միջին տարեկան ծախսը կազմում է 1483 խ.մ. (225 223 դրամ՝ առանց ԱԱՀ-ի) սպասարկման գրասենյակների մատակարարման և սպասարկման դիմաց վճարների,
- Պայմանագիր կնքված «Եվա և Սյուզի» ՍՊԸ –ից (30.12.2010 թ. – 30.12.2011թ.(շարունակելի)) սննդամթերքի և հիգիենիկ պարագաների դիմաց կատարվող վճարների, որի միջին տարեկան ծախսը կազմում է 3 240 000 դրամ՝ առանց ԱԱՀ-ի:

11. Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը

12. Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ

13. Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը


Ամմիջականորեն շահառուների սպառմանը չուղղված ծախսեր չեն նախատեսվում:

Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում է համագործակցել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, Երևան քաղաքի քաղաքապետարանի, Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի և այլ հասարակական ու միջազգային կազմակերպությունների հետ :

«Ջերմիկ անկյուն» հիմնադրամը պարբերաբար և նաև իրենց պահանջով հաշվետվություն է ներկայացնում դոնոր կազմակերպությանը:

- Ծրագրի ավարտից հետո իրականացման մասին եռամսյակային և տարեկան հաշվետվություն կներկայացվի նաև ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին:

2/14





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ  
18 փետրվարի 2011 թվականի N Մ-096-Ա  
քաղ. երևան

«ՀՈՎԱՐԴ ԿԱՐԱԳՅՈՁՅԱՆ» ԲԺՇԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ  
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՏ՝ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑ-  
ՎՈՂ «ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՒԱՆԵՐԻ ԲՈՒԺՄԱՆ (ԱՆՎՃԱՐ  
ԴԵՂՈՐԱՅՔՈՎ ՄՇՏԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ)» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համա-  
կարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների  
նախարարության 2011 թվականի հունվարի 24-ի N 3.8-2/423-11, Հայաստանի Հանրապե-  
տության արդարադատության նախարարության 2011 թվականի հունվարի 21-ի N 01/220-11,  
Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2011 թվականի  
հունվարի 20-ի N ՀԴ/22/204-11, Հայաստանի Հանրապետության կառավարության առըն-  
թեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի հունվարի 20-ի N ԱԱ/3-4/220-11,  
եզրակացությունները, որոշում է.

1. Բարեգործական որակել «Հովարդ Կարապյոզյան» բժշկական բարեգործական  
հասարակական կազմակերպության (ՀՀ, քաղ. Երևան, Նորքի այգիներ, 180, ՀՎՀՀ՝  
01533153) կողմից իրականացվող՝ 20908000 դրամ ընդհանուր արժեքով «Պարբերական  
հիվանդությամբ երեխաների բուժման (անվճար դեղորայքով մշտական ապահովման)»  
բարեգործական ծրագիրը (կցվում է):


2. «Հովարդ Կարապյոզյան» բժշկական բարեգործական հասարակական կազմակեր-  
պությանը՝

1) սույն որոշման առաջին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում  
մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատ-  
ճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական  
ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստա-  
նի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատ-  
վող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով  
Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-  
ման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում նշված


ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը  
մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի  
ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման  
մասին:

3. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն,  
Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապե-  
տության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջա-  
պահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարության առըն-  
թեր պետական եկամուտների կոմիտե, Երևանի քաղաքապետին և Հայաստանի Հանրապե-  
տության Արագածոտնի, Արարատի, Արմավիրի, Գեղարքունիքի, Լոռու, Կոտայքի, Շիրակի,  
Սյունիքի, Վայոց ձորի, Տավուշի մարզպետներին:



Ա. ՏԵՐ - ՄԻՄՈՆՅԱՆ





«Հովարդ Կարագյոզյան» ԲԲԿԿ

տնօրեն... Կամո Տեր-Պետրոսյանի կողմից

«0.9» 2011թ.

«ՀՈՎԱՐԴ ԿԱՐԱԳՈՐԾԱԿԱՆ» ԲԺՇԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՄԱՐԱԿԱՎԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՏ 2011 Ք. ԸՆԹԱՑՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՆԿՆԵՐԻ ԲՈՒԺՄԱՆ (ԱՆՎՃԱՐ ԴԵՂՈՐԱՅՔՈՎ ՄՇՏԱԿԱՆ ԱՊԱՅՈՎՄԱՆ)» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

1	Ծրագրի նպատակը	Ծրագրի նպատակն է Պարբերական հիվանդությանը տառապող երեխաների մշտական դեղորայքով ապահովումը երիկամների վնասահաս ամիլոիդոզ-երիկամային անբավարարությունը և հաշմանդամությունը կանխելու համար:
2	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Ծրագրի շրջանակներում, օրենքով սահմանված կարգով, օգտվել հարկային արտոնություններից
3	Բարեգործը	Հովարդ Կարագյոզյան Հիշատակի ընկերակցություն (ԱՄՆ – Նյու-Յորք)
4	Ծրագիրը կատարողը	«Հովարդ Կարագյոզյան» բժշկական բարեգործական հասարակական կազմակերպություն՝ իրավաբանական հասցեն - ք. Երևան, Նորքի Այգիներ-180, հարկ վճարողի հաշվառման համարը՝ ՀՎՀՀ-01533153, «Արաբկիր» բժշկական համալիր, ՀՀ առողջապահության նախարարության Պարբերական հիվանդության մանկական հանրապետական կենտրոն:

2/12

✓

5	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Ծրագիրն իրականացվելու է ՀՀ բոլոր մարզերում, Երևան քաղաքում, ԼՂՀ-ում, հիմնական հետազոտությունները, բժշկական հսկողությունը և դեղորայքի բաշխումը կատարվելու է «Արաբկիր» բժշկական համալիրի Պարբերական հիվանդության մանկական հանրապետական կենտրոնի մասնագետների կողմից:
6	Ծրագրի բյուջեն	Ծրագիրը ֆինանսավորվում է ամերիկյան Հովարդ Կարագյոզյան հիշատակի ընկերակցության կողմից, որի ընդհանուր արժեքն է 20.908.000 դրամ:  դեղորայք - «Կոլխիցին» 1 մգ - 440.000 հաբ՝ 20.908.000 դրամ (ներառյալ տրանսպորտային ծախսերը) (Ձեռք է բերվելու Ֆրանսիայում)
7	Բարեգործություն ստացողը	Շահառուներն են ՀՀ բոլոր մարզերի, ԼՂՀ-ի և Ջավախքի պարբերական հիվանդությամբ հիվանդ՝ կենտրոնում հաշվառված և 2011թ. ընթացքում նոր հայտնաբերվող, 0-18 տարեկան երեխաները:
8	Ծրագրի իրականացման տևողությունը	Ծրագիրը շարունակական է: Աշխատանքի նշված ծավալներն ու ծախսերը նախատեսված են 2011թ. հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ժամկետի համար:
9	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	2011թ. ծրագրով նախատեսվում է պարբերական հիվանդության մանկական հանրապետական կենտրոնում հաշվառված 1887 և նոր հայտնաբերված մոտ 300 0-18 տարեկան հիվանդների ընթացիկ հսկողություն և բուժում (անվճար մշտական դեղորայքի բաշխում) ամբողջ տարվա ընթացքում:
10	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայու-թյունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	«Հովարդ Կարագյոզյան» ԲԲԿԿ Ֆրանսիայից գնելու է 440.000 հաբ «Կոլխիցին» 1մգ դեղորայքը, Փարիզ-Երևան օդանավով տեղափոխելու է Երևան և հանձնելու պարբերական հիվանդության մանկական հանրապետական կենտրոնին՝ հիվանդներին անվճար բաշխելու համար: Մոտ 20.908.000 դրամ ընդհանուր արժողությամբ 440.000 հաբ «Կոլխիցին» 1մգ դեղորայքի ներմուծում որպես հումանիտար բեռ:


2/12

✓

11	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Տրանսպորտային ծախսեր՝ ընդհանուր գումարի 3%-ի չափով:
12	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Ծրագիրը համաձայնեցված է ՀՀ և ԼՂՀ առողջապահության նախարարությունների, «Արաբկիր» բժշկական համալիրի և Պարբերական հիվանդության մանկական հանրապետական կենտրոնի տնօրինությունների հետ:
13	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	ՀՀ և ԼՂՀ առողջապահության նախարարություններ, ՀՀ մարզպետարանների առողջապահության վարչություններ, պարբերական հիվանդությամբ հիվանդ երեխաների ծնողներ, «Հովարդ Կարագյոզյան» ԲԲԿ և «Արաբկիր» բժշկական համալիրի տնօրինություններ:

2/12

✓





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 փետրվարի 2011 թվականի N Մ-097-Ա  
քաղ. երևան

«ՀՈՎԱՐԴ ԿԱՐԱԳՅՈՂՅԱՆ» ԲԺՇԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ  
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ՝ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑ-  
ՎՈՂ «ԵՐԵՒԱՆԵՐԻ ԱՆՎՃԱՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ  
ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համա-  
կարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների  
նախարարության 2011 թվականի փետրվարի 4-ի N 3/3.8-1/875-11, Հայաստանի Հանրապե-  
տության արդարադատության նախարարության 2011 թվականի հունվարի 21-ի N 01/229-11,  
Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2011 թվականի  
հունվարի 20-ի N ՀԴ/22/203-11, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առըն-  
թեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի հունվարի 20-ի N ԱԱ/3-4/217-11,  
Երևանի քաղաքապետի 2011 թվականի հունվարի 25-ի N 02/34-489-հ, Հայաստանի  
Հանրապետության Շիրակի մարզպետի 2011 թվականի հունվարի 21-ի N 01/174-11, Սյունիքի  
մարզպետի 2011 թվականի հունվարի 20-ի N 01/118-11 ու Լոռու մարզպետի 2011 թվականի  
հունվարի 19-ի N 101/104.3.2/189-11 եզրակացությունները, **որոշում է.**

1. Բարեգործական որակելի «Հովարդ Կարագոյան» բժշկական բարեգործական  
հասարակական կազմակերպության (ՀՀ, քաղ. Երևան, Նորքի այգիներ, 180, ՀՎՀՀ՝  
01533153) կողմից իրականացվող՝ 435556000 դրամ ընդհանուր արժեքով «Երեխաների  
անվճար բժշկական օգնություն» բարեգործական ծրագիրը (կցվում է):


2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպա-  
տակով «Հովարդ Կարագոյան» բժշկական բարեգործական հասարակական կազմակեր-  
պության կողմից կնքված՝ ստորև նշված գործարքն անմիջականորեն կապված է նշված  
ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝ «ԷՍԶԵԹ Ֆարմա»  
ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00433863) 2011 թվականի հունվարի 14-ին կնքված՝ N 01/2011  
պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ատամնաբուժական պարագանե-  
րի մատակարարում՝ 6142500 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Հովարդ Կարագոյան» բժշկական բարեգործական հասարակական կազմակեր-  
պությանը՝

1) սույն որոշման առաջին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում  
մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատ-  
ճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական  
ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստա-  
նի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատ-  
վող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.


2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով  
Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-  
ման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում նշված  
ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը  
մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի  
ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման  
մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն,  
Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապե-  
տության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջա-  
պահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առըն-  
թեր պետական եկամուտների կոմիտե, Երևանի քաղաքապետին, Հայաստանի Հանրապե-  
տության Շիրակի, Սյունիքի, Լոռու մարզպետներին, Գյումրու, Վանաձորի ու Գորիսի  
քաղաքապետներին:



Ս. ՏԵՐ - ՍԻՄՈՆՅԱՆ

«Հովարդ Կարագյոզյան» ԲԲԿ  
 տնօրեն *[Signature]* Կանոնադրության կողմից



*[Signature]* 2011.թ.

«ՀՈՎԱՐԴ ԿԱՐԱԳՅՈՋՅԱՆ» ԲԺՇԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ 2011թ. ԸՆԹԱՑՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԵՐԵՒԱՆՆԵՐԻ ԱՆՎՃԱՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

1	Ծրագրի նպատակը	Հայաստանի և ԼՂՀ տարբեր մարզերի մինչև 14 տարեկան երեխաների անվճար ատամնաբուժական և ակնաբուժական օգնություն ստանալու հնարավորության ապահովումը:
2	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Ծրագրի շրջանակներում, օրենքով սահմանված կարգով, օգտվել հարկային արտոնություններից
3	Բարեգործը	Հովարդ Կարագյոզյան Հիշատակի Ընկերակցություն (ԱՄՆ – Նյու-Յորք)
4	Ծրագիրը կատարողը	«Հովարդ Կարագյոզյան» բժշկական բարեգործական հասարակական կազմակերպություն «Հովարդ Կարագյոզյան» բժշկական բարեգործական հասարակական կազմակերպության միջոցներով հիմնված 6 մասնաճյուղ մասնական ատամնաբուժական դարմանատները և 6 ակնաբուժական կաբինետները, որտեղ ապամանագրային հիմունքներով աշխատում են կազմակերպության կողմից վարձանվաճող, տվյալ քաղաքներում բնակվող 29 ատամնաբույժներ, 7 ակնաբույժներ, 52 միջին բուժաշխատողներ (բուժքույրեր), 10 կրտսեր բուժաշխատողներ, 6 վարչական և 31 ժամանակ աշխատակիցներ: Դարմանատներից 3-ը (Երևանի 2-ը և Վանաձորի) աշխատում են երկհերթ, իսկ 3-ը (Գյումրիի, Գորիսի և Ստեփանակերտի) մեկ հերթով: Դարմանատներում գործում են 20 ընդհանուր ատամնաբուժական, 6 ակնաբուժական, 5 ռենտգեն, 6 ախտահանման կաբինետներ և 6 գրանցման բաժիններ՝ բոլորն էլ հագեցած ժամանակակից սարքավորումներով, գործիքներով և բուժամյութերով:

*[Handwritten mark]*

		«Հովարդ Կարագյոզյան» բժշկական բարեգործական հասարակական կազմակերպության իրավաբանական հասցեն է՝ ք.Երևան, Նորքի Այգիներ-180, հարկ վճարողի հաշվառման համարը՝ 3433-01533153:																										
5	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	ՀՀ մայրաքաղաք Երևանում, Շիրակի մարզի Գյումրի, Սյունիքի մարզի Գորիս, Լոռու մարզի Վանաձոր և ԼՂՀ Ստեփանակերտ քաղաքներում առողջապահության բնագավառում																										
6	Ծրագրի բյուջեն	<p>Ծրագիրն ամբողջությամբ ֆինանսավորվում է ամերիկյան Հովարդ Կարագյոզյան Հիշատակի ընկերակցության կողմից:</p> <p>2011թ. համար նախատեսված է 435.556.000 դրամի ծախսեր՝ ըստ եռամսյակների բաշխված է հավասարաչափ՝ 25-ական տոկոս (108.889.000-ական դրամ), իսկ ըստ ուղղությունների բաշխված է հետևյալ ձևով.</p> <table border="1" style="width: 100%; border-collapse: collapse;"> <thead> <tr> <th></th> <th style="text-align: right;">Դրամ</th> </tr> </thead> <tbody> <tr> <td>ա) բուժ.սարքավորումներ, գործիքներ, պահեստամասեր, կահույք, ծախսվող ատամնաբուժական պարագաներ, դեղորայք, ակնոցներ, օպտիկական ուսանյակներ.</td> <td style="text-align: right;">104 724 000</td> </tr> <tr> <td>բ) բուժանձնակազմի աշխատավարձեր, սոցիալական վճարներ.</td> <td style="text-align: right;">253 333 000</td> </tr> <tr> <td>գ) վարչական աշխատակիցների աշխատավարձեր, սոցվճարներ</td> <td style="text-align: right;">33 831 000</td> </tr> <tr> <td>դ) կոմունալ ծախսեր (6 կլինիկաների էլեկտրաէներգիա, ջուր, հեռախոսավարձ, ինտերնետ, աղբահանություն, գազ).</td> <td style="text-align: right;">11 880 000</td> </tr> <tr> <td>ե) տրանսպորտային ծախսեր</td> <td style="text-align: right;">3 960 000</td> </tr> <tr> <td>զ) շենքերի պահպանության ծախսեր</td> <td style="text-align: right;">5 040 000</td> </tr> <tr> <td>է) գրասենյակային ծախսեր</td> <td style="text-align: right;">2 232 000</td> </tr> <tr> <td>ը) աշխատակիցների բժշկական ապահովագրության, շենքերի ու ավտոմեքենաների ապահովագրության, աղմիհիստրատիվ և աուդիտորական ծախսեր</td> <td style="text-align: right;">12 060 000</td> </tr> <tr> <td>թ) գործուղման ծախսեր</td> <td style="text-align: right;">1 332 000</td> </tr> <tr> <td>ժ) ճառագայթային անվտանգության, սանիտարական վերահսկողության ծախսեր</td> <td style="text-align: right;">2 556 000</td> </tr> <tr> <td>ժա) գույքահարկ, հողի հարկ, բանկային գործառույթների և չնախատեսված ծախսեր</td> <td style="text-align: right;">4 608 000</td> </tr> <tr> <td style="text-align: center;"><b>Ընդամենը</b></td> <td style="text-align: right;"><b>435 556 000</b></td> </tr> </tbody> </table>		Դրամ	ա) բուժ.սարքավորումներ, գործիքներ, պահեստամասեր, կահույք, ծախսվող ատամնաբուժական պարագաներ, դեղորայք, ակնոցներ, օպտիկական ուսանյակներ.	104 724 000	բ) բուժանձնակազմի աշխատավարձեր, սոցիալական վճարներ.	253 333 000	գ) վարչական աշխատակիցների աշխատավարձեր, սոցվճարներ	33 831 000	դ) կոմունալ ծախսեր (6 կլինիկաների էլեկտրաէներգիա, ջուր, հեռախոսավարձ, ինտերնետ, աղբահանություն, գազ).	11 880 000	ե) տրանսպորտային ծախսեր	3 960 000	զ) շենքերի պահպանության ծախսեր	5 040 000	է) գրասենյակային ծախսեր	2 232 000	ը) աշխատակիցների բժշկական ապահովագրության, շենքերի ու ավտոմեքենաների ապահովագրության, աղմիհիստրատիվ և աուդիտորական ծախսեր	12 060 000	թ) գործուղման ծախսեր	1 332 000	ժ) ճառագայթային անվտանգության, սանիտարական վերահսկողության ծախսեր	2 556 000	ժա) գույքահարկ, հողի հարկ, բանկային գործառույթների և չնախատեսված ծախսեր	4 608 000	<b>Ընդամենը</b>	<b>435 556 000</b>
	Դրամ																											
ա) բուժ.սարքավորումներ, գործիքներ, պահեստամասեր, կահույք, ծախսվող ատամնաբուժական պարագաներ, դեղորայք, ակնոցներ, օպտիկական ուսանյակներ.	104 724 000																											
բ) բուժանձնակազմի աշխատավարձեր, սոցիալական վճարներ.	253 333 000																											
գ) վարչական աշխատակիցների աշխատավարձեր, սոցվճարներ	33 831 000																											
դ) կոմունալ ծախսեր (6 կլինիկաների էլեկտրաէներգիա, ջուր, հեռախոսավարձ, ինտերնետ, աղբահանություն, գազ).	11 880 000																											
ե) տրանսպորտային ծախսեր	3 960 000																											
զ) շենքերի պահպանության ծախսեր	5 040 000																											
է) գրասենյակային ծախսեր	2 232 000																											
ը) աշխատակիցների բժշկական ապահովագրության, շենքերի ու ավտոմեքենաների ապահովագրության, աղմիհիստրատիվ և աուդիտորական ծախսեր	12 060 000																											
թ) գործուղման ծախսեր	1 332 000																											
ժ) ճառագայթային անվտանգության, սանիտարական վերահսկողության ծախսեր	2 556 000																											
ժա) գույքահարկ, հողի հարկ, բանկային գործառույթների և չնախատեսված ծախսեր	4 608 000																											
<b>Ընդամենը</b>	<b>435 556 000</b>																											

*[Handwritten mark]*

7	Բարեգործություն ստացողը	Շահառուներն են ՀՀ մայրաքաղաք Երևանում, Շիրակի մարզի Գյումրի, Սյունիքի մարզի Գորիս, Լոռու մարզի Վանաձոր և ԼՂՀ Ստեփանակերտ քաղաքներում բնակվող մինչև 14 տարեկան բոլոր երեխաները, ովքեր կամավոր դիմում են մեր դարձնատներ ատամնաբուժական և ակնաբուժական օգնություն ստանալու նպատակով: Սպասարկվում են նաև նույն մարզերի սահմաններում տվյալ քաղաքների տարածքից դուրս բնակվող հաշմանդամ, ծնողազուրկ և սոցիալապես անապահով ընտանիքների մինչև 14 տարեկան երեխաները:
8	Ծրագրի իրականացման տևողությունը	Ծրագիրը շարունակական է: Աշխատանքի նշված ծավալներն ու ծախսերը նախատեսված են 2011թ. հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ժամկետի համար:
9	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	<p>Ծրագրի շրջանակներում 2011թ. նախատեսվում է լիարժեքորեն ապահովել գործող ատամնաբուժական կլինիկաներում հաշվառված 96236 երեխաների ընթացիկ ատամնաբուժական օգնության և կանխարգելիչ միջոցառումների անվճար իրականացումը: Տարվա ընթացքում նոր հաշվառվող 11.000-12.000 երեխաների լրիվ ատամնաբուժական սանացիայի և կանխարգելիչ միջոցառումների անվճար իրականացումը:</p> <p>Ակնաբուժական 6 կաթինետներում նախատեսվում է հաշվառված 6345 դիսպանսեր հիվանդների ընթացիկ ակնաբուժական օգնության և կանխարգելիչ միջոցառումների իրականացում, նոր հաշվառվող 1.600-1.700 երեխաների ակնաբուժական մանրակրկիտ հետազոտությունների և բուժման կազմակերպում, ակնոցի անհրաժեշտություն ունեցող 1.650-1.750 երեխաների անվճար ակնոցներով ապահովում, օպտիկական ոսպնյակների անհրաժեշտություն ունեցող 15-20 երեխաների անվճար ոսպնյակներով ապահովում և մշտական դեղորայքային բուժման անհրաժեշտություն ունեցող 1100-1200 երեխաների անվճար դեղորայքով և համապատասխան բուժական պրոցեդուրաներով ապահովում:</p> <p>Ընդհանուր առմամբ 2011թ. նախատեսվում է 110.000-112.000 ատամնաբուժական և 24.000-25.000 ակնաբուժական հաճախումների լիարժեք ապահովում:</p>

2/13 ✓

10	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	<p>2011թ. բուժ սարքավորումների, գործիքների, դեղորայքի, ակնոցների և ծախսվող ատամնաբուժական պարագաների մատակարարման համար պայմանագրեր ենք կնքելու ԱՄՆ «Շայն» ընկերության, Երևանում «Էլեքս» ՓԲԸ, «Էսգեթ Ֆարմա» ՍՊԸ, ՀԶ «Լաեկա» ՍՊԸ, «Մայր Օպտիկ» ՍՊԸ հետ:</p> <p>ԱՄՆ-ից պիտի գնվեն 35.820.000 դրամի բժշկական պարագաներ և դեղորայք, որոնք Երևան են տեղափոխվելու Միացյալ Հայկական Ֆոնդի օդանավերով, իսկ Երևանում պիտի գնվեն 68.904.000 դրամի բժշկական պարագաներ, սարքեր, կահույք, դեղորայք, ակնոցներ, ոսպնյակներ:</p> <p>«Էսգեթ Ֆարմա» ընկերության հետ 14.01.2011թ. կնքված ատամնաբուժական դեղամիջոցների մատակարարման 001/2011 պայմանագիր 6.142.500 դրամ ընդհանուր արժողության, առանց ԱԱՀ-ի: 20%- ԱԱՀ-ի կազմում է 1.228.500 դրամ:</p> <p>Հումանիտար բեռների ստացում:</p>
11	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	74.943.000 դրամ (որից 33.831.000 դրամը վարչական աշխատակիցների աշխատավարձեր և 41.112.000 դրամը՝ տնտեսական), որը կազմում է ծրագրի համար նախատեսված ընդհանուր ծախսերի (435.556.000) 17,21%:
12	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Ծրագիրը համաձայնեցված է ՀՀ և ԼՂՀ առողջապահության նախարարությունների, Երևանի քաղաքապետարանի և Շիրակի, Սյունիքի, Լոռու մարզապետարանների առողջապահության վարչությունների հետ:
13	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	ՀՀ օրենսդրության շրջանակներում ՀՀ և ԼՂՀ առողջապահության նախարարություններ, Երևանի քաղաքապետարանի և Շիրակի, Լոռու, Սյունիքի մարզապետարանների առողջապահության վարչություններ, ՀՀ հարկային ծառայություն, ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգող հանձնաժողով, ամենամյա աուդիտ, բուժվող երեխաների ծնողներ:

2/13 ✓



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ՔԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Շ ՈՒ Մ**

**18 փետրվարի 2011 թվականի N Մ-098  
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ՔԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010  
ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 4-Ի N Մ-317-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ  
ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ  
(Հայկական Կարմիր խաչի ընկերություն)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի փետրվարի 4-ի N 3/3.8-1/874-11, Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության 2011 թվականի փետրվարի 18-ի N Ե-08/306 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի փետրվարի 17-ի N ԱԱ/3-4/871-11 եզրակացությունները, **ո ր ո շ ու մ է.**

1. Սահմանել, որ հայկական Կարմիր խաչի ընկերության կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի հունիսի 4-ի հայկական Կարմիր խաչի ընկերության կողմից իրականացվող «Կառուցենք անվտանգ տեղական համայնքներ Հարավային Կովկասում» N Մ-317-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «ԼՈՒԷ» փրկարար ջոկատ ՀԿ-ի հետ (ՀՎՀՀ՝ 06404484) 2011 թվականի հունվարի 25-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է «Կառուցենք տեղական համայնքներ Հարավային Կովկասում» ծրագրի շրջանակներում Շիրակի մարզի 9 շահառու համայնքներում հիմնված համայնքային թիմերի համար փրկարարության հիմունքներ և առաջին օգնության թեմաներով թարմացման դասընթաց ու ուսումնական

խաղ վարժանքների իրականացում՝ 827550 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

2) «ԱԳԱՄԻԳ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 03010379) 2011 թվականի հունվարի 27-ին կնքված՝ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է «Կառուցենք տեղական համայնքներ Հարավային Կովկասում» ծրագրի շրջանակներում անցկացվող սեմինարի մասնակիցների կեցության, սննդի, սուրճի, ընդմիջման և դահլիճի ապահովում՝ 975000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարություն, Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և .



Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 փետրվարի 2011 թվականի N Մ-099-Ա  
քաղ. Երևան

«ԵՐԵՎԱՆԻ ԲԵՆԻԱՄԻՆ ԺԱՄԿՈՉՅԱՆԻ ԱՆՎԱՆ N 119 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ  
ՊՈԱԿ»-Ի ԾՊԵՂՆԱՅԻՆ ՀԱՐԿԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի հունվարի 27-ի N 3/3.8-1/632-11, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2011 թվականի փետրվարի 2-ի N 01/453-11, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2011 թվականի հունվարի 26-ի N 04/07.2/473-11, Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի հունվարի 25-ի N ԱԱ/3-4/323-11 և Երևանի քաղաքապետի 2011 թվականի փետրվարի 1-ի N 02/12-631 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Բարեգործական որակել «Երևանի Բենիամին Ժամկոչյանի անվան N 119 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվող՝ 90000 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ «Երևանի Բենիամին Ժամկոչյանի անվան N 119 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի ծպեղնային հարկի կառուցում» ծրագիրը (կցվում է):


2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Երևանի Բենիամին Ժամկոչյանի անվան N 119 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Տիգրան Մեծ 64, ՀՎՀՀ՝ 00414389) կնքված՝ ստորև նշված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ՀՈՎԱՇ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 09210409) 2011 թվականի հունվարի 21-ին կնքված՝

N 01/21 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է տանիքի ջրամեկուսիչ շերտի հավաքում, տանիքի պատրաստում իտալական ճկուն կղմինդրից՝ «ստանդարտ» տեսակի շագանակագույն նյութով՝ 49721380 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Երևանի Բենիամին Ժամկոչյանի անվան N 119 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ին ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտե և Երևանի քաղաքապետարան:



Ա.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



1	Մրագրի նպատակը	«Նրևանի Բենիամին Ժամկոչյանի անվան No119 ավագ դպրոց ՊՈԱԿ»-ի շենքի տանիքի ծաղեղնային հարկի կառուցում, որը կավելացնի կրթական գործունեության համար հրատապ անհրաժեշտ մակերես:
2	Մրագրի բարեգործական նպատակը	Մրագիրը բարեգործական որակի էր նպատակը՝ օրենքով սահմանված կարգով ՀՀ հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների և այլ օրենքով սահմանված արտոնություններից օգտվելն է, ինչը անհրաժեշտ է առաջարկվող նախագծի սահմանափակ լինելու պատճառով:
3	Բարեգործը	Ֆրանկոֆոն քաղաքապետերի միջազգային ասոցիացիա AIMF - Association Internationale des Maires Francophones 9, rue des Halles 75001 Paris Tél. : 01 44 88 22 88 Fax : 01 40 39 06 62 Courriel : <a href="mailto:sp@aimf.asso.fr">sp@aimf.asso.fr</a>
4	Մրագիրը կատարողը	Նրևանի Ժամկոչյանի անվան հ.մ. 119 ավագ դպրոց ՊՈԱԿ Դպրոցի հասցեն - 0005, Նրևան, Սարգսյան Մեծ, 64 Էլեկտրոնային փոստ - 119@mail.ru Բանկային տվյալները - Հայկոնոմբանկի Էրեբունի մասնաճյուղ, հ/հ 163068555305 Հարկային կոդը - 00414389 Հեռախոս - 010573740; 010573730 Տեքստ - Հովհաննես Հարությունի Կարապետյան
5	Մրագրի իրականացման վայրը և բնագավառը	«Նրևանի Բենիամին Ժամկոչյանի անվան No119 ավագ դպրոց ՊՈԱԿ», կրթության բնագավառ
6	Մրագրի բյուջեն	Ֆրանկոֆոն քաղաքապետերի միջազգային ասոցիացիա AIMF 90.000 եվրոյին համարժեք դրամ - փետրվար 2011թ.
7	Բարեգործություն ստացողը	ՀՀ կրթության և գիտության նախարարություն

11-2/4

8	Մրագրի իրականացման տևողությունը	120 օր, 01.03.2011թ. – 01.07.2011թ.
9	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Նախատեսվում է դպրոցական շենքի ծաղեղնային հարկի կառուցում, տանիքի պատրաստում իտալական ձկուն կղմինդրից ( ստանդարտ տեսակի շականակագույն նյութով ), տանիքի ջր-րամակուսիչ շերտի հավաքում 90.000 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, ժամկետը՝ 120 օր (01.03.2011թ. – 01.07.2011թ)
10	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Իրականացվելու են շինարարական աշխատանքներ. դպրոցի ծաղեղնային հարկի կառուցում, տանիքի ջրամակուսիչ շերտի հավաքում տանիքի պատրաստում իտալական ձկուն կղմինդրից ( ստանդարտ տեսակի շականակագույն նյութով ) 90.000 եվրոյին համարժեք դրամով: Շինարարական աշխատանքը կիրականացվի Հովաթ ՄՊԸ-ի կողմից. ՀՈՎԱՇ ՄՊԸ - ՀՎՀՀ 09210409 – ք.Գորիս, Անկախության, 104 Գործունեության հասցեն- ք.Նրևան, Թումանյան, 8 ՀՀ160485489514 <ՎՏԲ Հայաստան Բանկ > ՓԲԸ Տեքստ՝ Ա.Հովհաննեսյան
11	Մրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Չի նախատեսվում
12	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	ՀՀ արտաքին գործերի նախարարություն, ՀՀ կրթության և գիտության նախարարություն
13	Մրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ՀՀ կրթության և գիտության նախարարություն

11-2/4



Ն Ա Խ Ա Յ Շ Ի Վ

ԵՐԵՎԱՆԻ N119 ԴՊՐՈՑԻ ԶԵՌՆԱՅԱՐԿԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ 21.2/4

V	Աշխատանքների անվանումը	Չափի միավոր	Քանակը	Միավորի արժեքը	Ընդամենը արժեքը /հազար դրամ/	Աշխատանքներ /հազար դրամ/
						833
1	Տանիքի քանդում					
2	Բետոնի ծածկ	մ3	37,5	33,33	1 250,00	
3	Ամրան	տ	3,75	570,00	2 137,50	
4	Տեֆոնդի փռում	մ2	780	1,92	1 500,00	312,00
5	Բետոնից հարթ շերտի ստեղծում 5 սմ	մ2	650	2,00	1 300,00	650,00
6	Մետաղական ֆերմաների կառուցում	մ	727	8,75	6 361,25	
7	Կավարամած	մ3	17,5	104,17	1 822,92	
8	Զրհեռ	մ	138	2,50	345,00	
9	Զրհեռի կեռ	հատ	75	0,83	62,50	
10	Խողովակ	մ	150	3,00	450,00	
11	Ծունկ	հատ	36	2,08	75,00	
12	Ֆաներա OSB	մ2	1230	3,46	4 257,69	
13	Հիդրոմեկուսիչ թաղանթ Սեֆտի	մ2	200	3,46	692,31	
14	Իտալական բիտումային հիմքով կղմինդր	մ2	1235	6,54	8 075,00	
15	Գոգնոցներ S1, S5, S8				750,00	
17	Պատուհան				965,79	357,21
	Աշխատանքը		1100	9,0		9 867,0
	Ընդամենը				30044,957	12019,21
	Զեղչ(Ներմուծված ապրանքների)		20	%	2905	
	Ընդամենը				27139,957	
	Նյութ *1,05*1,05*1,02				30520,24	
	Աշխատավարձ				12019,21	
	Ընդամենը				42539,45	

Վերադիր ծախսեր	5,3%	2254,59
Ընդամենը		44794,04
Շահույթ	11%	4927,34
Ընդամենը		49721,38
ԱԱՀ	20%	9944,28
Վճարման ենթակա է		59665,66

Արժեքը Եվրոյով 123000,0

Մեկ քառակուսի մետրի արժեքը Եվրոյով 189200,0

Պատվիրատու



Կապալառու

«ՀՈՎԱՇ» ՍՊԸ

ք. Գորիս, Անկախության փ. 104

Տնօրեն

Սասնազետ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 փետրվարի 2011 թվականի N Մ-100

«ՕՐՐԱՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ  
ԿՈՂՄԻՑ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹՓԱՑՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՕՐՐԱՆ-  
ՎԱՆԱԾՈՐ» ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԿԱՐԻՔԱՎՈՐ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ»  
ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի փետրվարի 9-ի N 3/3.8-1/1073-11, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2011 թվականի փետրվարի 9-ի N 01/14-3.2-64/606-11, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2011 թվականի փետրվարի 8-ի N ՖԲ/ՄարդՄԽ-2/712-11, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2011 թվականի փետրվարի 11-ի N ՀԲ/22/789-11, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2011 թվականի փետրվարի 4-ի N 03/07.2/798-11, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի փետրվարի 9-ի N ԱԱ/3-4/666-11, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության 2011 թվականի փետրվարի 14-ի N 35/196 ու Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2011 թվականի փետրվարի 8-ի N 101/104.3.2/528-11 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**


1. Բարեգործական որակել «Օրրան» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից (ՀՀ, քաղ. Երևան, առաջին Եկմայյան 6, ՀՎՀՀ՝ 02552842) 2011 թվականին իրականացվող՝ 35152948 դրամ ընդհանուր արժեքով «Օրրան-Վանաձոր» օգնություն կարիքավոր ընտանիքներին» ծրագիրը (կցվում է):
2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Օրրան» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից կնքված ստորև նշված գործարքներն անմիջականորեն կապված են նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝
  - 1) «ԱրմենՏել» ՓԲԸ-ի Լոռու Տ/Կ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02500052) 2009 թվականի նոյեմբերի 12-ին կնքված՝ N 114596139 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2011 թվականի փետրվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում հեռախոսակապի ծառայությունների մատուցում՝ 660000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.
  - 2) «Լոռի-Ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 06934743) 2010 թվականի հունվարի 1-ին կնքված՝ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2011 թվականի փետրվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում խմելու ջրի մատակարարում՝ 240000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի «Դեբեդ» մասնաճյուղի հետ (ՀՎՀՀ՝ 01520882) 2011 թվականի հունվարի 26-ին կնքված՝ N 000502 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2011 թվականի փետրվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում էլեկտրաէներգիայի մատակարարման ծառայությունների մատուցում՝ 1020000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. Առաջարկել «Օրրան» բարեգործական հասարակական կազմակերպությանը՝  
1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն՝ ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանություն ու Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետին:



Ս. ՏԵՐ - ՍԻՄՈՆՅԱՆ

«Օրրան» բարեգործական հասարակական կազմակերպություն  
տնօրեն Արմինե Հովհաննիսյան




**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ**  
**«ՕՐՐԱՆ-Վանածոր» օգնություն կարիքավոր ընտանիքներին**

2011թ.


1	Ծրագրի նպատակները	Օգնել ֆինանսական դժվար կացությունում հայտնված ընտանիքների երեխաներին, նրանց շրջանում վերացնել մուրացկանությունը, աջակցել աղքատության մեջ գտնվող ընտանիքներին:
2	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	«Վ հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից օգտվելը:
	Բարեգործը (բարեգործները)	Բաց Հասարակության Ինստիտուտի Ծանուցվածության Հիմնադրամ, VivaCell-MTS, Հայաստանում և ԱՄՆ-ում «Օրրան» բարեգործական հասարակական կազմակերպություն, Հովհաննիսյանների ընտանիք: Գրիգորյան բարեգործական հիմնադրամ (Անգլիա), Զերարդ Գաֆեսճյան ընտանիքի հիմնադրամ (ԱՄՆ)
4	Ծրագրի կատարողը	«Օրրան» բարեգործական հասարակական կազմակերպություն ՀՎՀՀ 02552842 Առաջին Եկմայյան 6 Երևան, Հայաստանի Հանրապետություն Հեռ. 53-51-67
5	Ծրագրի իրականացման վայրը (վայրերը), բնագավառը	Հայաստանի Հանրապետություն, Վանածոր Սոցիալական բնագավառ
6	Ծրագրի բյուջեն	Ծրագրի բյուջեն 35152948 (երեսուհինգ միլիոն հարյուր հիսուներկու հազար ինը հարյուր քառասունութ դրամ)
7	Բարեգործություն ստացողը	• 6-16 տարեկան 54 երեխա, ովքեր ապրում են սոցիալական ծայրահեղ դժվարություններ ունեցող, մուրացկանության շեմին գտնվող ընտանիքներում: Մի շարք երեխաներ աշխատում և մուրում են փողոցում: Երեխաների մեծ մասը միակողմանի ծնողազուրկ են, հաշմանդամ, բաժանված կամ ազատագրված ծնողներ ունեն:

		Շահառուների ընտրությունը կատարում է սոցիալական աշխատողը՝ նախապես մշակված չափանիշներով: Յուրաքանչյուր դեպք քննարկվում է Օրրանի մասնագիտական խմբում, որի մեջ մտնում են Օրրանի սոցիալական աշխատողը, մանկավարժները, հոգեբանը, բժիշկը եւ գործադիր տնօրենը: Շահառուների ընտրության հարցում Օրրանը համագործակցում է «ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության» Լուռու մարզի Վանածորի քաղաքապետարանի սոցիալական բաժնի, սոցիալական ոլորտում գործող հասարակական կազմակերպությունների, ինչպես նաեւ «ՀՀ Ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչության անչափահասների կողմից կատարվող հանցագործությունների դեմ պայքարի բաժնի» հետ:
8	Ծրագրի իրականացման տևողությունը	Ծրագիրը սկսել է 2009թ. հոկտեմբերից և այն շարունակական է: Սույն ծրագիրը նախատեսված է 2011թ. հունվարի 1-ից մինչև 2011թ. դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածի համար: Այն կգործի այնքան ժամանակ, որքան կազմակերպությունը հնարավորություն կունենա իր առաքելությունը և այդ նպատակով կունենա ֆինանսական միջոցներ:այն շարունակական է:
9	Միջոցառումների (ըստ փուլերի, եթե այդպիսիք հնարավոր է առանձնացնել) նկարագրությունը և ժամկետները անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	<p>Օրրան ԲՀ-ն Վանածոր Գրիգոր Լուսավորիչ 59 հասցեում գտնվող վարձակալած կենտրոնում մուրացիկ, թափառաշրջիկ եւ ծայրահեղ կարիքավոր ընտանիքների 54 երեխայի շաբաթը 6 օր մատուցում է տաք ճաշ եւ իրականացնում սոցիալական, կրթական, մշակութային, հոգեբանական եւ բժշկական ծառայություն:</p> <ul style="list-style-type: none"> <li>• 54 երեխայի ամենօրյա սնունդ- տարեկան կազմում է 11.811.912 դրամ</li> <li>• բժշկական և հոգեբանական ծառայություններ - տարեկան 2.930.628 դրամ</li> <li>• սոցիալական ծառայություն, հագուստ և կոշիկ - տարեկան 2.721.608 դրամ</li> <li>• մշակութային միջոցառումներ - տարեկան 2.701.036 դրամ</li> <li>• դպրոցահասակ երեխաների տնային պարապմունքների կազմակերպում դպրոցից հետո. շաբաթական 6 օր 54 երեխայի համար, գրեմական պիտույքների, ուսումնական նյութերի, պայուսակների ապահովում - տարեկան 3.049.064 դրամ</li> <li>• ձեռարվեստի խմբակներ՝ մակրամե, փայտամշակում, կավագործություն –տարեկան 2.952.000 դրամ</li> <li>• արտասահմանից բեռների ներմուծում(բարերարների ցանկությամբ ուղարկված հագուստ, գրեմական պիտույքներ, խաղալիք)– տարեկան 2.500.000 դրամ</li> </ul> <p>Ընդամենը 28.666.248 դրամ (քսանութ միլիոն վեց հարյուր վաթսուներեք հազար երկու հարյուր քառասունութ դրամ )</p>

10	Ձեռք բերվելիք (ներմուծվող) ապրանքներ, ծառայությունների և աշխատանքների համառոտ նկարագիրը, ծավալները, նախատեսվող գինը	N	Ամսաթիվ	Պայմանագրի կամ հաշիվ ապրանքագրի համարը	Կազմակերպության կամ մատակարարի անվանումը	Նկարագրությունը	ՀՀ դրամ տարեկան առանց ԱԱՀ	ԱԱՀ-ի չափը տարեկան	Ընդամենը տարեկան
		1	12.11.09	114596139	«ԱրմենՏել» ՀԶ ՓԲԸ	Հեռախոսային, ինտերնետային կապի մատակարարում	660000	132000	792000
		2			«ՀայՌուսգազար» ՓԲԸ	Գազի մատակարարում	1000000	200000	1200000
		3	01.01.10	Պայմանագիր առ 01.01.2010	“Լոռի-Ջրմուղկոյուղ” ՓԲԸ	Խմելու ջրի մատակարարում	240000	48000	288000
		4	26.01.11	000502	“ Հայաստանի էլեկտրական ցանցեր” ՓԲԸ “Դեբեդ” մ/ձ (Վանաձոր ել.ցանց)	էլեկտրա էներգիայի մատակարարում	1020000	204000	1224000
						Ընդամենը	2920000	584000	3504000
11	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսեր	<p>Կենցաղային ծախսեր՝ պայմանագրեր «ԱրմենՏել»-ի, «Հայաստանի էլեկտրական ցանցեր», “Լոռի-Ջրմուղկոյուղ” ՓԲԸ, «ՀայՌուսգազար» ՓԲԸ ընկերությունների, ինչպես նաև Վանաձոր քաղաքի «Օրրան» շենքի կահույքի պատվիրման և սարքավորումների գնման պայմանագրեր այլ կազմակերպությունների հետ:</p> <ul style="list-style-type: none"> <li>• ջուր՝ 240000 դրամ</li> <li>• էլեկտրաէներգիա՝ 1020000 դրամ</li> <li>• հեռախոս՝ 540000 դրամ</li> </ul>							



		<ul style="list-style-type: none"> <li>• կահույք՝ 200000 դրամ</li> <li>• սարքավորումների ձեռք բերում՝ 400000 դրամ</li> <li>• գազ-տարեկան՝ 1000000 դրամ</li> <li>• ինտերնետային կապի ծառայության մատուցում՝ 120000դրամ</li> <li>• գործանյակային ծախսեր 200000 դրամ</li> <li>• բանկային ծախսեր 50000 դրամ</li> <li>• փոստային ծախսեր 50000 դրամ</li> <li>• վարձավճար-2666700 դրամ</li> </ul> <p>Ընդամենը 6.486.700 (վեց միլիոն չորս հարյուր ութսունվեց հազար յոթ հարյուր դրամ)</p>							
12	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների այլ կազմակերպությունների հետ	<ol style="list-style-type: none"> <li>1. ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով</li> <li>2. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն</li> <li>3. ՀՀ առողջապահության նախարարություն</li> <li>4. ՀՀ կրթության և գիտության նախարարություն</li> <li>5. Լոռու մարզի Վանաձորի քաղաքապետարանի սոցիալական վարչություններ</li> <li>6. Տեղական ու միջնադպրոցային ՀԿ-ներ, որոնք աշխատում են ռիսկի խմբի երեխաների հետ</li> <li>7. «ՀՀ Ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչության անչափահասների կողմից կատարվող հանցագործությունների դեմ պայքարի բաժնի» հետ: «Օրրան» համագործակցում է նաև սոցիալական ոլորտում գործող հասարակական կազմակերպությունների, ԶԼՍ-ների հետ:</li> </ol>							
13	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	<ul style="list-style-type: none"> <li>• եռամսյակային և տարեկան հաշվետվություններ են ներկայացվում ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով</li> <li>• ամսական եւ եռամսյակային աշխատանքային ու ֆինանսական հաշվետվություններ են ներկայացվում «Օրրան» ԲՀԿ-ի տնօրենների խորհրդին</li> <li>• զույգագրումը և բաշխումն իրականացվում են «Օրրան» ԲՀԿ –ի գործադիր տնօրենի, հաշվապահի և սոցիալական աշխատողի, ինչպես նաև շահառուների ստորագրություններով ու անձնագրային տվյալներով</li> <li>• եռամսյակային հաշվետվություններ կառավարությանն առընթեր պետական հարկային ծառայություններից</li> <li>• ֆինանսական աուդիտն իրականացվում է «Գրանք Թորոնթոն Ամի» ՍՊԸ-ի կողմից</li> </ul>							



11.02.17  
11.02.17



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ՔԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 փետրվարի 2011 թվականի N Մ-101 -Ա  
քաղ. երևան

**«ԳՅՈՒՄՐԻԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ»  
ԳԻՏԱԿՐԹԱՎԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱՎԱՆԱՑՎՈՂ «ՏԵՂԵԿԱՏՎԱ-  
ԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի փետրվարի 16-ի N 3/3.8-1/1324-11, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2011 թվականի փետրվարի 3-ի N 01/495-11, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2011 թվականի փետրվարի 4-ի N 03/07.2/794-11, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի փետրվարի 8-ի N ԱԱ/3-4/595-11 ու Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2011 թվականի փետրվարի 2-ի N 01/363-11 եզրակացությունները, **ո թ ո - 2 ու մ է.**

1. Բարեգործական որակել «Գյումրիի տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոն» գիտակրթական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 35288400 դրամ արժույթությամբ «Տեղեկատվական տեխնոլոգիաների ուսուցում» ծրագիրը (կցվում է):
2. Սահմանել, որ «Գյումրիի տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոն» գիտակրթական հիմնադրամի կողմից կնքված (քաղ. Գյումրի, Շիրակացի 68, ՀՎՀՀ՝ 05532905)՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝
  - 1) «Իմաստասեր Անանիա Շիրակացի» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05501164) 2010 թվականի հունիսի 6-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2011 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը տարածքի վարձակալում՝ 4400000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.
  - 2) «Էվլիսի քոնսալթինգ ընդ աուդիտ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00433357) 2011 թվականի հունվարի 3-ին կնքված՝ N 1 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2010 թվականի ֆինանսական հաշվետվությունների պատրաստում՝ 500000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.
  - 3) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի «Ղարս» մասնաճյուղի հետ (ՀՎՀՀ՝ 01520882) 2010 թվականի հունվարի 18-ին կնքված N 120424 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2011 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը


էլեկտրաներգիայի մատակարարում՝ 1400000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

- 4) «Ղ-Տելեկոմ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01551651) 2007 թվականի նոյեմբերի 3-ին կնքված N 015427 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2011 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում բջջային հեռախոսակապի ծառայությունների մատուցում՝ 1200000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.
- 5) «ՋիէնՍի-Աֆա» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00096001) 2010 թվականի դեկտեմբերի 6-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2011 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը կապի ծառայությունների մատուցում՝ 1800000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի :



3. «Գյումրիի տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոն» գիտակրթական հիմնադրամին՝

- 1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.
- 2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել հաշվետվություն այդ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում հիմնադրամի կողմից, ինչպես նաև հիմնադրամին մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

Գյումրիում “Տեղեկատվական Տեխնոլոգիաների Ուսուցման”

Բարեգործական Ծրագիր

1.	Ծրագրի նպատակը	Գյումրիում և Հյուսիսային տարածաշրջանում բնակվող տեխնիկական բարձրագույն կրթություն ունեցող երիտասարդների համար երկամյա ուսուցում տեղեկատվական և բարձր տեխնոլոգիաների /SS/ բնագավառում: Ներկայացված ծրագիրը վերաբերվում է 2011-2012 ուսումնական տարվա երկու ուսանողական հոսքերի ծախսերին:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Ավելարդում ենք ԱՄՀ-ից ազատում և խրախուսում («Բարեգործության մասին» Հայաստանի հանրապետության օրենքի 15-րդ հոդված):
3.	Բարեգործը	ԱՄՆ-ի Հայ Օգնության Ֆոնդ (Նյու Յորքի գրասենյակ), ամերիկահայ բարերարներ
4.	Ծրագիրը կատարողը	“Գյումրիի Տեղեկատվական Տեխնոլոգիաների Կենտրոն” գիտակրթական հիմնադրամ, ք. Գյումրի, Անկախության հր. 9, ՀՎՀՀ՝ 05532905
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Վայրը՝ ՀՀ, Երևանի մարզ, ք. Գյումրի, Անկախության հր. 9 Բնագավառը՝ Կրթական
6.	Ծրագրի բյուջեն	Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 35 288 400 ՀՀ դրամ: Աշխատավարձ/այդ թվում դասախոսական անձնակազմ/ - 17 108 000 ՀՀ դրամ/այդ թվում դասախոսներ 14 024 000 ՀՀ դրամ/ Սոցվճար/այդ թվում դասախոսական անձնակազմ/ - 2 659 400 ՀՀ դրամ/այդ թվում դասախոսներ 2 337 200 ՀՀ դրամ/ Կապ, հնտերնետ - 3 000 000 ՀՀ դրամ Տարածքի վարձակալություն - 6 960 000 ՀՀ դրամ Կոմունալ և փոստի ծախսեր - 3 021 000 ՀՀ դրամ Հայտարարություն նոր ուսանողների ընդունելության մասին՝ հեռուստատեքեր, թերթերի հայտարարություն, ուսանողների ավարտական միջոցառման կազմակերպում, վկայականների հանձնում - 680 000 ՀՀ դրամ Մասնագետների վերապատրաստում - 1 560 000 ՀՀ դրամ

		Ներկայացուցչական/ուսանողների հավաք/ -300 000 ՀՀ դրամ
7.	Բարեգործություն ստացողը	Հյուսիսային Տարածաշրջանի երիտասարդներ, որոնք մրցութային կարգով ընտրվել են որպես Ուսումնական Կենտրոնի սաներ: Դասընթացների ավարտից հետո ակնկալվում է Գյումրիում նոր բարձր վարձատրվող աշխատատեղերի ստեղծում SS բնագավառում, որը կրթի շահառուների կենսամակարդակի բարձրացման: Ծրագրից օգտվում են 55 երիտասարդներ: Ուսուցումն իրականացվում է անվճար հիմունքներով:
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	01.01.2011 – 31.12.2011
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Ըահառուների համար կազմակերպվում են դասընթացներ երկու կիսամյակով/ Մարտից Հուլիս և Մայիսից սեպտեմբեր/՝ երկու բաժիններում, դասընթացների տևողությունը երկու տարի է, լավագույն ուսանողները կատանան կրթաթոշակ՝ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի առաջատար կազմակերպություններից: Դասախոսական անձնակազմն ընտրվում է ՀՀ-ում SS ոլորտի լավագույն մասնագետներից, վճարվող աշխատավարձը/16,361,200 ՀՀ դրամ ներառյալ հարկեր / նաև խրախուսական է, որը նպաստում է դասախոսների բարելիւղճ աշխատանքին: Դասախոսների համար Գյումրիում վարձակալվել է նաև բնակարան , քանի որ դասախոսների մեծ մասը Գյումրի են գալիս Երևանից: Կազմակերպչական աշխատանքները ղեկավարվում և կոորդինացվում են ծրագրի ղեկավարի կողմից՝ վճարվող աշխատավարձը 3 406 200 ՀՀ դրամ ներառյալ հարկերը: Ուսանողներին SS ոլորտի ծրագրերի ուսումնառության համար կազմակերպությունը ապահովում է բարձր որակի ինտերնետ կապ և հաղորդակցման այլ համարավորություններ /3,000,000 ՀՀ դրամ/ Ուսումնական գործընթացը ճիշտ կազմակերպելու համար վարձակալվում է գրասենյակ /6 960 000 ՀՀ դրամ/, որտեղ տեղակայված են համապատասխան լսարանները և լաբորատորիաները: Կոմունալ ծախսերը ներառում են ջրի, գազի, էլեկտրաէներգիայի ծախսերը, իսկ փոստային ծառայությունների միջոցով իրականացվում է ծրագրի շրջանակներում անհրաժեշտ նամակագրությունները /3 021 000 ՀՀ դրամ/ Ուսումնական գործընթացում նոր ուսանողների ներգրավման համար տրվում են ընդունելության հայտարարություններ հեռուստատեսությամբ ու թերթերում: Ուսումնական տարվա ավարտին կազմակերպվում է ավարտական վկայականների հանձնում /680 000/ ՀՀ դրամ: Տեղեկատվական Տեխնոլոգիաների ոլորտի գիտելիքների բացը լրացնելու նպատակով մասնագետներին տրվում է վերապատրաստվելու հնարավորություն արտերկրում, որը նաև նպաստում է այլ երկրներում մասնագետների հետ փորձի փոխանակմանը: Կենտրոնի ուսանողներին լրացուցիչ նեղ մասնագիտական գիտելիքներ ստանալու հնարավորություն է տալիս վերապատրաստումը ՀՀ առաջատար SS ոլորտի ընկերություններում և կազմակերպված սեմինարները: 1 560 000 ՀՀ դրամ ուղղորդվում է սույն նպատակի

FF/8

		<p>համար: Պարբերաբար կազմակերպվում է Կենտրոնի շրջանավարտների հավաքույթ – քննարկումներ և առկա խնդիրների պարզաբանումներ մասնագետների հետ /300 000 ՀՀ դրամ/:</p> <p>Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 35 288 400ՀՀ դրամ:</p>
<p>10.</p>	<p>Չեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը</p>	<p>Ակնկալում ենք ինտերնետ կապի ծառայության համար 01.01.2011թ-31.12.2011 թվականի ընթացքում ԱԱՀ-ից ազատում 1 800 000 դրամի չափով՝ պայմանագիր կնքված 06.12.2010թ. «ՋիէնՄԻ-Ալֆա» ՓԲԸ, (ք. Արուսյան, Խաղաղության փ. 1, ՀՎՀՀ 00096001):</p> <p>Ակնկալում ենք քջջային հեռախոսակապի ծառայությունների համար 01.01.2011թ.-ից 31.12.2011 թվականի ընթացքում ԱԱՀ-ից ազատում 1 200 000 դրամի չափով՝ պայմանագիր N 015427 կնքված 03.11.07թ «Ղ-Տելեկոմ» ՓԲԸ-ի (ք. Երևան, Արգիշտի փ. 4/1, ՀՎՀՀ 01551651):</p> <p>Ակնկալում ենք օգտագործված էլեկտրաէներգիայի դիմաց 01.01.2011թ-31.12.2011 թվականի ընթացքում ԱԱՀ-ից ազատում 1 400 000 դրամի չափով՝ պայմանագիր 120424, կնքված 18.01.2010թ «Հայաստանի էլեկտրացանցեր» Փ.Բ.Ը.Ղարս մասնաճյուղ, Գյումրի էլ. ցանց (ք. Գյումրի, Լ.Մարդյան 43, ՀՎՀՀ 01520882):</p> <p>Ակնկալում ենք հաշվապահական/աուդիտորական ծառայություններ համար 01.01.2011թ.-ից 31.12.2011 թվականի ընթացքում ԱԱՀ-ից ազատում 500 000 դրամի չափով: Պայմանագիրը կնքված 08.06.2010թ. «Իմաստասեր Ամանիա Օլիմպիկ» համալսարան ՍՊԸ-ի հետ/ՀՀ, ք. Գյումրի 3101, Մայաթ-Նովա 1, ՀՎՀՀ 05501164/:</p>
<p>11.</p>	<p>Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը</p>	<p>Ծրագրի կազմակերպչական ծախսերի ընդհանուր գումարը կազմում է 4 386 200 ՀՀ դրամ, որը կազմում է ընդհանուր արժեքի 12.4 տոկոսը: Կազմակերպչական ծախսերը ներառում են .</p> <p>Ծրագրի ղեկավարի աշխատավարձը -3 084 000ՀՀ դրամ</p> <p>Մոցվճարը -322 200ՀՀ դրամ</p> <p>Նոր ուսանողների ընդունելության մասին հայտարարության՝ հեռուստաթեր, թերթերի հայտարարություն, ուսանողների ավարտական միջոցառման կազմակերպման,</p>

		<p>վկայականների հանձնման ծախսերը – 680 000 ՀՀ դրամ</p> <p>Ներկայացուցչական/ուսանողների հավաք/ ծախսերը -300 000 ՀՀ դրամ</p>
<p>12.</p>	<p>Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ</p>	<p>Մույն ծրագրի իրականացման շրջանակներում ԳՏՏԿ-ը համագործակցում է ներքոհիշյալ կառույցների հետ.</p> <ol style="list-style-type: none"> <li>1. ՀՕՖ-ի Հայաստանի գրասենյակ</li> <li>2. ՀՀ կրթության և գիտության նախարարություն</li> <li>3. ՀՀ Տնտեսական Զարգացման Նախարարություն</li> <li>4. Շիրակի մարզի մարզպետարան և քաղաքապետարան</li> <li>5. Տեղի բուհեր և այլ ուսումնական հաստատություններ</li> <li>6. ՏՏ ոլորտի կազմակերպություններ և ընկերություններ</li> </ol>
<p>13.</p>	<p>Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերլուծականության մեխանիզմների նկարագրությունը</p>	<p>Վերլուծությունը կատարվելու է Ամերիկայի ՀՕՖ-ի Հայաստանի մասնաճյուղի և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգող հանձնաժողովի կողմից նամայն և տարեկան հաշվետվությունների միջոցով:</p>

2/11



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 փետրվարի 2011 թվականի N Մ- **102** -ա  
քաղ. Երևան

«ՀՅՈՒՄԱՆ ԴԻԳՆԻԹԻ ԸՆԴ ՓԻՍ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ  
ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԵՎ ԲԱՇԽՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ


Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի հունվարի 26-ի N 3/3.8-1/545-11, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2011 թվականի հունվարի 24-ի N ՖԲ/Մարտ/ՄԽ-1/289-11 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի հունվարի 21-ի N ԱԱ/3-4/266-11 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ու մ է.**

1. Բարեգործական որակելի Նիդեռլանդների արտաքին գործերի նախարարության կողմից «Հյուման Դիգնիթի Ընդ Փիս» հիմնադրամի հասցեով ստացված երկու թեստավորման սարքավորումների (1 տեղ, 160 կգ ընդհանուր քաշով, 13185.83 եվրո արժողությամբ, ներառյալ 1185.83 եվրո փոխադրման և այլ ծախսերը, «Չվարթնոց» ՄՏ) ներմուծման ծրագիրը: Բեռը՝ «Հայաստանի հաշմանդամություն ունեցող մարդիկ, որպես խոստումնալից աշխատուժ» ծրագրի շրջանակներում, նվիրաբերվելու է Հայաստանի Հանրապետության «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալության տարածքային երկու կենտրոններին (Էրեբունի-Նուբարաշեն և Հրազդան):

2. «Հյուման Դիգնիթի Ընդ Փիս» հիմնադրամին՝ նշված բեռի հանձնումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**


18 փետրվարի 2011 թվականի N Մ- **103** -Ա  
քաղ. երևան

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի հունվարի 26-ի N 3/3.8-2/573-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի հունվարի 21-ի N ԱԱ/3-6/265-11 եզրակացությունները, **ո Ր Ո շ ՈՒ Մ է**.

1. Բարեգործական որակել անհատ բարերար Լևոն Հայրապետյանի կողմից Արաբական Միացյալ Էմիրությունների Դուբայ քաղաքից Լեռնային Ղարաբաղի Հանրապետության սոցիալական ապահովության նախարարության հասցեով ուղարկված կահույքի և էլեկտրական ապրանքների (31 տեղ, 2287 կգ ընդհանուր քաշով, 41591 ԱՄՆ-ի դոլար ընդհանուր արժեքով՝ ներառյալ բեռնափոխադրման ծախսերը, Սյունիքի Տ/Մ) ներմուծման ու Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին հանձնելու ծրագիրը: Բեռը նախատեսված է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Մարտակերտի շրջանի Վանք գյուղի մանկապարտեզին տրամադրելու համար:

2. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 փետրվարի 2011 թվականի N Մ- 104 -Ա  
քաղ. երևան

**ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՖՈՆԴԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ  
ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԳՅՈՒՄՐՈՒ ՕՅՈՒՆՋՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 21  
ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ-ՎԱՐԺԱՐԱՆԻ ՀԱՄԱՐ ԿԱՀՈՒՅՔԻ ՊԱՏՐԱՏՈՒՄ»  
ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 3/3.8-1/1138-11, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2011 թվականի փետրվարի 9-ի N 01/14-3.2-64/609-11, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2011 թվականի փետրվարի 8-ի N 03/07.2/901-11, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի փետրվարի 9-ի N ԱԱ/3-4/665-11 և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2011 թվականի փետրվարի 10-ի N 01/522-11 եզրակացությունները, **ո թ ո - 2 ու մ է.**

1. Բարեգործական որակելի Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի կողմից իրականացվող՝ 9061338 դրամ արժողությամբ «Գյումրու Օյունջյանի անվան թիվ 21 միջնակարգ դպրոց-վարժարանի համար կահույքի պատրաստում» ծրագիրը (կցվում է):


2. Սահմանել, որ Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի կողմից կնքված (քաղ. երևան, Մովսես Խորենացու 22, ՀՎՀՀ՝ 02517115)՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Նորյան» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05501971) 2011 թվականի փետրվարի 2-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է դպրոցական կահույքի պատրաստում և տեղադրում՝ 9061338 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի :

3. Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղին՝ մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի


Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկատվություն այդ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից կատարված աշխատանքների, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների վերաբերյալ, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ծրագրի կատարման մասին ամփոփ տեղեկություններ:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի տնօրեն Բ. Սարգսյանի կողմից



Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի կողմից իրականացվող Գյուլմարի Օյունջյանի անվան թիվ 21 միջնակարգ դպրոց-վարժարանի համար կահույքի պատրաստման Բ Ա Ր Ե Գ Ո Ր Ծ Ա Կ Ա Ն Ծ Ր Ա Գ Ի Ր

1. Ծրագրի նպատակը	Ծրագրի նպատակն է Օյունջյանի անվան թիվ 21 միջնակարգ դպրոց-վարժարանի նոր մասնաշենքի համար պատրաստել կահույք՝ դրանով նպաստելով դպրոցում ուսանող 450 աշակերտների կրթական պայմանների բարելավմանը:															
2. Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Անկախում ենք ԱԱԳ-ից ազատում («Բարեգործության մասին» Հայաստանի հանրապետության օրենքի 15-րդ հոդված):															
3. Բարեգործը	ԱՄՆ-ի Հայ Օգնության Ֆոնդ և ամերիկահայ բարերար Ջոն Օյունջյան															
4. Ծրագիրը կատարողը	ԱՄՆ-ի ՀՀՖ-ի Հայաստանի մասնաճյուղ, ք. Երևան, Մ. Խորենացու փող. 22, ՀՎՀՀ 02517115:															
5. Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Ք. Գյուլմարի, Միեր Սկրտչյան 47: Բնագավառը՝ կրթական:															
6. Ծրագրի բյուջեն	Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 9,061,338 ՀՀ դրամ:															
7. Բարեգործություն ստացողը	Օյունջյանի անվան թիվ 21 միջնակարգ դպրոց ՊՈԱԿ															
8. Ծրագրի իրականացման տևողությունը	02.02.2011 – 15.04.2011															
9. Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Ստորև տրվում է ծրագրի շրջանակներում պատրաստվելիք կահույքի ցանկը և արժեքները. <table border="1" style="margin-left: 20px;"> <thead> <tr> <th>Անվանումը</th> <th>չ/մ</th> <th>Քանակ</th> <th>Միավոր արժեք</th> <th>Ընդամենը</th> </tr> </thead> <tbody> <tr> <td>Ուսուցչի սեղան 115x50x76</td> <td>հատ</td> <td>12</td> <td>20,808</td> <td>249,696</td> </tr> <tr> <td>Գրասպահարան 210x84.4x44</td> <td>հատ</td> <td>30</td> <td>53,112</td> <td>1,596,360</td> </tr> </tbody> </table>	Անվանումը	չ/մ	Քանակ	Միավոր արժեք	Ընդամենը	Ուսուցչի սեղան 115x50x76	հատ	12	20,808	249,696	Գրասպահարան 210x84.4x44	հատ	30	53,112	1,596,360
Անվանումը	չ/մ	Քանակ	Միավոր արժեք	Ընդամենը												
Ուսուցչի սեղան 115x50x76	հատ	12	20,808	249,696												
Գրասպահարան 210x84.4x44	հատ	30	53,112	1,596,360												

2

	Աշակերտական աթոռ 110 x 30x 40	հատ	126	16,810	2,118,060
	Աշակերտական սեղան 5-12 դաս. համար 115x 45x75	հատ	126	26,729	33,367,854
	Գրատախտակ L=171.2 + 85*2 h= 101.2	հատ	20	44,532	890,640
	Բազմոց	հատ	3	88,440	265,320
	Խոհանոցային պահարան	հատ	1	65,796	65,796
	Ամսագրի սեղան	հատ	1	19,260	19,260
	Գրասեղան 120x 80x76	հատ	1	44,352	44,352
	Գրասեղան տնօրենի համար	հատ	1	60,000	60,000
	Զգեստապահարան	հատ	1	72,000	72,000
	Աղջիկների աշխ. ուսուց. սեղան 110x50x70	հատ	15	21,000	315,000
	Ընդամենը				9,061,338
10. Չեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Անկախում ենք ԱԱԳ-ից ազատում 9,061,338 ՀՀ դրամի չափով՝ պայմանագիր կնքված 02.02.2011թ «Նորյան» ՍՊԸ -ի (ՀՀ, ք. Գյուլմարի, Շիրակացի 1/1, ՀՎՀՀ 16312 8118250) և Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի, (ՀՀ, ք. Երևան, Խորենացի 22, ՀՎՀՀ 02517115) միջև:				
11. Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում:				
12. Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	ՀՀ Շիրակի մարզպետարան, ՀՀ Կառավարությանն առընթեր բարեգործական ծրագրերի համակարգող հանձնաժողով				
13. Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Վերահսկողությունը կատարվելու է ՀՖՖ-ի Նյու Յորքի գրասենյակի և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգող հանձնաժողովի կողմից եռամսյա և տարեկան հաշվետվությունների միջոցով:				



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**  
**18 փետրվարի 2011 թվականի N Մ- 105 -Ա**  
**քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱ-  
ԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 19-Ի N Մ-182-Ա ՈՐՈՇՄԱՄԲ  
ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒՑ-  
ՄԱՆ ՄԱՍԻՆ («ԱՌԴԱ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի -ի N 3/3.8-2/-11, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2011 թվականի -ի N -11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի -ի N ԱԱ/3-6/-10 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Սահմանել, որ ԱՄՆ-ից «Հայ ավետարանի առաքելություն» բարեգործական կազմակերպության կողմից «ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամի հասցեով ստացված բեռը (1 տեղ, 16 կգ ընդհանուր քաշով, 452 ԱՄՆ-ի դոլար արժեքով, փոխադրման ծախսերը կազմում են 56 ԱՄՆ-ի դոլար, բեռի ցանկը կցվում է, ՄՓԵԱՍՓԱՄ մաքսատուն) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի մարտի 19-ի «ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող ««Զեյթուն» ուսումնական և աջակցման կենտրոնի հիմնադրում» ծրագրի մասին» N Մ-182-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:



ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

2/28.21

N	Ապրանքի անվանումը	Տեղերի քանակը	Քանակը ըստ չափման միավորի	Ընդհ. քաշը /կգ/	Մաքուր քաշը /կգ/	Արժեք \$	Օտարաուները
1	Ղյուրակիր համակարգիչ HP Pavilion DV5 CNU0192JV8		1 հատ	7	5	195	«Զեյթուն» ուսումնական կենտրոն (Մ-182-Ա)
2	Ղյուրակիր համակարգիչ Lenovo G555 FCC ID MO CB00072104		1 հատ	4	3,5	160	«Զեյթուն» ուսումնական կենտրոն (Մ-182-Ա)
3	Պրոյեկտոր THOSHIBA TDP-S2V օգտ.		1 հատ	4,8	4	92	«Զեյթուն» ուսումնական կենտրոն (Մ-182-Ա)
4	Պրոյեկտորի լամպ		1 հատ	0,2	0,2	5	«Զեյթուն» ուսումնական կենտրոն (Մ-182-Ա)
	Ընդամենը	1		16	12,7	452	

Տրանսպորտային ծախս						56	
--------------------	--	--	--	--	--	----	--





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Մ Ա Մ**  
18 փետրվարի 2011 թվականի N Մ- **106**-Ա  
քաղ. երևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 30-Ի N Մ-262-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի փետրվարի 7-ի N 3/3.8-2/918-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի փետրվարի 7-ի N ԱԱ/3-6/577-11 եզրակացությունները, **ո Ր Ո - 2 ու մ է.**


1. Սահմանել, որ «Մատենադարան» հիմնադրամի կողմից ձեռք բերված ջեռուցման և օդափոխության համակարգի ապրանքները ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի ապրիլի 30-ի «Մատենադարան» հիմնադրամի կողմից իրականացվող ծրագրի մասին (4-րդ փուլ)» N Մ-262-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում.

1) «ԴԱԲ Վոթեր Տեքնոլոջի» ՍՊԸ-ից՝ 580.1 կգ ընդհանուր քաշով, 5514.40 եվրո արժողությամբ, ՄՃՓ տարածաշրջանային մաքսատուն, բեռնափոխադրման ծախսերը կազմում են 1179.50 եվրո.

2) «Կլիվետ» ՍՊԸ-ից՝ 2371 կգ ընդհանուր քաշով, 45293.50 եվրո արժողությամբ, ՄՃՓ տարածաշրջանային մաքսատուն, բեռնափոխադրման ծախսերը կազմում են 4820.50 եվրո:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱԿ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

18 փետրվարի 2011 թվականի N **Մ-107**-Ա  
քաղ. երևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 30-Ի N Մ-262-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («ՄԱՏԵՆԱՊԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ) N 1**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի հունվարի 27-ի N 3/3.8-2/593-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի հունվարի 27-ի N ԱԱ/3-6/106-11 եզրակացությունները, **ո Ր Ո շ ու մ է.**

1. Սահմանել, որ «Մատենադարան» հիմնադրամի կողմից՝ չեխական «Էատոն Էլեկտրատեխնիկա» ՍՊԸ-ից ձեռք բերված էլեկտրատեխնիկական ապրանքները (265 կգ ընդհանուր քաշով, 15352.51 եվրո արժողությամբ, ներառյալ բեռնափոխադրման ծախսերը, «Ձվարթնոց» ՄՏ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի ապրիլի 30-ի «Մատենադարան» հիմնադրամի կողմից իրականացվող ծրագրի մասին (4-րդ փուլ)» N Մ-262-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 փետրվարի 2011 թվականի N Մ- **108** -  
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱ-  
ԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 15-Ի Ն Մ-521-  
Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ  
ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («ՀԱՆՈ ԹՐԱՍԹ» ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ՈՉ  
ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅՎԱԿԱՆ  
ՄԱՍՆԱՃՅՈՒՂ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի  
համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության  
ֆինանսների նախարարության 2011 թվականի հունվարի 27-ի N 3/3.8-2594/-11 և  
Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների  
կոմիտեի 2011 թվականի հունվարի 27-ի N ԱԱ/3-6/404-11 եզրակացությունները, **ո Ր Ո -  
2 ու մ է.**

1. Սահմանել, որ «Հայո Թրասթ» բրիտանական ոչ կառավարական բարեգործական  
կազմակերպության կողմից նույն կազմակերպության հայկական մասնաճյուղի հասցեով  
բրիտանական «Մ.Վ. Նյուպորտ» ընկերության միջոցով ուղարկված բեռը (41 տեղ, 3223 կգ  
ընդհանուր քաշով, 40697.54 ֆունտ ստեռլինգ արժեքով՝ ներառյալ 4643.38 ֆունտ  
ստեռլինգ փոխադրման և այլ ծախսեր, բեռի ցանկը կցվում է, «Արարատյան»  
տարածաշրջանային մաքսատուն) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության  
կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2008  
թվականի օգոստոսի 15-ի «Հայո Թրասթ» բրիտանական ոչ կառավարական  
բարեգործական կազմակերպության կողմից իրականացվող ծրագրի մասին» N Մ-521-Ա  
որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարու-  
թյուն Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի  
Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

# M. W. NEWPORT LTD

Tel: +44 1367 860303 Sales  
Tel: +44 1367 860528 Parts  
Fax: +44 1367 860562  
Email: [mail@mwnewport.f9.co.uk](mailto:mail@mwnewport.f9.co.uk)



Worldwide Exports

Unit 2, Road B4477  
Kencot  
Nr. Lechlade  
Glos., GL7 3QX  
England

VAT No: GB 408 3852 48

The HALO Trust  
Carronfoot  
Thornhill  
Dumfries DG3 5BF

Your Ref: NK/A-10 **2/28.25**

REF: NK30343/A-10

22 Նոյեմբերի 2010

Փ Ա Ք Ի Ն Գ Լ Ի Ս

1 x 20' Բեռնախցիկ No: MEDU 2078459

Կնիք No: MSC 7723071

Բեռնված:

	Պատվեր /No:	Հ/Ապր. No:	Քաշ Kg	Արժեք
1 Արկղ Volvo Պահեստամաս		7746	3	1372.20
4 Արկղ Landrover Պահեստամաս	2620	7751	272	7474.13
3 Արկղ Խոտհնձիչի Պահեստամաս	2619	7764	43	1249.47
1 Արկղ Volvo Պահեստամաս	2621/6208	7773	80	
4 Volvo Անվաղող	2621/6208	7773	800	11347.74
4 DAF Անվաղող	2663	7779	360	
1 Արկղ DAF Պահեստամաս	2663	7779	60	1750.63
1 Արկղ Landrover Պահեստամաս	2665	7780	12	728.76
3 Արկղ Landrover Պահեստամաս	2663	7785	117	4267.47
2 Արկղ Համակարգիչ, օգտագ.		5000123	10	470.00
2 Արկղ Վերնաշապիկ		2720	30	847.18
2 Արկղ Այգեգործական գործիքներ	6202	201020	56	480.58
4 Արկղ Համազգեստ	2641	027743	560	3583.75
2 Արկղ Պաշտպանիչ դիմակ	2622	12912	40	1316.00
1 Արկղ Համազգեստ	G6224	027745	60	511.13
4 Արկղ Համազգեստ	G2686	027744	120	775.50
2 Արկղ Ա/մ շարժիչներ 300 Tdi, օգտագ.		532466	600	1065.00


Ընդի: 41 արկղ

3223 Կգ £37239.54

Ստացող: The HALO Trust  
12 Տ.Մեծ, քն 26  
Երևան 375010  
Հայաստան

Թարգման

Տ.Սահակյան





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**  
18 փետրվարի 2011 թվականի N Մ- 109 -Ա  
քաղ. երևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-  
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ  
ԱՊՐԻԼԻ 30-Ի N Մ-262-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ  
ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ («ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի հունվարի 26-ի N 3/3.8-1/575-11 և Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի հունվարի 25-ի N ԱԱ/3-4/321-11 եզրակացությունները, **ո Ր Ո Շ** 2 ու մ է.


1. Սահմանել, որ «Մատենադարան» հիմնադրամի կողմից կնքված ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի ապրիլի 30-ի «Մատենադարան» հիմնադրամի կողմից իրականացվող ծրագրի մասին (4-րդ փուլ)» N Մ-262-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Մաստեր-Կլինա» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00077507) 2011 թվականի հունվարի 11-ին կնքված՝ N 03/Մ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ժամանակավոր ջեռուցման աշխատանքների իրականացում՝ 4156070 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Բազալտ-ԷՄ» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ՝ 09811321) և «Ալբերտ Կարախանյան և որդիներ» ՍՊԸ-ի հետ (քաղ. Երևան, Արցախի 10դ/9, ՀՎՀՀ՝ 00441423) 2010 թվականի դեկտեմբերի 15-ին կնքված N 20/Մ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է գրանիտ պատրաստվածքների մատակարարում՝ 56690100 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Վի Էյջ Սթոուն» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ՝ 09808938) և «Ալբերտ Կարախանյան և որդիներ» ՍՊԸ-ի հետ (քաղ. Երևան, Արցախի 10դ/9, ՀՎՀՀ՝ 00441423) 2010 թվականի դեկտեմբերի 15-ին կնքված N 21/Մ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է գրանիտ սպիլների մատակարարում՝ 6562500 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**  
18 փետրվարի 2011 թվականի N Մ **110**-Ա  
քաղ. երևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ  
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ  
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 10-Ի N Մ-884-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ  
ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ (ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՖՈՆԴԻ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ)**


Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի հունվարի 24-ի N 3/3.8-1/427-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի հունվարի 20-ի N ԱԱ/3-4/218-11 եզրակացությունները, **ո ր ո - 2 ու մ է.**

1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի դեկտեմբերի 10-ի «Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի կողմից իրականացվող «Կրթավճարներ» ծրագրի մասին» N Մ-884-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման նպատակով Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի կողմից կնքված՝ ստորև նշված գործարքն անմիջականորեն կապված է նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն.

«Ահարոն Պարադիզմա» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00079492) 2008 թվականի ապրիլի 16-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է հաշվապահական և հարկային ծառայությունների մատուցում՝ ամսական 325000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ**



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**18 փետրվարի 2011 թվականի N Մ- 111 -Ա  
քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-  
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ  
ՀՈՒՆԻՍԻ 10-Ի N Մ-455-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ  
ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՒ-  
ՄԱՐ» ԿՈՐՊՈՐԱՑԻԱՅԻ ԵՐԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ)**


Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի հունվարի 24-ի N 3/3.8-1/428-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի հունվարի 20-ի N ԱԱ/3-4/219-11 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ** է.

1. Սահմանել, որ «Ամերիկայի հայկական համագումար» կորպորացիայի Երևանի մասնաճյուղի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2009 թվականի հուլիսի 10-ի «Ամերիկայի հայկական համագումար» կորպորացիայի Երևանի մասնաճյուղի կողմից իրականացվող ծրագրի մասին (2-րդ փուլ)» N Մ-455-Ա որոշմամբ (2010 թվականի փետրվարի 12-ի N Մ-63-Ա և սեպտեմբերի 17-ի N Մ-597-Ա որոշումների խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ԿԱԳԵՎ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00437984) 2011 թվականի հունվարի 14-ին տրված կանխավճարման հաշվում նշված գործարքը, որով նախատեսվում է լամինացված հատակների և շրիշակների մատակարարում ու տեղադրում՝ 581408 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱԿ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**  
**18 փետրվարի 2011 թվականի N Մ - 112 Ա**  
**քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-  
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ  
ՀՈՒՆԻՍԻ 18-Ի N Մ-400-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ  
ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ («ՍՕՍ-ՄԱՆԿԱԿԱՆ ԳՅՈՒԴԵՐ»  
ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի փետրվարի 1-ի N 3/3.8-1/746-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի հունվարի 31-ի N ԱԱ/3-4/440-11 եզրակացությունները, ո Ր Ո Շ ՈՒ Մ է.*

1. Սահմանել, որ «ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի հունիսի 18-ի «ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների երկարաժամկետ ընտանեկան տիպի խնամք և դաստիարակություն» ծրագրի մասին» N Մ-400-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01520882) 2006 թվականի փետրվարի 23-ին կնքված՝ N 317008 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2011 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում էլեկտրաէներգիայի մատակարարման ծառայությունների մատուցում՝ 7625000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Հայֆուսգազարդ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00046317) 2008 թվականի հունվարի 1-ին կնքված՝ N 06112075897 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2011

թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում բնական գազի մատակարարման ծառայությունների մատուցում՝ 6353635 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Հայքմուտկոյուդի» ՓԲԸ-ի «Հյուսիս-արևմտյան» տարածքային մասնաճյուղի Աբովյան տեղամասի հետ (ՀՎՀՀ՝ 02509667) 2009 թվականի հունվարի 12 ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2011 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատուցում՝ 440000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

4) «ԱրմենՏել» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02500052) 2007 թվականի ապրիլի 6-ին կնքված՝ N 686, 2007 թվականի մարտի 29-ին կնքված՝ N 143, 2007 թվականի նոյեմբերի 12-ին կնքված՝ N 220035586 և 2008 թվականի նոյեմբերի 14-ին N 112873025 պայմանագրերում նշված գործարքները, որոնցով նախատեսվում է 2011 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում հեռախոսակապի ծառայությունների մատուցում՝ 2208000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

5) «Մառուլենտ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00256876) 2009 թվականի փետրվարի 28-ին կնքված՝ N 07-02/09 պայմանագրով նշված գործարքը, որով նախատեսվում է 2011 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում մատուցել կապի փոխանցման ծառայություններ՝ 48000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

6) «Աբովյանի համայնքային կոմունալ տնտեսություն» ՀՈԱԿ-ի հետ կնքված՝ N 35 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2011 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում աղբի տեղափեխում՝ 350040 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Առին որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**  
**18 փետրվարի 2011 թվականի N Մ - 113 Ա**  
**քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 18-Ի N Մ-401-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ («ՍՕՍ-ՄԱՆԿԱԿԱՆ ԳՅՈՒՂԵՐ» ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի փետրվարի 1-ի N 3/3.8-1749-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի հունվարի 31-ի N ԱԱ/3-4/439-11 եզրակացությունները, որոնցում է.*

1. Սահմանել, որ «ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի հունիսի 18-ի «ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Առանց ծնողական խնամքի մնացած պատանիների ու երիտասարդների երկարաժամկետ խնամք և դաստիարակություն» ծրագրի մասին» N Մ-401-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն գալի նշանակություն՝

1) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01520882) 2003 թվականի հունվարի 24-ին կնքված՝ N 008442 և 2005 թվականի օգոստոսի 25-ին կնքված՝ N 276397 պայմանագրերում նշված գործարքները, որոնցով նախատեսվում է 2011 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում էլեկտրաէներգիայի մատակարարման ծառայությունների մատուցում՝ 1212000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Հայֆուսագազարդ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00046317) 2006 թվականի ապրիլի 4-ին


կնքված՝ N Կ.011.04.06.0922, 2006 թվականի ապրիլի 10-ին կնքված՝ N Կ.012.04.06.0922 և 2007 թվականի ապրիլի 23-ին կնքված՝ N Կ.015.04.07.0922 պայմանագրերում նշված գործարքները, որոնցով նախատեսվում է 2011 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում բնական գազի մատակարարման ծառայությունների մատուցում՝ 2062823 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Երևան ջուր» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01555351) 2007 թվականի հունիսի 1-ին կնքված՝ N 05-11-511 և N 07-64-34-4 պայմանագրերում նշված գործարքները, որոնցով նախատեսվում է 2011 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատուցում՝ 432000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

4) «ԱրմենՏեյ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02500052) 2004 թվականի նոյեմբերի 25-ին կնքված՝ N 010447655 և 2005 թվականի հոկտեմբերի 19-ին կնքված՝ N 010694092 պայմանագրերում նշված գործարքները, որոնցով նախատեսվում է 2011 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում հեռախոսակապի ծառայությունների մատուցում՝ 2076000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

5) «Թեքեյան Կենտրոն» հիմնադրամի հետ (ՀՎՀՀ՝ 01518359) 2009 թվականի դեկտեմբերի 10-ին կնքված՝ N 6 պայմանագրով նշված գործարքը, որով նախատեսվում է տարածքի վարձակալում՝ 4245000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:



ՆԱԽԱԳԱԿ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 փետրվարի 2011 թվականի N Մ- 114 -Ա  
քաղ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-  
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ  
ԱՊՐԻԼԻ 30-Ի N Մ-262-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ  
ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («ՄԱՏԵՆԱՂԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի փետրվարի 17-ի N 3/3.8-1/1335-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի փետրվարի 17-ի N ԱԱ/3-4/872-11 եզրակացությունները, **ո թ ո - 2 ու մ է.**

1. Սահմանել, որ «Մատենադարան» հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի ապրիլի 30-ի «Մատենադարան» հիմնադրամի կողմից իրականացվող ծրագրի մասին (4-րդ փուլ)» N Մ-262-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Բազալտ-ԷՄ» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ՝ 09811321) հետ 2011 թվականի հունվարի 11-ին կնքված՝ N 03 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է երեսապատման աշխատանքների իրականացում՝ 43690400 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
 ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 փետրվարի 2011 թվականի N Մ- 115 -Ա  
 քաղ. երևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-  
 ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ  
 ԱՊՐԻԼԻ 30-Ի N Մ-262-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ  
 ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («ՄԱՏԵՆԱՊԱ-  
 ԲԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի փետրվարի 15-ի N 3/3.8-2/1269-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի փետրվարի 15-ի N ԱԱ/3-6/824-11 եզրակացությունները, **ո Ր Ո - 2 ու մ է.**

1. Սահմանել, որ «Մատենադարան» հիմնադրամի կողմից՝ «Իզոտերմ» ընկերությունից ձեռք բերված հովացման, ջեռուցման և օդափոխության ապրանքները (195 կգ ընդհանուր քաշով, 9975 ԱՄՆ-ի դոլար արժողությամբ, բեռնափոխադրման ծախսերը կազմում են 1130 ԱՄՆ-ի դոլար, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի ապրիլի 30-ի «Մատենադարան» հիմնադրամի կողմից իրականացվող ծրագրի մասին (4-րդ փուլ)» N Մ-262-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ


18 փետրվարի 2011 թվականի N Մ- *116* -Ա  
քաղ. Երևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 10-Ի N Մ-455-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ («ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ» ԿՈՐՊՈՐԱՑԻԱՅԻ ԵՐԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի -ի N 3/3.8-1/ -11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի -ի N ԱԱ/3-4/-11 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2009 թվականի հուլիսի 10-ի «Ամերիկայի հայկական համագումար» կորպորացիայի Երևանի մասնաճյուղի կողմից իրականացվող ծրագրի մասին (2-րդ փուլ)» N Մ-455-Ա որոշմամբ (2010 թվականի փետրվարի 12-ի N Մ-63-Ա և սեպտեմբերի 17-ի N Մ-597-Ա որոշումների խմբագրությամբ) հաստատված ծրագրի 8-րդ կետում «ավարտը՝ 2010 թվականի փետրվար» բառերը փոխարինել «ավարտը՝ 2012 թվականի փետրվար» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ  


Ա. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**18 փետրվարի 2011 թվականի N Մ-117-Ա  
քաղ. երևան**


**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 19-Ի N Մ-823-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ («ՄԱՏԵՆԱՂԱՐԱՆ» ՀԻՄՆԱՂՐԱՄ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հաշվի առնելով «Մատենադարան» հիմնադրամի տնօրենի 2011 թվականի փետրվարի 16-ի N 20 գրությունը, որոշում է.*

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի նոյեմբերի 19-ի «Հայաստանի Հանրապետության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի ապրիլի 30-ի N Մ-262-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին («Մատենադարան» հիմնադրամ)» N Մ-823-Ա որոշման 1-ին կետի 8-րդ ենթակետում «6 500 000 դրամի չափով» բառերը փոխարինել «1 906 667 դրամի չափով» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ


Ո Ր Ո Շ ՈՒ Մ  
18 փետրվարի 2011 թվականի N Մ- 118 -Ա  
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-  
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ  
ՀՈՒՆԻՍԻ 4-Ի N Մ-335-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ  
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ («ՄԱՏԵՆԱՂԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հաշվի առնելով «Մատենադարան» հիմնադրամի տնօրենի 2011 թվականի փետրվարի 16-ի N 19 գրությունը, **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի հունիսի 4-ի «Հայաստանի Հանրապետության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի ապրիլի 30-ի N Մ-262-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին («Մատենադարան» հիմնադրամ)» N Մ-335-Ա որոշման 1-ին կետի 13-րդ ենթակետում «137 080 750 դրամի չափով» բառերը փոխարինել «110 000 000 դրամի չափով» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 փետրվարի 2011 թվականի N Մ - 119-Ա  
քաղ. երևան

ԲԱՑ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ  
ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ (ԲՀԻՀՀՄ)  
ԿՈՂՄԻՑ 2011-2012 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ  
ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ


Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի փետրվարի 15-ի N 3/3.8-1/1270-11, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2011 թվականի փետրվարի 8-ի N 01/14-3.2-64/607-11, Հայաստանի Հանրապետության փարաձջային կառավարման նախարարության 2011 թվականի փետրվարի 9-ի N 07/07.1/650-11, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2011 թվականի փետրվարի 8-ի N ՀՔ/22/693-11, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2011 թվականի փետրվարի 4-ի N ՖԲ/Մարտի-2/647-11, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2011 թվականի փետրվարի 9-ի N 03/07.2/949-11, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի փետրվարի 8-ի N ԱԱ/3-4/593-11 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Բարեգործական որակել Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղի (ԲՀԻՀՀՄ) կողմից 2011-2012 թթ. Իրականացվող՝ 2.009.070 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ ծրագիրը (կցվում է):

2. Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամին՝ մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկատվություն այդ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից կատարված աշխատանքների, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների


վերաբերյալ, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ծրագրի կատարման մասին ամփոփ տեղեկություններ:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:



Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղի գործադիր տնօրեն Լարիսա Մինասյանի կողմից



Բաց Հասարակության Ինստիտուտի Օժանդակության Հիմնադրամի հայկական մասնաճյուղի (ԲՀԻՕՀՀՄ) կողմից 2011թ. 12 րդ ամսի 20-ի հրավանագվող


Ծ Ր Ա Գ Ի Ր

1	<p><b>Ծրագրի նպատակը</b>          Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղի (ԲՀԻՕՀՀՄ) ծրագրի առաքելությունն է նպաստել Հայաստանում ժողովրդավարական ինստիտուտների կայացմանն ու ուժեղացմանը, խրախուսել հանդուրժողականության տարածմանը՝ քաղաքացիական հասարակության զարգացման միջոցով, տարածել բաց հասարակության արժեքները և աջակցել արդյունավետ կառավարմանը նպաստող քաղաքականության մշակմանն ու կիրառմանը հանրային կյանքի տարբեր ոլորտներում:</p> <p><u>ԲՀԻՕՀՀՄ-ն ունի հետևյալ ուղղությունները.</u> 1. Քաղաքացիական հասարակություն, 2. Հանրային առողջապահություն, 3. Տեղեկատվություն, 4. Բարձրագույն կրթություն, 5. Միջնակարգ կրթություն, 6. Իրավունք և քրեական արդարադատություն:</p> <p>ԲՀԻՕՀՀՄ-ի նպատակներն հետևյալներն են ըստ ուղղությունների.</p> <p><u>Քաղաքացիական հասարակություն</u></p> <ul style="list-style-type: none"> <li>- օժանդակել Հայաստանի քաղաքացիական հասարակության ինստիտուտների կայացմանը, ուժեղացնել հասարակական կազմակերպությունների կարողությունները՝ արդյունքում ունենալով հասարակության անապահով և խոցելի խավերի իրավունքների և շահերի պաշտպանության արդյունավետ մեխանիզմներ: Նպաստել Հայաստանի հասարակական կյանքի տարբեր ոլորտներում ի հայտ եկած խնդիրների շուրջ քաղաքականությունների մշակմանն ու դրանց շուրջ քննարկումների անցկացմանն՝ պետական, համարակալական, միջազգային կառույցների մասնակցությամբ: Նպաստել մարզային և քաղաքային մակարդակի վրա հանայնքի կառավարման գործընթացներում:</li> </ul>
---	--

	<p><u>Հանրային առողջապահություն</u></p> <ul style="list-style-type: none"> <li>- օժանդակել Հայաստանում պալիատիվ (ցավամոքիչ) բժշկության քաղաքականության մշակմանն ու ներդրմանը՝ ապահովելով համապատասխան մասնագիտական պատրաստվածություն: Նպաստել խոցելի խավերի առողջապահական իրավունքների պաշտպանությանը: Ստեղծել համապատասխան կրթական և մասնագիտական միջավայր՝ հանրային առողջապահության և մարդու իրավունքների պաշտպանության խնդիրները զուգահեռ քննարկելու համար:</li> </ul> <p><u>Տեղեկատվություն</u></p> <ul style="list-style-type: none"> <li>- սատարել առաջադեմ և բարենպաստ կրթական միջավայրի հաստատմանը, որը իրականացվում է նոր տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրմամբ և տարածմամբ կրթության, գիտության, գրադարանային բնագավառներում: Աջակցել տեղեկատվական տեխնոլոգիաների առավել մատչելի լինելուն հասարակական կառույցների համար՝ ստեղծելով հայալեզու ծրագրային միջավայրեր ու ինտերնետային ռեսուրսներ:</li> </ul> <p><u>Բարձրագույն կրթություն</u></p> <ul style="list-style-type: none"> <li>- աջակցել հայաստանյան բուհական համակարգի համապատասխանելիությանն եվրոպական չափանիշներին՝ օժանդակելով Բոլոնիայի շրջանակներում առավել արդյունավետ բարեփոխումների իրականացմանը: Նպաստել բուհական կրթության որակի մրցունակության ապահովմանը՝ միջազգային չափանիշներին համապատասխան:</li> </ul> <p><u>Միջնակարգ կրթություն</u></p> <ul style="list-style-type: none"> <li>- նպաստել միջնակարգ կրթության բնագավառում տեղի ունեցող բարեփոխումներին, դրանք դարձնելով առավել դյուրին և արդյունավետ՝ առարկայական չափորոշիչների և համապատասխան ուսումնական ծրագրերի և մյուսների մշակման միջոցով, ինչպես նաև բարձրացնել որակյալ կրթության մատչելիությունը հատուկ կարիքներ ունեցող երեխաների համար՝ ստեղծելով անհրաժեշտ պայմաններ նրանց ուսուցումը ապահովելու համար:</li> </ul> <p><u>Իրավունք և քրեական արդարադատություն</u></p> <ul style="list-style-type: none"> <li>- օժանդակել Հայաստանի կողմից արդարադատության ոլորտում ստանձնած բարեփոխումների իրականացմանը և դրանց մասին տեղեկատվությունը դարձնել մատչելի լայն հասարակության համար: աջակցել փակ և կիսափակ հաստատություններում պայմանների բարելավմանը և դրանք միջազգային չափանիշներին համապատասխանեցնելուն: նպաստել արդարադատության մատչելիության բարձրացմանը՝ աջակցելով փաստաբանական գործունեության առավել որակյալ դառնալուն:</li> </ul>
--	---

2.	<p><b>Ծրագրի բարեգործական որակման նպատակը</b>          Ակնկալվում է հարկային արտոնությունների ստացում՝ ապրանքների, սարքավորումների ներմուծման և ձեռքբերման դեպքում մաքսային վճարներից և ԱԱՀ-ից ազատում, հեռահաղորդակցման կապի ծառայությունների վարձավճարների ԱԱՀ-ից ազատում, տպագրական ծախսերի ԱԱՀ-ից ազատում, կոմֆերանսների կազմակերպման հետ կապված տարածքի վարձակալության և այլ ծառայությունների ԱԱՀ-ից ազատում:</p>
----	--

3.	<b>Բարեգործը</b> Ֆինանսավորումը կատարվում է Ջյուզի (Շվեյցարիա) Բաց հասարակության ինստիտուտի հիմնադրամի, ինչպես նաև ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության, Նիդերլանդների կառավարությունների կողմից՝ Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղին տրամադրած միջոցներով:														
4.	<b>Ծրագիրը կատարողը</b> Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղ Գործող հասցե՝ Թումանյան փողոց, 2-րդ փակուղի, տ. 7/1, Երևան 0002, հեռ. 533862, 536758 Իրավաբանական հասցե՝ Արամի 44 ՀՎՀՀ՝ 02535097														
5.	<b>Ծրագրի իրականացման վայրը և բնագավալը</b> Ծրագիրն իր բոլոր ուղղություններով իրագործվում է Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում՝ ներառյալ Երևանն ու հեռավոր մարզերը:														
6.	<b>Ծրագրի բյուջեն</b> ԲՀԻՕՀՀՄ-ի 2011 – 12թթ. ընդհանուր ծրագրի գումարը կազմում է 2,009,070 ԱՄՆ դոլար, որից ըստ ուղղությունների. <table border="1"> <tr> <td>1. Քաղաքացիական հասարակություն</td> <td>600,000 ԱՄՆ դոլար (300,000 ԱՄՆ դոլար 2011թ. և 300,000 ԱՄՆ դոլար 2012թ.)</td> </tr> <tr> <td>2. Հանրային առողջապահություն</td> <td>250,000 ԱՄՆ դոլար (125,000 ԱՄՆ դոլար 2011թ. և 125,000 ԱՄՆ դոլար 2012թ.)</td> </tr> <tr> <td>3. Տեղեկատվություն</td> <td>255,000 ԱՄՆ դոլար (130,000 ԱՄՆ դոլար 2011թ. և 125,000 ԱՄՆ դոլար 2012թ.)</td> </tr> <tr> <td>4. Բարձրագույն կրթություն</td> <td>200,000 ԱՄՆ դոլար (100,000 ԱՄՆ դոլար 2011թ. և 100,000 ԱՄՆ դոլար 2012թ.)</td> </tr> <tr> <td>5. Իրավաբանական և քրեական արդարադատություն</td> <td>260,000 ԱՄՆ դոլար (130,000 ԱՄՆ դոլար 2011թ. և 130,000 ԱՄՆ դոլար 2012թ.)</td> </tr> <tr> <td>6. Միջնակարգ կրթություն</td> <td>207,000 ԱՄՆ դոլար (106,000 ԱՄՆ դոլար 2011թ. և 101,000 ԱՄՆ դոլար 2012թ.)</td> </tr> <tr> <td>7. Կազմակերպչական ծախսեր</td> <td>237,070 ԱՄՆ դոլար (119,204 ԱՄՆ դոլար 2011թ. և 117,866 ԱՄՆ դոլար 2012թ.)</td> </tr> </table> <p>Ֆինանսավորումը կատարվում է Ջյուզի (Շվեյցարիա) Բաց հասարակության ինստիտուտի հիմնադրամի կողմից՝ Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղին տրամադրած միջոցներով՝ ծրագրի իրականացման ընթացքում (եռամսյակային կտրվածքով՝ միջինը 251,134 ԱՄՆ դոլար):</p>	1. Քաղաքացիական հասարակություն	600,000 ԱՄՆ դոլար (300,000 ԱՄՆ դոլար 2011թ. և 300,000 ԱՄՆ դոլար 2012թ.)	2. Հանրային առողջապահություն	250,000 ԱՄՆ դոլար (125,000 ԱՄՆ դոլար 2011թ. և 125,000 ԱՄՆ դոլար 2012թ.)	3. Տեղեկատվություն	255,000 ԱՄՆ դոլար (130,000 ԱՄՆ դոլար 2011թ. և 125,000 ԱՄՆ դոլար 2012թ.)	4. Բարձրագույն կրթություն	200,000 ԱՄՆ դոլար (100,000 ԱՄՆ դոլար 2011թ. և 100,000 ԱՄՆ դոլար 2012թ.)	5. Իրավաբանական և քրեական արդարադատություն	260,000 ԱՄՆ դոլար (130,000 ԱՄՆ դոլար 2011թ. և 130,000 ԱՄՆ դոլար 2012թ.)	6. Միջնակարգ կրթություն	207,000 ԱՄՆ դոլար (106,000 ԱՄՆ դոլար 2011թ. և 101,000 ԱՄՆ դոլար 2012թ.)	7. Կազմակերպչական ծախսեր	237,070 ԱՄՆ դոլար (119,204 ԱՄՆ դոլար 2011թ. և 117,866 ԱՄՆ դոլար 2012թ.)
1. Քաղաքացիական հասարակություն	600,000 ԱՄՆ դոլար (300,000 ԱՄՆ դոլար 2011թ. և 300,000 ԱՄՆ դոլար 2012թ.)														
2. Հանրային առողջապահություն	250,000 ԱՄՆ դոլար (125,000 ԱՄՆ դոլար 2011թ. և 125,000 ԱՄՆ դոլար 2012թ.)														
3. Տեղեկատվություն	255,000 ԱՄՆ դոլար (130,000 ԱՄՆ դոլար 2011թ. և 125,000 ԱՄՆ դոլար 2012թ.)														
4. Բարձրագույն կրթություն	200,000 ԱՄՆ դոլար (100,000 ԱՄՆ դոլար 2011թ. և 100,000 ԱՄՆ դոլար 2012թ.)														
5. Իրավաբանական և քրեական արդարադատություն	260,000 ԱՄՆ դոլար (130,000 ԱՄՆ դոլար 2011թ. և 130,000 ԱՄՆ դոլար 2012թ.)														
6. Միջնակարգ կրթություն	207,000 ԱՄՆ դոլար (106,000 ԱՄՆ դոլար 2011թ. և 101,000 ԱՄՆ դոլար 2012թ.)														
7. Կազմակերպչական ծախսեր	237,070 ԱՄՆ դոլար (119,204 ԱՄՆ դոլար 2011թ. և 117,866 ԱՄՆ դոլար 2012թ.)														
7.	<b>Բարեգործություն ստացողը</b>  «Քաղաքացիական հասարակություն» ուղղության շրջանակներում 2011թ. փետրվարի 1-ի դրությամբ արդեն հայտնի դրամաշնորհ ստացողները հետևյալ կազմակերպություններն են.														



<p>«Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա» հասարակական կազմակերպություն Գտնվելու վայրը՝ Սարյան 22, ք. Երևան 0002 ՀՎՀՀ՝ 01512224</p> <p>«Պետական կարիքների զոհերն ի պաշտպանություն ժողովրդավարության» հասարակական կազմակերպություն Գտնվելու վայրը՝ Մ. Խորենացի 27, բն. 46, ք. Երևան 0010 ՀՎՀՀ՝ 01239001</p> <p>«Ընդդեմ իրավական կամայականության» հասարակական կազմակերպություն Գտնվելու վայրը՝ Արշակունյաց 6, ք. Երևան 0023 ՀՎՀՀ՝ 01505856</p> <p>«Խոսքի ազատության պաշտպանության կոմիտե» հասարակական կազմակերպություն Գտնվելու վայրը՝ Մաշտոցի 13, սենյակ 7 ք. Երևան 0002 ՀՎՀՀ՝ 02565939</p> <p>«Ունիտոն» հասարակական կազմակերպություն Գտնվելու վայրը՝ Դեմիրճյան 36, ք. Երևան 0002 ՀՎՀՀ՝ 00072812</p> <p>«Համագործակցություն հանուն ժողովրդավարության» հասարակական կազմակերպություն Գտնվելու վայրը՝ Ա. Խաչատրյան 23, բն. 70, ք. Երևան ՀՎՀՀ՝ 00826651</p> <p>«Ա. Դ. Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոն» հասարակական կազմակերպություն Գտնվելու վայրը՝ Սարմեն 1, ք. Երևան 0009 ՀՎՀՀ՝ 02513655</p> <p>«Կանանց իրավունքների պաշտպանության կենտրոն» հասարակական կազմակերպություն Գտնվելու վայրը՝ Սպենդիարյան 3, բն. 14, ք. Երևան 0001 ՀՎՀՀ՝ 01516209</p> <p>«Սոցիալական աշխատանքի և սոցիոլոգիական հետազոտությունների «Վստահություն» կենտրոն» հասարակական կազմակերպություն Գտնվելու վայրը՝ Թումանյան 23, սենյակ 40-41, ք. Երևան 0002 ՀՎՀՀ՝ 02534885</p> <p>«Կանանց ռեսուրսային կենտրոն» հասարակական կազմակերպություն Գտնվելու վայրը՝ Զառուբյան փող., տ. 34, ք. Երևան ՀՎՀՀ՝ 02576934</p>	<p>Այս կազմակերպությունների ընտրությունը կատարվել է մրցույթների արդյունքում, իրենց կողմից ներկայացված ծրագրերի հիման վրա, որոնք հաստատվել են ԲՀԻՕՀՀՄ-ի Տնօրենների խորհրդի կողմից: 2011-12թթ. ընթացքում իրականացվող ծրագրի ստացողներ են համդիսանալու նաև մարդու իրավունքների և խոցելի</p>
--	--

խավերի շահերի պաշտպանության խնդիրներով զբաղվող այլ հասարակական կազմակերպություններ, ինչպես նաև ԲՈՒՅեր և դպրոցներ: Նրանց ընտրությունը կկատարվի հայտարարված բաց մրցույթների արդյունքում ներկայացրած հայտերի հիման վրա:

Մրցույթների չափանիշները միանման են ԲՀԻՕՀՅՍ-ի բոլոր ուղղությունների համար և ներկայացված են ստորև:

«Հանրային առողջապահություն» ուղղություն իր մեջ ունի մի քանի ենթաուղղություններ: Ստորև ներկայացվում են դրամաշնորհի ստացողներն ըստ ենթաուղղությունների.

ա) «Իրավունք և առողջապահություն» ծրագրի ուղղության դրամաշնորհի ստացողներից է «Հակաթմրամուլային քաղաքացիական դաշինք» հասարակական կազմակերպությունը  
Գտնվելու վայրը՝ Գայի պողոտա, շ. 1, բն. 38, ք. Երևան 0040  
ՀՎՀՀ՝ 00852968

Ծրագրի շրջանակներում դրամաշնորհի ստացողներ են հանդիսանում ԲՈՒՅերը, մարդու իրավունքների և խոցելի խավերի շահերի պաշտպանության և առողջապահական խնդիրներով զբաղվող, ինչպես նաև առողջապահական բնագավառում գործունեություն իրականացնող հասարակական կազմակերպությունները: Նրանց ընտրությունը կկատարվի հայտարարված մրցույթների արդյունքում:

բ) «Ամոքիչ (Պալիատիվ) խնամք» ծրագիր


Ծրագրի շրջանակներում նախատեսվում է աջակցություն պալիատիվ բժշկության ոլորտի քաղաքականության մշակմանն ու իրականացմանը, համապատասխան մասնագետների պատրաստմանը՝ հատուկ ուսումնական կենտրոնի ստեղծման միջոցով, ինչպես նաև այլ ոլորտի խնդիրների շուրջ պարբերական քննարկումների կազմակերպմանը: Ծրագիրն իրականացվում է ՀՀ Առողջապահության նախարարության հետ սերտ համագործակցությամբ:

Այս աշխատանքները կիրականացվեն «Հակացավային և պալիատիվ օգնության ասոցիացիա» հասարակական կազմակերպության կողմից, որի ընտրությունը կատարվել է կազմակերպության կողմից ներկայացրած ծրագրի հիման վրա և հաստատվել է տեղական Տնօրենների և Հանրային առողջապահություն ցանցային ծրագրի խորհուրդների կողմից: Ծրագիրը կիրականացվի նաև ինչպես ուղղակիորեն Հիմնադրամի, այնպես էլ պալիատիվ բժշկության բնագավառում գործունեություն իրականացնող պետական, հասարակական կազմակերպությունների և համապատասխան փորձագետների կողմից:

«Հակացավային և պալիատիվ օգնության ասոցիացիա» հասարակական կազմակերպություն  
Գտնվելու վայրը՝ Մ. Խորենացի 27, բն. 85, ք. Երևան 0010  
ՀՎՀՀ՝ 02571251

գ) «Հոգեկան առողջություն» ծրագիր

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է աջակցություն Հայաստանի Հանրապետության հոգեկան առողջության ոլորտի քաղաքականության մշակմանը և դրա շուրջ շահագրգիռ կողմերի միջև քննարկումների կազմակերպմանը, ինչպես նաև, անհրաժեշտության դեպքում, համապատասխան մասնագետների պատրաստմանը: Ծրագիրն իրականացվում է ՀՀ Առողջապահության նախարարության հետ խորհրդակցությունների և համագործակցության



տարբերակով:

Այս աշխատանքները կիրականացվեն տեղական և միջազգային համապատասխան փորձագետների ընդգրկմամբ և կհամակարգվեն Հիմնադրամի կողմից:

դ) «Երեխաների իրավունքների պաշտպանության և վերահսկման» ծրագիր

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է մշակել երեխաների իրավունքների պաշտպանության և վերահսկման առավել արդյունավետ մեխանիզմներ և նպաստել դրանց ներդրմանն ու կիրառմանը Հայաստանի ողջ տարածքում: Ծրագիրը իրականացվելու է «Սեյվ դը չիլդրեն Ֆեդերեյշնը, ինկ.» հայաստանյան գրասենյակի կողմից, որի ընտրությունը կատարվել է կազմակերպության կողմից ներկայացրած ծրագրի հիման վրա և հաստատվել է տեղական Տնօրենների և Հանրային առողջապահություն ցանցային ծրագրի խորհուրդների կողմից: Ծրագիրը համաֆինանսավորվում է Եվրոպական հանձնաժողովի կողմից:

«Սեյվ դը չիլդրեն Ֆեդերեյշնը, ինկ.» հայաստանյան գրասենյակ

Գտնվելու վայրը՝ Ազաթանգեղոսի 2ա, ք. Երևան 0023

ՀՎՀՀ՝ 01519077

«Տեղեկատվություն» ուղղության դրամաշնորհի ստացողներն են՝

«Հայաստանի գիտահետազոտական և կրթական կոմպյուտերային ցանցերի ասոցիացիա» հիմնադրամ (ԱԲՆԱ)

Գտնվելու վայրը՝ Պ. Սևակի 1, ք. Երևան

ՀՎՀՀ՝ 00848085

Երևանի մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտ

Գտնվելու վայրը՝ Գ. Հակոբյան 3, ք. Երևան 0033

ՀՎՀՀ՝ 00001672

Այս կազմակերպությունների ընտրությունը կատարվել է ներկայացված ծրագրերի հիման վրա և հաստատվել է տեղական տնօրենների խորհրդի կողմից:

Ծրագրի ստացողներ են հանդիսանում նաև տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում գործունեություն իրականացնող հասարակական կազմակերպություններ, կենտրոնական և մարզային գրադարաններ, դպրոցներ, ԲՈՒՅեր: Նրանց ընտրությունը կկատարվի հայտարարված բաց մրցույթների արդյունքում:

«Միջնակարգ և բարձրագույն կրթություն» ուղղության շրջանակներում դրամաշնորհի ստացողներն են՝

Երևանի խոսքի ծանր խանգարումներ ունեցող երեխաների թիվ 8 հատուկ դպրոց

Գտնվելու վայրը՝ Գ. Ներսիսյան 3, ք. Երևան

ՀՎՀՀ՝ 00008415

Երևանի լսողության խանգարումներ ունեցող երեխաների հատուկ կրթահամալիր

Գտնվելու վայրը՝ Նորքի այգիներ 193, ք. Երևան

ՀՎՀՀ՝ 01504672

Երևանի բժշկահոգեբանամանկավարժական գնահատման կենտրոն  
Գտնվելու վայրը՝ Քաջազնունի 12, ք. Երևան  
ՀՎՀՀ՝ 01518806

Գյումրու թիվ 1 կրթահամալիր  
Գտնվելու վայրը՝ Աճեմյան 40, ք. Գյումրի, Շիրակի մարզ  
ՀՎՀՀ՝ 05511191

Մեծամորի թիվ 1 միջնակարգ դպրոց  
Գտնվելու վայրը՝ ք. Մեծամոր, Արմավիրի մարզ  
ՀՎՀՀ՝ 04407966

Երևանի Ս. Կապուտիկյանի անվան թիվ 145 միջնակարգ դպրոց  
Գտնվելու վայրը՝ Ղոզմետի Էմինի 8, ք. Երևան 0033  
ՀՎՀՀ՝ 00031422

Սուրենավանի միջնակարգ դպրոց  
Գտնվելու վայրը՝ Դպրոցականների 1, գ. Սուրենավան, Արարատի մարզ  
ՀՎՀՀ՝ 06910137

Հրազդանի հաշատուր Աբովյանի անվան թիվ 1 միջնակարգ դպրոց  
Գտնվելու վայրը՝ Սպանդարյանի 10, ք. Հրազդան, Կոտայքի մարզ  
ՀՎՀՀ՝ 03006228

Երևանի թիվ 198 միջնակարգ դպրոց  
Գտնվելու վայրը՝ Նոր Նորքի 9-րդ զանգված, շ. 13/1, ք. Երևան  
ՀՎՀՀ՝ 00805688


«Կրթություն առանց սահմանների» հասարակական կազմակերպություն  
Գտնվելու վայրը՝ Տիգրան Մեծ նրբ., շ. 31, ք. Երևան  
ՀՎՀՀ՝ 00438507

Երևանի պետական համալսարան – կրթության քաղաքականություն և կրթության որակ ուղղություններում  
Գտնվելու վայրը՝ Ալեք Մանուկյան 1, ք. Երևան 0025  
ՀՎՀՀ՝ 01506928

Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան  
Գտնվելու վայրը՝ Տերյան 105, ք. Երևան 0009  
ՀՎՀՀ՝ 01504054

Վանաձորի Գ. Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ  
Գտնվելու վայրը՝ Տիգրան Մեծ 36, ք. Վանաձոր 377200, Լոռու մարզ  
ՀՎՀՀ՝ 06902542

Այս կազմակերպությունների ընտրությունը կատարվել է Հիմնադրամի կողմից հայտարարված մրցույթի շրջանակներում ներկայացված ծրագրերի հիման վրա՝ համաձայնվել է տեղական Տնօրենների խորհրդի և կրթության աջակցման



ցանցային ծրագրի խորհրդի կողմից:

Ծրագրի ստացողներ են հանդիսանում նաև ՀՀ միջնակարգ դպրոցները, ԲՈՒՀերը, այդ բնագավառում գործունեություն իրականացնող հասարակական կազմակերպությունները: Երևան ընտրությունը կկատարվի հայտարարված մրցույթների արդյունքում:

«Իրավունք և քրեական արդարադատություն» ուղղության շրջանակներում դրամաշնորհի ստացողներն են՝ «Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպությունը ՀՀ Արդարադատության նախարարության Հասարակական դիտորդների խմբի կողմից ներկայացված ծրագրի իրականացումը ապահովելու համար:

Գտնվելու վայրը՝ Տիգրան Մեծ 59, ք. Վանաձոր, Լոռու մարզ  
ՀՎՀՀ՝ 06926024

«Մանդատ» հասարակական կազմակերպություն  
Գտնվելու վայրը՝ Թումանյան 24, բն. 33ա, ք. Երևան 0002  
ՀՎՀՀ՝ 02709141

«Մարդու իրավունքների պաշտպանության երևանյան կենտրոն» հասարակական կազմակերպությունը՝ ՀՀ Ոստիկանության համակարգի Հասարակական դիտորդների խմբի կողմից ներկայացված ծրագրի իրականացումը ապահովելու համար:

Գտնվելու վայրը՝ Վարդաշեն 5-րդ փող. նրբ. 37 տուն, ք. Երևան  
ՀՎՀՀ՝ 00437374

«Հայաստանի մանկական ասոցիացիա» բարեգործական հասարակական կազմակերպությունը՝ ՀՀ կրթության նախարարության Հասարակական դիտորդների խմբի կողմից ներկայացված ծրագրի իրականացումը ապահովելու համար:

Գտնվելու վայրը՝ Տիգրան Մեծի 51, ք. Երևան  
ՀՎՀՀ՝ 02507911


Այս կազմակերպությունների ընտրությունը կատարվել է կազմակերպությունների կողմից ներկայացրած ծրագրերի հիման վրա և հաստատվել է տեղական Տնօրենների և Մարդու իրավունքների և դրամաշնորհների ղեկավարման ծրագրի, նստավայրը Բուդապեշտ, խորհրդի կողմից:

Ծրագրի շրջանակում դրամաշնորհի ստացողներն են հանդիսանում նաև իրավունքի խնդիրներով զբաղվող հասարակական կազմակերպություններ, անհատներ, որոնց ընտրությունը կկատարվի հայտարարված բաց մրցույթների և իրենց կողմից ներկայացված հայտերի գնահատման հիման վրա:

2011-12թթ. ԲՀԻՕՀՀՄ-ի դրամաշնորհի ստացող կազմակերպությունների ընտրությունը կկատարվի հայտարարված բաց մրցույթների արդյունքում, հետևյալ հիմնական չափանիշներով՝

ա) ծրագրի համապատասխանելիությունը Հիմնադրամի կամ հայտարարած մրցույթի պահանջներին ու նպատակներին,

	<p>բ) ծրագրի արդիականությունն ու իրատեսական լինելը,  գ) ներկայացված ծրագրի նպատակների, խնդիրների և դրանց իրականացման մեխանիզմների համապատասխանելիությունը և արդյունավետությունը,  դ) պահանջվող միջոցների համապատասխանությունը ներկայացված նպատակներին,  ե) ծրագիրը ներկայացրած կազմակերպության և ընդգրկված աշխատակազմի պատրաստվածությունը,  զ) ծրագիրը իրականացնելու ժամանակ համագործակցության առկայությունը այլ կազմակերպությունների հետ:</p>
8.	<p>Ծրագրի իրականացման տևողությունը  ԲՀԻՕՀՀՄ-ի ծրագիրը կիրականացվի 2 տարվա ժամկետում՝ 2011 թվականի հունվարի 1-ից մինչև 2012 թվականի դեկտեմբերի 31-ը:</p>
9.	<p>Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը</p> <p>2011-12թ. «Քաղաքացիական հասարակություն» ուղղությամբ իրականացվող դրամաշնորհային ծրագիրը նախատեսում է աջակցել հետևյալ նախաձեռնությանը.</p> <p>ա) 2011թ. մայիս և 2012թ. հունիս ամիսներին հայտարարվելու է մրցույթ՝ ուղղված Երևանում և մարզերում մարդու իրավունքների ոլորտում գործող երիտասարդ ՀԿ-ներին: Մրցույթի նպատակն է հետապնդել օժանդակելու հասարակական կազմակերպություններին՝ հզորացնելով և զարգացնելով իրենց իրավապաշտպան կարողությունները մարդու իրավունքների և խոցելի խմբերի շահերի պաշտպանության (advocacy) ոլորտում: Երկու տարվա ընթացքում դրամաշնորհի կարժամանակ մինչև 20 կազմակերպություն, իսկ մրցույթի բյուջեն կկազմի 200,000 ԱՄՆ դոլար (100,000 ԱՄՆ դոլար 2011թ. և 100,000 ԱՄՆ դոլար 2012թ.):</p> <p>բ) 2011-12թթ. շարունակվելու են իրականացվել հասարակական կյանքի տարբեր ոլորտներին առընչվող խնդիրների շուրջ քաղաքականությունների մշակմանն ուղղված նախաձեռնություններ: Երկու տարվա ընթացքում հայտարարվելու են մրցույթներ, որոնց շրջանակներում հնարավորություն է ստեղծվելու ներկայացնել Հայաստանի համար հրատապ հարցերի շուրջ հետազոտական աշխատանքներ իրականացնելու, մշակված փաստաթղթերը ներկայացնելու, ինչպես նաև դրանց շուրջ բանավեճեր և քննարկումներ կազմակերպելու ուղղված հայտեր: Մրցույթի արդյունքում դրամաշնորհների են արժանանալու հասարակական կազմակերպություններ, ԲՈՒՀեր, անհատ-փորձագետներ, այլ կազմակերպություններ: Երկու տարվա ընթացքում, ընդհանուր առմամբ, կտրամադրվի մինչև 25 դրամաշնորհ, իսկ մրցույթի բյուջեն կկազմի 100,000 ԱՄՆ դոլար (50,000 ԱՄՆ դոլար 2011թ. և 50,000 ԱՄՆ դոլար 2012թ.):</p> <p>գ) 2011-12թթ. քաղաքացիական հասարակության ծրագիրը շարունակելու է օժանդակել մարդու իրավունքների պաշտպանության առավել արդյունավետ իրականացմանը՝ տարբեր հասարակական կազմակերպությունների կարողությունները հզորացնելու ճանապարհով: Երկու տարվա ընթացքում, ընդհանուր առմամբ, կտրամադրվի մինչև 10 դրամաշնորհ, իսկ նախաձեռնության բյուջեն կկազմի 220,000 ԱՄՆ դոլար (110,000 ԱՄՆ դոլար 2011թ. և 110,000 ԱՄՆ դոլար 2012թ.):</p> <p>դ) 2011-12թթ. քաղաքացիական հասարակության ծրագիրը կշարունակի իր գործունեությունն ուղղված հասարակության խոցելի խմբերի շահերի պաշտպանությանը՝ նրանց խնդիրներին առընչվող տարբեր հարցերի շուրջ հանրային լայն քննարկումներ անցկացնելու ձևաչափով, որին մասնակից կլինեն և պետական, և հասարակական, և միջազգային կազմակերպությունների բոլոր հետաքրքրված անձիք: Այս քննարկումները կարևորվում են տարբեր խնդիրների լուծման</p>



<p>գործընթացներում ընդգրկված տարբեր կառույցների միջև կառուցողական բանավեճի ծավալմանն ու մտքերի փոխանակմանը: Երկու տարվա ժամանակահատվածում, այս նախաձեռնությունների շրջանակներում նախատեսվում է կազմակերպել մինչև 25 քննարկումներ, հանդիպումներ, կլոր-սեղաններ, բանավեճեր, տեղական և միջազգային փորձագետների մասնակցությամբ: Նախաձեռնության բյուջեն կազմում է 30,000 ԱՄՆ դոլար (15,000 ԱՄՆ դոլար 2011թ. և 15,000 ԱՄՆ դոլար 2012թ.):</p> <p>ե) 2011-2012թթ. քաղաքացիական հասարակության ծրագիրը կիրականացնի պիլոտային նախաձեռնություններ Հայաստանի մարզերում, ուղղված համայնքային բնակչության մասնակցային գործընթացների ակտիվացմանն իրենց համայնքի կյանքում: Երկու տարվա ընթացքում ընդհանուր առմամբ կտրամադրվի 2-3 դրամաշնորհ հասարակական կազմակերպություններին: Նախաձեռնության բյուջեն կազմում է 50,000 ԱՄՆ դոլար (25,000 ԱՄՆ դոլար 2011թ. և 25,000 ԱՄՆ դոլար 2012թ.):</p> <p>«Քաղաքացիական հասարակություն» ծրագրի ընդհանուր բյուջեն երկու տարվա համար կազմելու է 600,000 ԱՄՆ դոլար (300,000 ԱՄՆ դոլար 2011թ. և 300,000 ԱՄՆ դոլար 2012թ.):</p> <p>2011-2012թ.թ. «Հանրային առողջապահություն» ուղղությամբ իրականացվող դրամաշնորհային ծրագիրը նախատեսում է իրականացնել ծրագրեր, որոնք ուղղված կլինեն հանրային առողջապահության խնդիրների լուծմանը, առողջության և իրավունքի ոլորտների համադրությանը, խոցելի խավերի առողջապահական խնդիրների շուրջ շահերի պաշտպանությանը, այս ոլորտում գործունեություն իրականացնող քաղաքացիական հասարակության ներուժի զարգացմանը: Այս ուղղությունների շրջանակներում իրականացվելու են հետևյալ ենթաուղղությունները իրենց համապատասխան բյուջեներով.</p> <p>ա) «Իրավունք և առողջապահություն» և «Վնասի նվազեցման» ծրագրերի նպատակն է աջակցել խոցելի խավերի առողջապահական իրավունքների պաշտպանությանը և իրականացնել այդ խմբերի շահերի պաշտպանությանն ուղղված ծրագրեր: Ծրագրի շրջանակներում կատարվելու է մարդու առողջությանը վերաբերող օրենքների և օրենսդրական ակտերի վերլուծություն և մշակում, կատարվելու են իրավունքի և առողջապահության խնդիրներն արժարժող ուսուցողական ձեռնարկների մշակման, տպագրման ու տարածման աշխատանքներ, իրականացվելու են իրավունքի և առողջապահության ոլորտի մասնագետների կատարելագործման ծրագրեր: Երկու տարվա ընթացքում, ընդհանուր առմամբ, կտրամադրվի մինչև 8 դրամաշնորհ:</p> <p>«Իրավունք և առողջապահություն» և «Վնասի նվազեցման» ծրագրերի բյուջեն կազմում է 130,000 ԱՄՆ դոլար (65,000 ԱՄՆ դոլար 2011թ. և 65,000 ԱՄՆ դոլար 2012թ.):</p> <p>բ) «Ցավամոքիչ (պալիատիվ) խնամք» ծրագրի նպատակն է աջակցել այդ ոլորտի քաղաքականության իրականացմանը: անհրաժեշտ մասնագետների պատրաստման նպատակով ուսումնական կենտրոնի ստեղծմանը, քննարկումների կազմակերպմանը:</p> <p>Այս աշխատանքները կիրականացվեն ուղղակիորեն հիմնադրամի, պալիատիվ խնամքի բնագավառում գործունեություն իրականացնող հասարակական կազմակերպությունների և համապատասխան փորձագետների կողմից: Երկու տարվա ընթացքում, ընդհանուր առմամբ, կտրամադրվի մինչև 3 դրամաշնորհ:</p> <p>«Ցավամոքիչ խնամք» ծրագրի բյուջեն կազմում է 80,000 ԱՄՆ դոլար (40,000 ԱՄՆ դոլար 2011թ. և 40,000 ԱՄՆ դոլար</p>
---

2012թ.):

զ) «Հոգեկան առողջություն» ծրագրի նպատակն է աջակցել «Հոգեկան առողջություն» քաղաքականության մշակմանը, համապատասխան օրենսդրական առաջարկների մշակմանն ու այդ ոլորտի խնդիրների շուրջ լայն հանրային քննարկումների կազմակերպմանը:

Այս աշխատանքները կիրականացվեն ուղղակիորեն հիմնադրամի կողմից՝ համապատասխան տեղական և միջազգային փորձագետների ընդգրկվածությամբ:

«Հոգեկան առողջություն» ծրագրի երկու տարվա բյուջեն կազմում է 10,000 ԱՄՆ դոլար (5,000 ԱՄՆ դոլար 2011թ. և 5,000 ԱՄՆ դոլար 2012թ.):

դ) «Երեխաների իրավունքների վերահսկում» ծրագրի նպատակն է՝ երեխաների իրավունքների վերահսկում և պաշտպանություն:

Երեխաների իրավունքների վերահսկում» ծրագրի բյուջեն կազմում է 30,000 ԱՄՆ դոլար (15,000 ԱՄՆ դոլար 2011թ. և 15,000 ԱՄՆ դոլար 2012թ.):

«Հանրային առողջապահություն» ծրագրի ընդհանուր բյուջեն երկու տարվա համար կազմելու է 250,000 ԱՄՆ դոլար (125,000 ԱՄՆ դոլար 2011թ. և 125,000 ԱՄՆ դոլար 2012թ.):


2011-2012թ.թ. «Միջնակարգ կրթություն» ծրագրի ուղղությամբ իրականացվող դրամաշնորհային ծրագիրը նախատեսում է աջակցել հետևյալ նախաձեռնություններին.

ա) 2011թ. ապրիլ և 2012թ. մայիս ամիսներին հայտարարվելու է մրցույթ, որի նպատակն է ամրապնդել և ծրագրային նախկին փորձի հիման վրա ընդլայնել դպրոցների համայնքային կենտրոնների գործունեությունը «Եվրոպան դպրոցում» ակունքների միջոցով, որը կնպաստի դպրոցականների և համայնքի շրջանում քաղաքացիական նախաձեռնության և ժողովրդավարության մասին տեղեկացվածության բարձրացմանը, ինչպես նաև դպրոցի, համայնքի և տարբեր կառույցների միջև համագործակցության խորացմանը: Երկու տարվա ընթացքում, ընդհանուր առմամբ, կտրամադրվի մինչև 12-16 դրամաշնորհ, իսկ նախաձեռնության բյուջեն կկազմի 72,000 ԱՄՆ դոլար (36,000 ԱՄՆ դոլար 2011թ. և 36,000 ԱՄՆ դոլար 2012թ.):

բ) 2011 սեպտեմբեր և 2012թ. հոկտեմբեր ամիսներին հայտարարվելու է մրցույթ՝ ուղղված հատուկ կարիքներով երեխաների՝ հանրակրթական դպրոցներ ներառման ամրապնդմանը, ինչպես նաև լսողության, խոսքի և մտավոր խնդիրներ ունեցող երեխաների հետ աշխատող հատուկ դպրոցների որպես ռեսուրս կենտրոններ դառնալուն օժանդակությանը: Երկու տարվա ընթացքում, ընդհանուր առմամբ, կտրամադրվի մինչև 10 դրամաշնորհ, իսկ նախաձեռնության բյուջեն կկազմի 75,000 ԱՄՆ դոլար (45,000 ԱՄՆ դոլար 2011թ. և 30,000 ԱՄՆ դոլար 2012թ.):

գ) 2011թ. հուլիս - 2012թ. հոկտեմբեր ամիսներին կատարվելու է միջին և ավագ դպրոցների համար առարկայական չափորոշիչների փորձարկմանն ու բարելավմանն ուղղված նախաձեռնության աջակցությունը: Ծրագիրը նախատեսվում է իրականացնել «Կրթություն առանց սահմանների» կազմակերպության հետ: Երկու տարվա բյուջեն կազմելու է 60,000 ԱՄՆ դոլար (25,000 ԱՄՆ դոլար 2011թ. և 35,000 ԱՄՆ դոլար 2012թ.):

«Միջնակարգ կրթություն» ծրագրի ընդհանուր բյուջեն երկու տարվա համար կազմելու է 207,000 ԱՄՆ դոլար (106,000



ԱՄՆ դոլար 2011թ. և 101,000 ԱՄՆ դոլար 2012թ.):

2011-12թթ. «Բարձրագույն կրթություն» ուղղությամբ իրականացվող դրամաշնորհային ծրագիրը նախատեսում է հետևյալ միջոցառումները.

ա) 2011թ. և 2012թ. բարձրագույն կրթության որակի ապահովման ոլորտում կիրականացվի բազմակողմանի մոնիտորինգային ծրագիր, որի նպատակն է բացահայտել Բոլոնիայի գործընթացի ներքո իրականացվող բարձրագույն կրթության փոփոխությունների ազդեցությունը բուհական կրթության որակի վրա: Մոնիտորինգի արդյունքների հիման վրա կմշակվեն բարձրագույն կրթության քաղաքականությանն ուղղված առաջարկություններ: Ծրագրի բյուջեն կկազմի 40,000 ԱՄՆ դոլար (20,000 ԱՄՆ դոլար 2011թ. և 20,000 ԱՄՆ դոլար 2012թ.):

բ) 2011թ. ապրիլ-մայիս ամիսներին կսկսվի և 2012թ. կշարունակվի Հիմնադրամի «Տեղեկատվական» ծրագրի հետ համատեղ իրականացվող էլեկտրոնային բովանդակության ներդրման ծրագիրը: Մրա նպատակը կլինի ստեղծել ազատ օգտագործման կրթական ռեսուրսներ համալսարանների համար, որոնց հիմքում կլինեն էլեկտրոնային բովանդակությանը առարկայական ծրագրեր և իրենց բաղկացուցիչ տարրերը: Բարձրագույն կրթության աջակցության ծրագրի շրջանակներում կհայտարարվի մրցույթ՝ համալսարաններում ուսումնական ծրագրերի վերափոխման համար, որոնք հիմք կծառայեն էլեկտրոնային բովանդակության նախատիպ ստեղծել ԲՈՒՀ-երի համար: Երկու տարվա ընթացքում, ընդհանուր առմամբ, կտրամադրվի մինչև 3 դրամաշնորհ, իսկ նախաձեռնության բյուջեն կկազմի 60,000 ԱՄՆ դոլար (30,000 ԱՄՆ դոլար 2011թ. և 30,000 ԱՄՆ դոլար 2012թ.):

գ) 2011թ. և 2012թ. հետևողականորեն կշարունակվեն իրականացվել կրթության որակի բարձրացմանն ուղղված ծրագրեր, որոնք իրենց մեջ կպարունակեն հետևյալ բաղադրիչները. դասախոսների աջակցման ծրագիր, որի արդյունքում դրամաշնորհներ կտրվեն դասախոսների վերապատրաստման կենտրոններին ԲՈՒՀ-երում և կրթական ծրագրերի մշակման կամ վերամշակմանն արդեն իսկ եղած կամ նոր մասնագիտությունների համար: Ծրագիրը աջակցելու է ուսանողակներում ուսումնական ծրագրեր կազմելու և մատուցելու, դասավանդման նորարարական մեթոդներ և հմտություններ ձեռք բերելու ոլորտներում: Երկու տարվա ընթացքում, ընդհանուր առմամբ, 4-5 ԲՈՒՀ կստանա դրամաշնորհ, իսկ նախաձեռնության բյուջեն կկազմի 100,000 ԱՄՆ դոլար (50,000 ԱՄՆ դոլար 2011թ. և 50,000 ԱՄՆ դոլար 2012թ.):

«Բարձրագույն կրթություն» ծրագրի ընդհանուր բյուջեն երկու տարվա համար կազմելու է 200,000 ԱՄՆ դոլար (100,000 ԱՄՆ դոլար 2011թ. և 100,000 ԱՄՆ դոլար 2012թ.):


2011-2012թթ. «Տեղեկատվություն» ուղղությամբ իրականացվող դրամաշնորհային ծրագիրը շարունակելու է իր գործունեությունը՝ աջակցելով տեղեկատվական տեխնոլոգիաների առավել լայն կիրառմանը կրթության ոլորտում և հասարակական կազմակերպություններում, ինչպես նաև Ինտերնետի հայալեզու կայքերի զարգացմանը:

Նախատեսվում են հետևյալ միջոցառումները.

ա) 2011թ. և 2012թ. Տեղեկատվական ծրագիրը շարունակելու է իր գերակա ուղղությունների մեջ տեսնել համագործակցությունը կրթական ոլորտի հետ: Տեղեկատվական ծրագիրը աջակցություն է ցուցաբերելու ծրագրերի,




<p>որոնք ուղղված են լինելու տեղեկատվական տեխնոլոգիաների առավել ակտիվ կիրառմանը կրթական գործընթացներում: 2011թ. ապրիլ և 2012թ. հունիս ամիսներին հայտարարած մրցույթների միջոցով ընտրվելու են կամավերապահություններ, որոնք ստեղծելու են նոր տեղեկատվական պլատֆորմներ, ուղղված բուհական կրթությունը դարձնելու առավել համապատասխան ժամանակակից պահանջներին: Ծրագրի բյուջեն կկազմի երկու տարվա համար 145,000 ԱՄՆ դոլար (75,000 ԱՄՆ դոլար 2011թ. և 70,000 ԱՄՆ դոլար 2012թ.): Դրամաշնորհի կարծանանան 4-5 ԲՈՒՅեր և կազմակերպություններ:</p> <p>բ) 2011թ. փետրվար-մարտ և 2012թ. հունիս-հուլիս ամիսներին կկազմակերպվեն դասընթացներ հասարակական կազմակերպությունների համար արդյունավետ վեբ կայքերից օգտվելու նպատակով: Երկու տարվա ընթացքում, մրցույթի արդյունքում դրամաշնորհի կարծանանան 4-5 մասնագիտացված կազմակերպություն: Ծրագրի բյուջեն կկազմի 50,000 ԱՄՆ դոլար (25,000 ԱՄՆ դոլար 2011թ. և 25,000 ԱՄՆ դոլար 2012թ.):</p> <p>գ) 2011թ. սեպտեմբեր – 2012թ. հոկտեմբեր ամիսներին կհայտարարվի մրցույթ տարբեր ոլորտներում հայալեզու վեբ կայքերի ստեղծման, տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրման և օգտվելու դասընթացներ կազմակերպելու նպատակով: Երկու տարվա ընթացքում դրամաշնորհի կարծանանան 3-4 կազմակերպություններ: Ծրագրի բյուջեն կկազմի 60,000 ԱՄՆ դոլար (30,000 ԱՄՆ դոլար 2011թ. և 30,000 ԱՄՆ դոլար 2012թ.):</p> <p>«Տեղեկատվություն» ծրագրի ընդհանուր բյուջեն երկու տարվա համար կազմելու է 255,000 ԱՄՆ դոլար (130,000 ԱՄՆ դոլար 2011թ. և 125,000 ԱՄՆ դոլար 2012թ.):</p> <p>2011-12թթ. «Իրավաբանական և քրեական արդարադատություն» ուղղությամբ իրականացվող դրամաշնորհային ծրագիրը նախատեսվում է աջակցել հետևյալ միջոցառումներին.</p> <p>ա) 2011թ. և 2012թ. ամբողջ ծավալով կշարունակվի աջակցությունը ՀՀ Ոստիկանության կողմից ստեղծված «Հասարակական դիտորդական խմբին»: Խումբը իրականացնում է հասարակական վերահսկում ՀՀ Ոստիկանության համակարգում ձեռքարկված անձանց պահելու վայրերում: Խմբի անունից դրամաշնորհ ստացող կազմակերպությունն է «Մարդու իրավունքների պաշտպանության երևանյան կենտրոն» հասարակական կազմակերպությանը: Ծրագրի բյուջեն երկու տարվա համար կազմելու է 40,000 ԱՄՆ դոլար (20,000 ԱՄՆ դոլար 2011թ. և 20,000 ԱՄՆ դոլար 2012թ.):</p> <p>բ) 2011թ. և 2012թ. աշխատանքների ամբողջ ծավալով շարունակվելու է ՀՀ Արդարադատության նախարարության քրեակատարողական համակարգի գործունեության արդյունավետության բարձրացմանն ու փակ հաստատությունների պայմանների բարելավմանն ծրագիրը: Ծրագիրն իրականացվելու է Արդարադատության նախարարության կողմից ստեղծված «Հասարակական դիտորդական խմբի» կողմից: Ծրագրի շրջանակներում Խումբը իրականացնելու է հասարակական վերահսկում քրեակատարողական հիմնարկներում: Խմբի անունից դրամաշնորհ ստացող կազմակերպությունն է «Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպությանը: Ծրագրի բյուջեն երկու տարվա համար կազմելու է 40,000 ԱՄՆ դոլար (20,000 ԱՄՆ դոլար 2011թ. և 20,000 ԱՄՆ դոլար 2012թ.):</p> <p>գ) 2011թ. և 2012թ. «Իրավունք և քրեական արդարադատություն» ծրագրի շրջանակներում կաջակցի Հայաստանում օրենքի գերակայության և մարդու իրավունքների խնդիրներով զբաղվող հասարակական կազմակերպություններին՝ իրականացնելու մշտադիտարկումներ հանրային կյանքի տարբեր ոլորտներում՝ իրականացվող բարեփոխումների</p>
---



<p>նկատմամբ: Աջակցություն կստանան նաև ծրագրեր, որոնք ուղղված կլինեն հասարակության տեղեկացվածության բարձրացմանը մեր երկրում ընթացող տարբեր բարեփոխումների մասին: Երկու տարվա ընթացքում դրամաշնորհի կարծանանան 3-4 հասարակական կազմակերպություն: Ծրագրի երկու տարվա բյուջեն կազմելու է 60,000 ԱՄՆ դոլար (30,000 ԱՄՆ դոլար 2011թ. և 30,000 ԱՄՆ դոլար 2012թ.):</p> <p>դ) 2011թ. և 2012թ. «Իրավունք և քրեական արդարադատություն» ծրագիրը կշարունակի օժանդակել Կրթության և գիտության նախարարության կողմից ստեղծված Հասարակական մշտադիտարկման խմբին: Խումբը իրականացնում է մոնիտորինգային գործունեություն հատուկ կրթական հաստատությունների նկատմամբ: Ծրագրի բյուջեն երկու տարվա համար կկազմի 40,000 ԱՄՆ դոլար (20,000 ԱՄՆ դոլար 2011թ. և 20,000 ԱՄՆ դոլար 2012թ.): Խմբի անունից դրամաշնորհ ստացող կազմակերպությունն է Հայաստանի մանկական ասոցիացիան:</p> <p>ե) 2011թ. և 2012թ. շարունակվելու է «Իրավունք և քրեական արդարադատություն» ծրագրի շրջանակներում աջակցություն ցուցաբերել «Ռազմավարական դատավարություն» ծրագրին, որը իրականացվում է ԲՀԻՕՐՀՄ-ի կողմից: Ծրագիրը նպաստում է իրավաբանական և փաստաբանական մասնագիտությունների զարգացմանը Հայաստանում: Ծրագրի ընթացքում նախատեսվում է կազմակերպել վերապատրաստման դասընթացներ փաստաբանների համար՝ ընդգրկելով տվյալի և արտասահմանյան բարձրակարգ մասնագետների: Ծրագրի երկու տարվա բյուջեն կազմելու է 80,000 ԱՄՆ դոլար (40,000 ԱՄՆ դոլար 2011թ. և 40,000 ԱՄՆ դոլար 2012թ.):</p> <p>«Իրավաբանական և քրեական արդարադատություն» ծրագրի ընդհանուր բյուջեն երկու տարվա համար կազմելու է 260,000 ԱՄՆ դոլար (130,000 ԱՄՆ դոլար 2011թ. և 130,000 ԱՄՆ դոլար 2012թ.):</p>
<p>10. <b>Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը</b>      2011-12թթ նախատեսվում է սարքավորումների, ապրանքների, գրքերի, ամսագրերի, CD, DVD-ների ներմուծում և ձեռքբերում, հեռահաղորդակցման կապի ծառայությունների վարձավճարներից ԱՄՆ-ից ազատում, տպագրական ծախսերի ԱՄՆ-ից ազատում, գրասենյակային, ինչպես նաև կոնֆերանսների, սեմինարների կազմակերպման հետ կապված տարածքի վարձակալության և այլ ծառայությունների ԱՄՆ-ից ազատում: CD-ները, DVD-ները, գրքերը, ամսագրերը ծառայելու են ուսումնական, կրթական, մշակութային և գիտական նպատակների համար, տրամադրվելու են դպրոցներին, ԲՈՒՅ-երին, գրադարաններին, մշակութային և ստեղծագործական կազմակերպություններին, հասարակական կազմակերպություններին: Ընդհանուր արժեքը երկու տարվա համար կազմելու է 14,000 ԱՄՆ դոլար՝      - երկրի ներսում ձեռք բերվող ապրանքների և ծառայությունների, այն է՝ տպագրական ծախսերի, հեռահաղորդակցման կապի ծառայությունների վարձավճարների, համակարգիչների ծրագրային ապահովման, կոնֆերանսների, սեմինարների կազմակերպման հետ կապված տարածքի վարձակալման և այլ ծառայությունների ընդհանուր արժեքը կազմում է 5,000 ԱՄՆ դոլար;      - արտերկրից ներմուծվող համակարգիչների (թվով 10 հատ), հեռահաղորդակցման և այլ օժանդակ սարքավորումների (թվով 15 միավոր) ներմուծման և ձեռքբերման արժեքը կազմում է 8,000 ԱՄՆ դոլար      - արտերկրից ներմուծվող CD, DVD-ների, գրքերի և ամսագրերի ներմուծման և ձեռքբերման արժեքը կազմում է 1,000 ԱՄՆ դոլար:</p> <p>11. <b>Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը</b></p>


2011-12թթ. Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղի (ԲՀԻՕՅՅԱ) կողմից իրականացվող բոլոր ծրագրերի ընդհանուր կազմակերպչական ծախսերը (աշխատավարձ, տարածքի վարձակալում, սարքավորումների ձեռքբերում կամ ներմուծում, 2010-11թթ. ԲՀԻՕՅՅԱ-ի հաշվետվության տպագրում (4,000 ԱՄՆ դոլար, տպագիր և էլեկտրոնային ֆորմատով), գործուղման ծախսեր, թերթերի և ամսագրերի բաժանորդագրություն, էլեկտրաէներգիայի, գազի, ջրի վարձավճարներ, և այլ գրասենյակային ծախսեր) կազմում են 237,070 ԱՄՆ դոլար (119,204 ԱՄՆ դոլար 2011թ. և 117,866 ԱՄՆ դոլար 2012թ.), որը կազմում է ԲՀԻՕՅՅԱ-ի 2011-12թթ. ընդհանուր ծրագրային ծախսերի մոտ 11,8%: Ակնկալվում է միջազգային, տեղական, բջջային հեռախոսակապի ծախսեր մոտ 8,800 ԱՄՆ դոլար, որից 2,800 ԱՄՆ դոլարը միջազգային և տեղական հեռախոսակապի ծախսերն են, իսկ 2,000 ԱՄՆ դոլարը կազմում են բջջային հեռախոսակապի ծախսերը՝ կնքված են պայմանագրեր «Արմենտել» ԴՁ ՓԲԸ-ի հետ: Ինտերնետ կապի ապահովման համար կնքվել է պայմանագիր ԲՀԻՕՅՅԱ-ի և «Արմենիան Դեյթաքոմ Զանվին» ՓԲԸ-ի միջև՝ 4,000 ԱՄՆ դոլար գումարի: Ակնկալվում է համակարգչային սարքավորումների՝ սերվեր, համակարգիչներ, մոնիտորներ, ամֆափան սնուցման սարքեր, տպիչ, պատճենահանման մեքենա, այլ ցանցային սարքավորումներ և ծրագրային ապահովման ձեռքբերում ԲՀԻՕՅՅԱ-ի գրասենյակի համար՝ 16,000 ԱՄՆ դոլար ընդհանուր արժողության: Մատակարար կազմակերպությունը և երկիրը, որտեղից կներմուծվեն կամ կձեռքբերվեն սարքավորումները պարզ կդառնա հայտարարված մրցույթի արդյունքում:

12. Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ  
 ԲՀԻՕՅՅԱ-ի ծրագրի իրականացման շրջանակներում նախատեսվում է համագործակցություն՝  
 ԴՅ Ազգային ժողովի հետ՝ մի շարք օրենքների մշակման և ընդունման հարցերում, մասնավորապես Կրթության, գիտության, մշակույթի և երիտասարդության հարցերի, Պետաիրավական հարցերի և նաև Առողջապահության հարցերի մշտական հանձնաժողովների հետ:  
 ԴՅ Արտաքին գործերի նախարարության հետ՝ Եվրոպական հարևանության քաղաքականության և Արևելյան գործընկերության ծրագրերի շրջանակներում մասնակցային գործընթացի ապահովման ուղղությամբ:  
 ԴՅ Առողջապահության նախարարության հետ, կնքված փոխընթացի հուշագրի շրջանակներում, նախատեսվում է միջոցառումներ պալիատիվ խնամքի և հոգեկան առողջության քաղաքականության մշակման նպատակով, վնասի նվազեցման ծրագրի շրջանակներում նախատեսվում է համագործակցություն թմրամիջոցներ օգտագործողների այլընտրանքային բուժման նպատակով, հակաժխտատային ծրագրի շրջանակներում նախատեսվում են հետազոտական աշխատանքներ և գործող օրենքի իրականացմանը նպաստող միջոցառումներ, հետազոտական կրթական առողջապահական ծրագրերի շրջանակներում նախատեսվում է առողջապահական ոլորտի մասնագետների հետազոտական կրթություն և վերապատրաստում, ինչպես նաև ապագա բժիշկների և պրակտիկ բժիշկների համար իրավունքի և առողջապահության խնդիրների վերաբերյալ դասընթացների կազմակերպման ու անցկացման գործում, նաև պացիենտների և բժիշկների իրավունքների պաշտպանության և խնդիրների իրազեկման հարցերի շուրջ:  
 Աշխատանքի և սոցիալական ապահովության նախարարության հետ նախատեսվում է համագործակցություն հոգեկան առողջության ծրագրի շրջանակներում՝ հաշմանդամների ցուցակների տրամադրման և հաշմանդամների սոցիալական և ընտանեկան պայմանների բարելավման ուղղությամբ տարվող աշխատանքների բնագավառում: Այս նախարարության հետ հաստատվել է ներս համագործակցություն նաև կանանց դեմ բռնության վերաբերյալ օրենքի



մշակման և հետագա կյանքի կոչելու գործընթացում:  
 ԴՅ Արդարադատության նախարարության հետ՝ Պատահականության ոլորտի բարեփոխումների, ինչպես նաև ԱՄՆ-ն կողմից ստեղծված քրեակատորդական հիմնադրամի նկատմամբ հասարակական վերահսկման խմբի գործունեության աջակցության շրջանակներում:  
 ԴՅ Կրթության և գիտության նախարարության և Կրթության ազգային ինստիտուտի հետ կնքված է փոխընթացի հուշագիր՝ օժանդակելու Հայաստանի Հանրապետությունում ԲՀԻՕՅՅԱ-ի կողմից իրականացվող «Բարձրագույն կրթության աջակցության» և միջնակարգ կրթության ծրագրերին, որոնք ծառայում են Հայաստանի կրթական համակարգի արդյունավետ զարգացմանը, օգնում են Հայաստանի կրթության կարիքների գնահատմանը և առկա խնդիրների նկատմամբ նոր մոտեցումների մշակմանը: ԲՀԻՕՅՅԱ-ն «Բարձրագույն կրթության աջակցության» ծրագրի շրջանակներում մրցույթային սկզբունքով համագործակցում է ԲՈՒՅ-երի և կրթության ոլորտում աշխատող հասարակական կազմակերպությունների հետ: Վերջիններիս շնորհիվ գրանաշնորհների շրջանակներում իրականացվում են ծրագրեր, որոնք ուղղված են Հայաստանի բարձրագույն կրթության ոլորտում ԴՅ Կրթության և գիտության նախարարության կողմից բարեփոխումների իրականացման ու աջակցելուն:  
 Կրթության և գիտության նախարարության և Կրթության ազգային ինստիտուտի, ինչպես նաև դոնոր կազմակերպությունների հետ համատեղ իրականացվում է միջնակարգ դպրոցի համար առարկայական չափորոշիչների, նոր ուսումնական ծրագրերի, օժանդակ նյութերի և էլեկտրոնային դասագրքերի ստեղծում, դրանց փորձարկում ու տարածումը Հայաստանի միջնակարգ դպրոցներում և դրանց կիրառման նպատակով ուսուցիչների վերապատրաստում:  
 Կրթության և գիտության, ինչպես նաև Աշխատանքի և սոցիալական ապահովության նախարարությունների հետ ձեռք բերված համաձայնության հիման վրա, ԲՀԻՕՅՅԱ-ն օժանդակում է հատուկ կրթության և կիսափակ հաստատություններում հասարակական վերահսկում իրականացնող խմբի աշխատանքներին:  
 ԲՀԻՕՅՅԱ-ն համագործակցելու է ԴՅ Գիտությունների Ազգային ակադեմիայի հետ՝ իրականացնելով ծրագրեր ուղղված տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրմանը կրթության և գիտության ոլորտում:  
 ԴՅ Ռեստիլանության հետ՝ վնասի նվազեցման ծրագրի շրջանակներում նախատեսվում են մի շարք միջոցառումներ՝ ուստիկանների այցելություններ արտերկրներ՝ փորձի փոխանակման նպատակով, սեմինարների մասնակցություն ՄԻԱՎՁԻԱԿ-ի կանխարգելման նպատակով՝ խոցելի խմբերի շրջանում, ինչպես նաև Հասարակական դիտորդական խմբի գործունեության աջակցման ծրագրում:  
 World Vision-ի և Global Fund-ի հետ՝ ԲՀԻՕՅՅԱ-ն հանդիսանում է ԴՅ-ում ՄԻԱՎՁԻԱԿ-ի կանխարգելմանն ուղղված միջոցառումների համակարգող հանձնաժողովի անդամ:  
 ՄԱԿ-ի Զարգացման ծրագրերի հետ՝ ԲՀԻՕՅՅԱ-ն հանդիսանում է ԴՅ-ում ՄԻԱՎՁԻԱԿ-ի կանխարգելմանն ուղղված միջոցառումների աշխատանքային խմբի անդամ: ՄԱԿ-ի Զարգացման ծրագրերի հետ համատեղ արդեն մի քանի տարի է օժանդակություն է ցուցաբերվում Հայաստանում նոր տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման ոլորտին՝ հնարավորություն ընձեռնելով Հայաստանի դպրոցներին, ԲՈՒՅ-երին, գրադարաններին, գիտակրթական այլ հաստատություններին ունենալու մատչելի և բարձր որակի Ինտերնետային հաղորդակցման կապ:  
 ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության հետ՝ ԲՀԻՕՅՅԱ-ն հանդիսանում է գործընկեր առաջիկա 5տարիներում նպաստել մարդու իրավունքների և ժողովրդավարության զարգացմանը Հայաստանում:  
 ԵԱԿԿ երևանյան գրասենյակի և ԺՄԻԳ-ի գրասենյակի հետ համատեղ իրականացվում են մի շարք ծրագրեր, որոնք

	<p>ուղղված են Հայաստանում մարդու իրավունքների և շահերի պաշտպանությանն և այդ ոլորտում միջազգային նորմերի ներդրմանն ու կիրառմանը:</p> <p>Եվրոպական հանձնաժողովի հետ համատեղ, ԲՀԻՕՀՀՄ-ն աջակցում է Հայաստանում երեխաների իրավունքների պաշտպանության արդյունավետ մեխանիզմների ստեղծմանն ու ներդրմանը:</p> <p>Նորվեգական Կառավարության հետ՝ իրավաբանական և փաստաբանական գործունեության արդյունավետության բարձրացման շրջանակներում:</p> <p>Նիդեռլանդների Կառավարության հետ՝ մարդու իրավունքների պաշտպանության հարցերով զբաղվող հասարակական կազմակերպությունների կարողությունների զարգացման ուղղությամբ:</p>
13.	<p>Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը</p> <ul style="list-style-type: none"> <li>- ԲՀԻՕՀՀՄ-ի ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողությունը իրականացվում է հետևյալ մարմինների կողմից՝ ա) յուրաքանչյուր տրամադրված դրամաշնորհի ֆինանսական միջոցների և ծրագրի իրականացման վերահսկումը դրամաշնորհների ղեկավարի և ծրագրի պատասխանատուի, բ) ԲՀԻՕՀՀՄ-ի գործադիր տնօրենի, գ) Տնօրենների խորհրդի, դ) ցանցային զլխամասային (Նյու Յորք, Բուդապեշտ, Լոնդոն) գրասենյակների: Վերահսկման եղանակներն են.</li> <li>- Բաց հասարակության ինստիտուտի զլխամասային ցանցային գրասենյակին (Նյու Յորք) և Բաց հասարակության ինստիտուտի կենտրոնացված ֆինանսա-վարչական միավորին (Բուդապեշտ) ամսեկան ֆինանսական հաշվետվությունների, ինչպես նաև տարեկան հաշվետվությունների տրամադրում;</li> <li>- Բաց հասարակության ինստիտուտի ցանցային աուդիտորական բաժանմունքի և տարածաշրջանային ֆինանսական տնօրենի կողմից իրականացվում է ամենամյա ներքին աուդիտ;</li> <li>- Բաց հասարակության ինստիտուտի ցանցային աուդիտորական բաժանմունքի պատվերով իրականացվում է ԲՀԻՕՀՀՄ-ի տարեկան ֆինանսական հաշվետվությունների անկախ աուդիտ (2000թ.-ից այն իրականացվում է KPMG-ի կողմից);</li> <li>- ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին ներկայացնել եռամսյակային և տարեկան հաշվետվություններ՝ համաձայն ընդունված կարգի;</li> <li>- Եռամսյա տեղեկատվական պարբերականի հրատարակում և տարածում</li> <li>- Ամենամյա տարեկան հաշվետվության տպագրում և տարածում:</li> </ul>



Handwritten mark or signature.



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**28 փետրվարի 2011 թվականի N Մ- 120 -Ա**

**(Ուրոշումն ընդունվել է 2011 թվականի փետրվարի 18-ի նիստին)**

**«ՍԵՅՎ ԴԸ ՉԻԼԴԻԵՆ ՖԵԴԵՐԵՅՇՆ, ԻՆԿ.» ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ  
ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ  
«ՆԱԽԱՁԵՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՈՒՆ ԵՐԵՒԱՅԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԵՎ  
ԿՐԹՈՒԹՅԱՆ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի փետրվարի 3-ի N 3/3.8-1/857-11, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2011 փետրվարի 7-ի N 565-11, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության 2011 փետրվարի 25-ի N 07/07.1/1047-11, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2011 թվականի փետրվարի 3-ի N ՀԲ/22/553-11, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2011 թվականի փետրվարի 3-ի N 03/07.2/796-11, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի փետրվարի 8-ի N ԱԱ/3-4/594-11, Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2011 թվականի փետրվարի 3-ի N 01/10.1/248-11, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2011 թվականի փետրվարի 2-ի N 02/08.1/274-11 և Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2011 թվականի փետրվարի 7-ի N 01/15/349-11 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Բարեգործական որակել «Սեյվ դը չիլդրեն ֆեդերեյշն, ԻՆԿ.» կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Աջաթանգեղոսի 2ա, ՀՎՀՀ՝ 01519077) իրականացվող 164075390 դրամ արժողությամբ «Նախաձեռնություն հանուն երեխայի առողջության և կրթության» ծրագիրը (կցվում է):


2 «Սեյվ դը չիլդրեն ֆեդերեյշն, ԻՆԿ.» կազմակերպության հայաստանյան մասնաճյուղին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի

պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին», Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել հաշվետվություն այդ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում կենտրոնի կողմից, ինչպես նաև կենտրոնին մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, Հայաստանի Հանրապետության Արագածոտնի, Արմավիրի և Գեղարքունիքի մարզպետներին:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

«Սեյվ դը չիլդրեն ֆեդերեյշն, ինկ.» կազմակերպության  
Հայաստանի մասնաճյուղի տնօրեն՝ Ի. Սաղոյանի կողմից



09-ը փետրվարի 2011 թ.

**«Նախաձեռնությունը Հանուն Երեխայի Առողջության և Բարեկեցության» ծրագիր**

1	Ծրագրի նպատակը	Առավելագույնս նպաստել Հայաստանի երեխաների կրթությանը և ունակությունների զարգացմանը: Ուղղակիորեն խնդիրները երկուսն են. 1. Նպաստել երեխաների մասնակցությանը վաղ մանկության զարգացման որակյալ ծրագրերում և 2. Բարելավել դպրոցական առողջության և սննդի հիմնական ծառայությունները և նրանց կիրառելիությունը:
2	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային և մաքսային արտոնություններից:
3	Բարեգործը	«Սեյվ դը չիլդրեն» Շվեյցարիա Save the Children Switzerland, Scheuchzerstrasse 64, 8006 Zurich
4	Ծրագրի կատարողը	«Սեյվ դը Չիլդրեն ֆեդերեյշն ինկ.» կազմակերպության Հայաստանյան մասնաճյուղ Հասցեն՝ Երևան, Ագաթանգեղոսի 2ա, ՀՎՀՀ 01519077
5	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Վայրը՝ ՀՀ, Արմավիրի, Արագածոտնի և Գեղարքունիքի մարզի ընտրված համայնքներ: Բնագավառը՝ նախադպրոցական կրթություն, դպրոցական առողջության, սննդի և վաղ մանկության զարգացում:
6	Ծրագրի բյուջեն	164,075,390 դրամ (կամ 443,447 ԱՄՆ դոլար՝ հաշված 370 փոխարժեքով)

2/16

7	Բարեգործություն ստացողը	Բարեգործության ստացողներ են հանդիսանում Արմավիրի, Արագածոտնի և Գեղարքունիքի մարզերի 12 գյուղական համայնքներ, մասնավորապես տեղի 0-6 տարեկան երեխաները, նրանց ծնողները, դպրոցների աշակերտները և անձնակազմը: Ցուրաքանչյուր մարզում կընտրվեն չորս առավել կարիքավոր համայնքներ, որտեղ չկան գործող մանկապարտեզներ, դպրոցներում խստաբացակայում են կամ առկա են վատթար սանիտարական պայմաններ, հաշվի կառնվեն նաև նախադպրոցական տարիքի երեխաների թիվը, համայնքների հեռավորությունը և պետական աջակցության ծրագրերի առկայությունը: Գյուղերի ընտրությունը կիրականացվի յուրաքանչյուր տարվա առաջին երկու ամիսների ընթացքում:
8	Ծրագրի իրականացման տևողությունը	2011 թվականի հունվարի 1-ից մինչև 2013 թվականի դեկտեմբերի 31-ը:
9	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Ծրագիրը կիրականացվի ամեն տարի մեկ մարզում, երեք տարիների ընթացքում ընդգրկելով երեք մարզ: Ծրագրի հիմնական նպատակներին հասնելու համար նախատեսվում է վերանորոգել և կահավորել նախադպրոցական դասընթացների համար նախատեսված դասասենյակ, յուրաքանչյուր դպրոցում վերանորոգել 2 գույքարաններ, ապահովելով մշտական ջուր և սանիտարական պայմաններ, մշակել և տպագրել կրթական նյութեր, ինչպես նաև կազմակերպել տարբեր անվճար դասընթացներ շահառուների համար (5-6 տարեկան երեխաների համար նախադպրոցական դասընթացներ, երեխաների զարգացման վերաբերյալ ծնողական կրթություն, դպրոցական առողջության և սննդի, ինչպես նաև առողջ ապրելակերպի զարգացման վերաբերյալ երեխաների կրթում և դպրոցների աշխատակազմի վերապատրաստում): Ընդամենը պլանավորվում է իրականացնել հետևյալ ծախսերը.

2/16

Եռամսյակ	Կրթ. նյութերի մշակում և տպագրություն (հազ. դրամ)	ԱՐՄԱՎԻՐԻ մարզ					Ընդամենը ըստ եռամսյակի (հազ. դրամ)
		Ծրագրային աշխատակազմի աշխատավարձեր (հազ. դրամ)	Վերապատ. րաստման և կրթական ղարկթացների կազմակերպում (հազ. դրամ)	Նախագծային փաստաթղթերի կազմում և վերանորոգման աշխատանքներ (հազ. դրամ)	Կահույքի ձեռքբերում և տրամադրում (հազ. դրամ)	Գործուղման ծախսեր (հազ. դրամ)	
I - 2011		4,968.4			2,018.0	188.5	7,174.9
II - 2011	568.7	4,968.4	1,255.1	18,161.6		659.8	25,613.6
III - 2011	568.7	4,968.4	1,255.1		2,319.2	659.8	9,771.2
IV - 2011		4,968.4	1,255.0			377.1	6,600.5
Ընդամենը	1,137.4	19,873.6	3,765.2	20,179.6	2,319.2	1,885.2	49,160.2

Եռամսյակ	Ծրագրային աշխատակազմի աշխատավարձեր (հազ. դրամ)	Վերապատ. րաստման և կրթական ղարկթացների կազմակերպում (հազ. դրամ)	Նախագծային փաստաթղթերի կազմում և վերանորոգման աշխատանքներ (հազ. դրամ)	Կահույքի ձեռքբերում և տրամադրում (հազ. դրամ)	Գործուղման ծախսեր (հազ. դրամ)	Ընդամենը ըստ եռամսյակի (հազ. դրամ)
II - 2012	4,968.4		1,255.1	18,161.6		25,044.9
III - 2012	4,968.4		1,255.1		2,319.2	9,202.5
IV - 2012	4,968.4		1,255.0		377.1	6,600.5
Ընդամենը	19,873.6		3,765.2	20,179.6	2,319.2	48,022.8

2/16 3

Եռամսյակ	Ծրագրային աշխատակազմի աշխատավարձեր (հազ. դրամ)	Վերապատ. րաստման և կրթական ղարկթացների կազմակերպում (հազ. դրամ)	Նախագծային փաստաթղթերի կազմում և վերանորոգման աշխատանքներ (հազ. դրամ)	Կահույքի ձեռքբերում և տրամադրում (հազ. դրամ)	Գործուղման ծախսեր (հազ. դրամ)	Ընդամենը ըստ եռամսյակի (հազ. դրամ)
II - 2013	4,968.4		1,255.1	18,161.6		25,044.9
III - 2013	4,968.4		1,255.1		2,319.2	9,202.5
IV - 2013	4,968.4		1,255.0		377.1	6,600.5
Ընդամենը	19,873.6		3,765.2	20,179.6	2,319.2	48,022.8

10	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	<ul style="list-style-type: none"> <li>Շինարարական նյութերի ձեռքբերում և ծառայությունների մատուցում - 60,538,800 դր.,</li> <li>Կահույքի և պարագաների ձեռքբերում - 6,957,600 դր.,</li> <li>Ծրագրային աշխատակազմի աշխատավարձեր (ներառյալ ծրագրի ղեկավար, շինարարության համակարգող, մոնիտորինգի և գնահատման պատասխանատու, հասարակայնության հետ կապերի պատասխանատու, վերապատրաստումների և զարգացման պատասխանատու) - 59,620,800 դր.,</li> <li>Վերապատրաստման և կրթական ղարկթացների կազմակերպում - 11,295,600 դր.,</li> <li>Կրթական նյութերի մշակման և տպագրության ծառայությունների մատուցում - 1,137,400 դր.,</li> <li>Գործուղման և տրանսպորտային ծախսեր (գործուղումներ վերապատրաստման նպատակով, փոխադրման ծառայությունների մատուցում) - 5,655,600 դր.</li> </ul>
11	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը	<ul style="list-style-type: none"> <li>Սպասարկող աշխատակազմի աշխատավարձեր - 11,476,500 դր.</li> <li>Օպերացիոն ծախսեր - 5,173,090 դր., ներառում է գրասենյակի վարձը, կոմունիկացիոն ծախսեր, գրենական պիտույքներ, սարքավորումների սպասարկման ծախսեր, բանկային ծախսեր,</li> <li>Աուդիտի ծախսեր - 2,220,000 դր.</li> </ul>

2/16 4

12	<p>Չամազործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ</p>	<p>Ծրագրի իրականացման ընթացքում «Սեյվ դը չիլդրեն» կազմակերպությունը կհամագործակցի ՀՀ Կրթության և գիտության, Տարածքային կառավարման և Առողջապահության նախարարությունների, ինչպես նաև ընտրված համայնքների գյուղապետարանների և տեղի դպրոցների հետ:</p>
13	<p>Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը</p>	<p>Ծրագրի կատարման նկատմամբ վերահսկողությունն իրականացվում է «Սեյվ դը չիլդրեն ֆեդերեյշն, ինկ.» կազմակերպության, նշված նախարարությունների և տեղական ինքնակառավարման մարմինների համապատասխան ծառայությունների կողմից և ընդգրկում է հետևյալ գործողությունները.</p> <ul style="list-style-type: none"> <li>• Շինարարական վերահսկողություն;</li> <li>• Ֆինանսական վերահսկողություն/ մոնիթորինգ;</li> <li>• Աղմինիստրատիվ վերահսկողություն;</li> <li>• Սահմանված կարգով հաշվետվություններ են ներկայացվում ՀՀ Կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին:</li> </ul>



2/16

U



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 փետրվարի 2011 թվականի N Մ- 121 -Ա

(Որոշումն ընդունվել է 2011 թվականի փետրվարի 18-ի նիստին)

քաղ. Երևան

«ՍԵՅՎ ԴԸ ՉԻԼԴՐԵՆ ՖԵԴԵՐԵՅՇՆ, ԻՆԿ.» ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ  
ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՎԱՂ  
ՄԱՆԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի փետրվարի 3-ի N 3/3.8-1/860-11, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2011 թվականի փետրվարի 4-ի N 524-11, Հայաստանի Հանրապետության տրանսպորտի կառավարման նախարարության 2011 փետրվարի 25-ի N 07/07.1/1048-11, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2011 թվականի փետրվարի 4-ի N 03/07.2/795-11, Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի փետրվարի 8-ի N ԱԱ/3-4/598-11, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2011 թվականի փետրվարի 3-ի N 101/104.3.2/466 և Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի 2011 թվականի փետրվարի 7-ի N 01/19.2/305-11 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Բարեգործական որակել «Սեյվ դը չիլդրեն ֆեդերեյշն, Ինկ.» կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Ագաթանգեղոսի 2ա, ՀՎՀՀ՝ 01519077) իրականացվող՝ 121666545 դրամ արժողությամբ «Վաղ մանկության զարգացում» ծրագիրը (կցվում է):


2 «Սեյվ դը չիլդրեն ֆեդերեյշն, Ինկ.» կազմակերպության հայաստանյան մասնաճյուղին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի

մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել հաշվետվություն այդ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում կենտրոնի կողմից, ինչպես նաև կենտրոնին մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության տրանսպորտի կառավարման նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, Հայաստանի Հանրապետության Լառու և Տավուշի մարզպետներին:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ




«Սեյվ դը չիլդրեն ֆեդերեյշն, ինկ.» կազմակերպության  
Հայաստանի մասնաճյուղի տնօրեն՝ Ի. Սաղոյանի կողմից



*Caar*

09-ը փետրվարի 2011 թ.



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԱԿԱՆ ԵՐԵՒՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ

1	Ծրագրի նպատակը	Մասնակցել կազմակերպության զարգացման որակյալ ծառայությունների հասանելիությունը մինչև 6 տարեկան երեխաներին և նրանց պատրաստվածությունը դպրոցին:
2	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային և մաքսային շահույթներից:
3	Բարեգործը	«Լինսի հիմնադրամ», The Lincy Foundation, 150 South Rodeo Drive, Suite 250, Beverly Hills, California 90212, USA
4	Ծրագրի կատարողը	«Սեյվ դը Չիլդրեն ֆեդերեյշն ինկ.» կազմակերպության Հայաստանյան մասնաճյուղ Հասցեն՝ Երևան, Ազաթանգեղոսի 2ա, ՀՎՀՀ 01519077
5	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Վայրը՝ ՀՀ, Լոռու մարզի Սպիտակ, Վանաձոր և Տավուշի մարզի Դիլիջան համայնքներ: Բնագավառը՝ նախադպրոցական կրթություն և վաղ մանկություն զարգացում:
6	Ծրագրի բյուջեն («Լինսի հիմնադրամ»-ի մասով)	121,666,545 դրամ (կամ 333,333 ԱՄՆ դոլար՝ հաշված 365 փոխարժեքով)

*2/17*

7	Բարեգործություն ստացողը	Բարեգործության ստացողներ են հանդիսանում Սպիտակ, Վանաձոր և Դիլիջան համայնքները, նշված քաղաքների 0-6 տարեկան երեխաները, ընտրված մանկապարտեզներն ու դրանց անձնակազմը: Մասնավորապես ընտրվել են Սպիտակի թիվ 1, Վանաձորի թիվ 2 և Դիլիջանի թիվ 12 մանկապարտեզները, որոնք ունեն գործող նորմերին համապատասխան սեյմոգինվածության մակարդակ, ունեն վերանորոգման կարիք և երեխաների ամենաբարձր հաճախելիություն: Վերջիններս հանդիսանում են շահույթ չհետապնդող կազմակերպություններ և գտնվում են քաղաքապետարանների ենթակայության տակ:																																																	
8	Ծրագրի իրականացման տևողությունը	2011 թվականի հունվարի 1-ից մինչև 2012 թվականի մարտի 31-ը:																																																	
9	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	<p>Ծրագրի հիմնական նպատակին հասնելու համար նախատեսվում է իրականացնել թվով 3 մանկապարտեզների վերանորոգում և կահավորում, ինչպես նաև կազմակերպել անվճար դասընթացներ շահառուների համար (5-6 տարեկան երեխաների համար նախադպրոցական դասընթացներ, երեխաների զարգացման վերաբերյալ ծնողական կրթություն, մանկապարտեզների աշխատակազմի վերապատրաստում):</p> <p>Ընդամենը ըստ եռամսյակների պլանավորվում է իրականացնել հետևյալ ծախսերը.</p> <table border="1"> <thead> <tr> <th>Եռամսյակ</th> <th>Ծրագրային աշխատակազմի աշխատավարձը (դրամ)</th> <th>Վերապատրաստման և կրթական դասընթացների կազմակերպում (դրամ)</th> <th>Նախագծային փաստաթղթերի կազմում և վերանորոգման աշխ. (դրամ)</th> <th>Մանկապարտեզների կահավորում (դրամ)</th> <th>Գործուվան ծախսեր (դրամ)</th> <th>Ընդամենը ըստ եռամսյակի (դրամ)</th> </tr> </thead> <tbody> <tr> <td>I - 2011</td> <td>5,686.9</td> <td></td> <td>3,695.6</td> <td></td> <td>370.7</td> <td>9,753.2</td> </tr> <tr> <td>II - 2011</td> <td>5,686.9</td> <td></td> <td>22,173.8</td> <td></td> <td>370.7</td> <td>28,231.4</td> </tr> <tr> <td>III - 2011</td> <td>5,686.9</td> <td>730.0</td> <td>25,869.3</td> <td></td> <td>370.7</td> <td>32,656.9</td> </tr> <tr> <td>IV - 2011</td> <td>5,686.9</td> <td>730.0</td> <td>22,173.8</td> <td>2,737.5</td> <td>988.6</td> <td>32,316.8</td> </tr> <tr> <td>I - 2012</td> <td>5,686.9</td> <td></td> <td></td> <td>2,737.5</td> <td>370.7</td> <td>8,795.1</td> </tr> <tr> <td>ԸՆԴԱՄԵՆԸ</td> <td>28,434.5</td> <td>1,460.0</td> <td>73,912.5</td> <td>5,475.0</td> <td>2,471.4</td> <td>111,753.4</td> </tr> </tbody> </table>	Եռամսյակ	Ծրագրային աշխատակազմի աշխատավարձը (դրամ)	Վերապատրաստման և կրթական դասընթացների կազմակերպում (դրամ)	Նախագծային փաստաթղթերի կազմում և վերանորոգման աշխ. (դրամ)	Մանկապարտեզների կահավորում (դրամ)	Գործուվան ծախսեր (դրամ)	Ընդամենը ըստ եռամսյակի (դրամ)	I - 2011	5,686.9		3,695.6		370.7	9,753.2	II - 2011	5,686.9		22,173.8		370.7	28,231.4	III - 2011	5,686.9	730.0	25,869.3		370.7	32,656.9	IV - 2011	5,686.9	730.0	22,173.8	2,737.5	988.6	32,316.8	I - 2012	5,686.9			2,737.5	370.7	8,795.1	ԸՆԴԱՄԵՆԸ	28,434.5	1,460.0	73,912.5	5,475.0	2,471.4	111,753.4
Եռամսյակ	Ծրագրային աշխատակազմի աշխատավարձը (դրամ)	Վերապատրաստման և կրթական դասընթացների կազմակերպում (դրամ)	Նախագծային փաստաթղթերի կազմում և վերանորոգման աշխ. (դրամ)	Մանկապարտեզների կահավորում (դրամ)	Գործուվան ծախսեր (դրամ)	Ընդամենը ըստ եռամսյակի (դրամ)																																													
I - 2011	5,686.9		3,695.6		370.7	9,753.2																																													
II - 2011	5,686.9		22,173.8		370.7	28,231.4																																													
III - 2011	5,686.9	730.0	25,869.3		370.7	32,656.9																																													
IV - 2011	5,686.9	730.0	22,173.8	2,737.5	988.6	32,316.8																																													
I - 2012	5,686.9			2,737.5	370.7	8,795.1																																													
ԸՆԴԱՄԵՆԸ	28,434.5	1,460.0	73,912.5	5,475.0	2,471.4	111,753.4																																													

*2/17*

10	Չեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	<ul style="list-style-type: none"> <li>• Շինարարական նյութերի ձեռքբերում և ծառայությունների մատուցում - 73,912,500 դր.,</li> <li>• Կահույքի և պարագաների ձեռքբերում - 5,475,000 դր.,</li> <li>• Ծրագրային աշխատակազմի աշխատավարձը (ներառյալ ծրագրի ղեկավար, ծրագրի պատասխանատու, շինարարության համակարգող, մոնիտորինգի և գնահատման պատասխանատու, հասարակայնության հետ կապերի պատասխանատու, գնումների պատասխանատու) - 28,434,500 դր.</li> <li>• Վերապատրաստման և կրթական դասընթացների կազմակերպում - 1,460,000 դր.</li> <li>• Գործուղման և տրանսպորտային ծախսեր (գործուղումներ վերապատրաստման նպատակով, փոխադրման ծառայությունների մատուցում) - 2,471,400 դր.</li> </ul>
11	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը	<ul style="list-style-type: none"> <li>• Սպասարկող աշխատակազմի աշխատավարձը - 7,689,200 դր.</li> <li>• Օպերացիոն ծախսեր - 2,223,945 դր., ներառում է գրասենյակի վարձը, կոմունիկացիոն ծախսեր, գրենական պիտույքներ, սարքավորումների սպասարկման ծախսեր, բանկային ծախսեր:</li> </ul>
12	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Ծրագրի իրականացման ընթացքում ՓԵ-ն կհամագործակցի ՀՀ Տարածքային կառավարման և Կրթության և գիտության նախարարությունների, Սպիտակի, Վանաձորի և Դիլիջանի քաղաքապետարանների և տեղի մանկապարտեզների հետ:
13	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	<p>Ծրագրի կատարման նկատմամբ վերահսկողությունն իրականացվում է «Մեյվ դը չիլդրեն ֆեդերեյշն, ինկ.» կազմակերպության, նշված նախարարությունների և տեղական ինքնակառավարման մարմինների համապատասխան ծառայությունների կողմից և ընդգրկում է հետևյալ գործողությունները.</p> <ul style="list-style-type: none"> <li>• Շինարարական վերահսկողություն;</li> <li>• Ֆինանսական մոնիթորինգ;</li> <li>• Ադմինիստրատիվ վերահսկողություն;</li> <li>• Սահմանված կարգով հաշվետվություններ են ներկայացվում ՀՀ Կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին:</li> </ul>

2/12

